

ՀՅՈՒՄՈՍԱՅԻՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

Հ Յ Ո Ւ Ս Ի Ս Ա Փ Ա Յ Լ

ԳԻՏԱԿԱՆ ՀԱՆԴԵՍ

1 (7)

2021

ԵՐԵՎԱՆ

ՀՅՈՒՄՈՍԱՅԻՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ

2021

***Հրատարակության է երաշխավորել Հյուսիսային համալսարանի
գիտական խորհուրդը***

Խմբագրական խորհուրդ

Գլխավոր խմբագիր՝ **Արմեն Ճուղուրյան**, տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր, տնտեսագիտության և կառավարման ամբիոնի վարիչ, Հյուսիսային համալսարան

Խմբագրական խորհրդի անդամներ

Լուսինե Ֆլյան, բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, ուսումնահետազոտական և միջազգայնացման գծով պրոռեկտոր, Հյուսիսային համալսարան

Գայանե Հակոբյան, բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ, Հյուսիսային համալսարանի լրատվության և հասարակայնության հետ կապերի ուսումնապրակտիկ կենտրոնի ղեկավար

Արթուր Ղամբարյան, իրավագիտության դոկտոր, պրոֆեսոր, պետության և իրավունքի տեսության ու պատմության ամբիոնի վարիչ, Ռուս-հայկական (Սլավոնական) համալսարան

Վալերի Սիրգոյան, փիլիսոփայական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան

Պիթեր Կոստա, բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, Սլավոնական լեզուների ամբիոնի վարիչ, Պոցդամի համալսարան Գերմանիա

Ռադովան Ստոյանովիչ, էլեկտրական ճարտարագիտության և համակարգչային գիտությունների դոկտոր, էլեկտրական ճարտարագիտության ֆակուլտետի պրոֆեսոր, Մոնտենեգրոյի համալսարան

Վիտալիյ Կոպնով, տեխնիկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, ռեկտորի խորհրդական, Ռուսական պետական մասնագիտական-մանկավարժական համալսարան, Ռուսաստանի Դաշնություն

Գոհար Պետրոսյան, իրավագիտության դոկտոր, դոցենտ «Միջազգային հանցագործություն և արդարադատություն» մագիստրոսական ծրագրի ղեկավար, Նյու-Յուրք Սիթի համալսարան ԱՄՆ

ЮСИСАПАЙЛ

(Северное сияние)

НАУЧНЫЙ ЖУРНАЛ СЕВЕРНОГО УНИВЕРСИТЕТА

1 (7) 2021

Редакционная коллегия

Главный редактор – **Армен Джугурян**, доктор экономических наук, профессор, заведующий кафедрой экономики и менеджмента, Северный университет

Лусине Флджян, доктор филологических наук, профессор, проректор по учебно-исследовательской работе и интернационализации, Северный университет

Гаяне Акопян, кандидат филологических наук, доцент, руководитель учебно-практического центра по связям с общественностью и СМИ, Северный университет

Артур Гамбарян, доктор юридических наук, профессор, заведующий кафедрой теории и истории государства и права, Российско-армянский (славянский) университет

Валерий Мирзоян, доктор философии, профессор, Армянский государственный экономический университет

Питер Коста – доктор филологических наук, профессор, заведующий кафедрой славянских языков, Поцдамский университет, Германия

Радован Стоянович, доктор инженерных и компьютерных наук, профессор факультета электрической инженерии, Университет Черногории, Черногория

Виталий Копнов, доктор технических наук, профессор, советник ректора, Российский государственный профессионально-педагогический университет, Россия

Гоар Петросян, доктор юриспруденции, доцент, директор магистерской программы “Международная преступность и правосудие”, Городской университет Нью-Йорка, Университет, США

HYUSISAPAYL

(Northern Lights)

SCIENTIFIC JOURNAL OF NORTHERN UNIVERSITY

1 (7) 2021

Editorial Board

Chief Editor` **Armen Tshughuryan**, Doctor of Sciences in Economics, Professor, Head of the Chair on Economic and Management, Northern University

Members of the Editorial Board

Lusine Fljyan, Doctor of Sciences in Philology, Professor, Vice-Rector for Education, Research and Internationalization, Northern University

Gayane Hakobyan, PhD in Philology, Associate Professor, Gayane Hakobyan, PhD in Philology, Associate Professor Head of Media and Public Relations Training Centre, Northern University

Artur Ghambaryan, Doctor in Law, Professor, Head of the Department of Theory and History of State and Law, Russian-Armenian (Slavonic) University

Valeriy Mirzoyan, Doctor of Philosophy, Professor, Armenian State Economical University

Peter Kosta, Professor Doctor phil. habil, Head of the Chair of Slavic languages, Potsdam University, Germany **Vitaliy Kopnov**, Doctor of Technical Sciences, Professor, Advisor to Rector, Russian State Professional Pedagogical University, Russia

Gohar Petrossian, PhD in Law, Associate Professor, Director of International Crime and Justice MA Program, City University of New York, USA

Radovan Stojanović, Doctor in Electrical Engineering and Computer Sciences, Professor at the Faculty of Electrical Engineering, University of Montenegro, Montenegro

ԱՎԵՏԻՔ ԻՍԱՀԱԿՅԱՆԸ ԱԶՍԱԳՐԱԿԱՆ ՊԱՅՔԱՐԻ ԳՈՎԵՐԳՈՒ

Նունե Մկրտչյան
բանասիրական գիտությունների թեկնածու, Հյուսիսային
համալսարան
nunemkrtchyan.69@mail.ru

Ավետիք Իսահակյանի ստեղծագործությունների գեղանկար բազմակերպության մեջ առավել աչքի է ընկնում ազատագրական պայքարի հոգին: Վարպետը հենվել է այն խոյակին, որի մեջ գտել է հարազատ ժողովրդի բազմադարյան ողբերգությունն ու հերոսական պատմությունը, ճանաչել և ներկայացրել է հայի զարմանալի կենսունակության թաքնված խորհուրդը:

Հայաստանի մեծ երգչի հունձքը հայ ստեղծագործ ժողովրդի պրպտող ու անպարտելի հզոր ոգու փայլն էր ճառագում. այն երգ է Հայաստանի անցյալի, ներկայի և ապագայի մասին:

Մեր ուսումնասիրության արդիականությունը առավել քան ակնառու է. ցանկացել ենք ներկայացնել Վարպետի ազգային-ազատագրական մտորումները, պայքարի ոգին: Ավ. Իսահակյանը բազմիցս իր ստեղծագործություններում դիտարկում էր, որ Հայաստանը ՀԱՅ-ի հայրենիքն է և բնույթով ու էությամբ պիտի հայկական լինի՝ ծառայելով միմիայն հայության շահերին: Նման երկրում է, որ ազգային կեցակարգով հնարավոր է վերականգնել ու պահպանել համամարդկային անաղարտ արժեքները, մայրենի լեզուն: Վարպետը մեծ ոգևորությամբ նշում է. «Հայ ժողովուրդը ստեղծել է հոյակապ դասական լեզու, աննման էին դիցազնավեպերը Հայկի, Արամի, Արայի և Արտաշեսի մասին, ստեղծել է միջին դարերի հերոսական դիցազնավեպը Սասունցի Դավիթի և նրա որդու Մհերի մասին, ...որոնց մեջ մարմնացել է հայրենիքի հաղթության, նրա ազատության և աշխարհի վերակառուցման տենչանքը»:¹

Բազմակողմանի և մեծահարուստ ժողովրդական ստեղծագործության մեջ մարմնացած են եղել հայ ժողովրդի բնավորության լավագույն գծերը՝ հաղթանակելու անընկճելի կամքը և գործելու կորովը. «Դարերի ընթացքում արվեստի այս հրաշակերտները, ժողովրդի ստեղծագործությունները եղել են մեր պայքարի անխորտակելի զենքերը»:²

Վարպետի ազատագրական ոգու դրսևորումների բացահայտման համար կիրառել ենք վերլուծական և գրականագիտական մեկնության մեթոդները, որոնք հնարավորություն են ընձեռել մեզ բացահայտել բազմաթիվ գրականագիտական երևույթներ, որոնք մինչ այժմ

¹ «Արև» օրաթերթ, Կահիրե, 1943թ., թիվ 7330, էջ 2-3:

² Նույն տեղում:

խորությամբ ուսումնասիրված չեն եղել: Հեղինակի խոսքի և տեսակետի յուրահատկությունները, գրական կերպարների ինքնատիպությունը՝ միահյուսվելով իրար, դարձնում են Իսահակյանի ստեղծագործություններն ինքնատիպ, իսկ նրա կողմից առաջ քաշված թեմաները՝ իր ժամանակի համար արդիական և օրինաչափ: Նա արդար հպարտությամբ նշում է իր մարտնչող, հերոսացող և հավերժացող ժողովրդի գավակ լինելը: «Ես ծնվել եմ Հայաստանի Շիրակ գավառում: Այստեղ մանկական հասակիս իմ երևակայությունը թելաուրել են դարերի խորքից եկող բանաստեղծական ֆուկլորը, աշուղների և գյուղացիների երգերը, մեր անցյալ ազնվական հուշարձանները: Ջերմագին սիրել եմ մեր ճարտարարուեստի կոթողները, թեն կիսավեր, սակայն կանգուն, ոտքի վրա մեռնող քաջ զինվորի պես»:³

XIX դարավերջին և XX դարասկիզբը հայ ժողովրդի պատմության ամենադաժան ու արյունոտ ժամանակաշրջանն էր. «...Դարասկզբի հայ իրականության մեջ երևի թե չլինի մեկը, որ Ավ. Իսահակյանի չափ, Իսահակյանի մոլեգնությամբ ծառացած լինի ազգային հույսերի և արյան վրա վաճառականություն անող եվրոպական դիվանագետների, կեղծ բարեպաշտների, «հայրենասիրական» արցունքներով հարցը փակուղիների առաջ դրած մարդկանց դեմ, – գրում է գրականագետ Ս. Աղաբաբյանը»:⁴

Իր ապրած բարդ ու հարափոփոխ ժամանակաշրջանում ուշագրավ են գրողի դիտարկումները Հայաստան երկրի քաղաքական փոթորկահույզ իրադարձությունների մասին: «Իմ մայրս ինձ ուսուցանել է սիրել աշխատավոր մարդկությունը, ներշնչել է սեր դեպի հայրենի երկիրը....Ժողովրդավարությունը և քաղաքացիական գիտակցությունը: Համաշխարհային առաջավոր և ռուսական գրականությունը կրթել են ինձ հումանիստական գաղափարներով, իսկ ընդհատակի ռուս գրքերը ոգևորել են ինձ հեղափոխական պայքարով, անձնվիրաբար կռվել բռնության և շահագործման դեմ՝ աշխատավոր ժողովրդի ազատագրման համար»:⁵

Ավ. Իսահակյանի ստեղծագործությունների բազմակողմանի, իրատես ուսումնասիրությունը, նույն և բազմօրինակ ընկալում – մեկնությունները հիմք են տալիս ներկայացնելու Իսահակյանի այն համոզմունքը, որ հայ մարդը XX դ. մարտահրավերներին, համաշխարհային քաղաքական զարգացումներին չի կարող պատասխանել զուտ ազգային հենքի վրա զարգացող միաչափ վերաբերմունքով: «Հսկայական փոփոխություններ առաջ եկան....այս դեպքերը զարգացան

³ «Արև» օրաթերթ, Կահիրե, 1943թ., թիվ 7330, էջ 2-3:

⁴ Աղաբաբյան Ս., XX դարի գրականության գուգահեռներում, Գիրք 1, Երևան, 1983, էջ 64:

⁵ «Արև» օրաթերթ, Կահիրե, 1943թ., թիվ 7330, էջ 2-3:

բոլորովին հակառակ մեր տրամադրությանց՝ արտաքին իրողությունների թելադրությամբ:

Մենք անգոր եղանք ուղղություն տալ նրանց: Այս նշանակում է, թե ներքուստ մենք պատրաստ չէինք դեպքերի իմաստը հասկանալու, զանոնք մեր քաղաքական ձգտումներին համընթաց դարձնելու»:⁶

Իսահակյան մարդը և քաղաքացին՝ ազգային հենքով և եվրոպական կրթությամբ, խստորեն դատապարտել է «մարդկասեր» Եվրոպային և մեծ հիասթափությունն է ապրել «գարշելի մարդատեացություն և հակահումանիստական կրքեր ամեն տեղ: Այնքան խորապես ազդված էի ես Հայ երգից և ճարտարապետությունից, որ, ուր գնում էի, Հայաստանը կրում էի իմ սրտում: Նեպոլում լսում էի ես երգերը իմ հեռավոր հայրենիքի: Նայում էի չքնաղ Պարթենոնին, տեսնում էի գեղեցիկ Անին միայն»:⁷

Ժողովրդի տառապանքներով, հույսերով ու երազանքներով ապրող Ավ. Իսահակյանը բազմիցս դատապարտել է դիվանագիտական խարդավանքների թնջուկը, մեծ տերությունների ստոր ու երեսպաշտ դավերը հայ ժողովրդի նկատմամբ: Մտորում է Վարպետը՝ ինչու է այսօր Եվրոպան «քաղաքակիրթ», «լուսավոր» և «մարդկասեր» հռչակվում, ինչու մի թե նրա համար, որ այդ գունազարդ փետրավորած հատկությունները նա առաջ է տանում անգույն քաղաքակրթության երկաթե մագիլների և ճիրանների մեջ: Էլ ինչ «մարդասեր», երբ նա չի ծառայում ընդհանուր, լայն մարդասիրական գաղափարներին, բարոյական ազատությամբ տանջվող մարդկության վշտերը և թշվառությունները չի ամոքում, թեև դրա համար մեծ ձեռնահասություն ունի, սակայն նրան պակասում են մարդասիրական բարի կամք, բարի զգացմունք և բարի ցանկություն: Գրողը 1916 թ. գրառումներից մեկում արձանագրում է. «Հայոց բոլոր արյունի մեղքը եվրոպացիների խղճի վրա է ծանրացած...: Այս պատերազմը... ցույց տվեց, որ բոլորն էլ բորենիներ են, խաբողներ, փոքր ազգերի դահիճներ, և ամենքի դրոշակը հյուսված է կեղծիքներից, խոստումներից, խորամանկություններից և մեծ գաղափարների (եղբայրություն, քաղաքակրթություն, ազգերի ազատություն, իրավունք, արդարություն) անուններից»:⁸

Ավ. Իսահակյանն իր ազգային-քաղաքական անհանգիստ մտորումներն է ներկայացնում: Զարմանում է գրողը՝ ուր է կյանքի քուրայում մտքի ու սրտի կրթության և խղճի դաստիարակության սահմաններում իրավահավասարության, եղբայրասիրության և անձնական կատարելության բարձր գաղափարների մարմնացումն ու իրականացումը: Ամոթ է

⁶ Նժդեհ Գ., Հատընտիր, Երևան, 2000, էջ 114:

⁷ «Արև» օրաթերթ, Կահիրե, 1943թ., թիվ 7330, էջ 2-3:

⁸ Իսահակյան Ավ., Հիշատակարան, Երևան, 1977, էջ 318– 319:

Ժամանակակից Եվրոպային «մարդասեր» համարելը, նա ոչինչ չարեց հայերիս համար՝ որպես սուլթանական բռնակալ լծի տակ, թշվառության ծովում մի ճնշված, հեծեծող ազգի: Իսահակյանը գտնում է՝ մի ազգ, որ գեղեցիկ ձգտումն ունի իր անձեռնմխելի իրավունքները պաշտպանելու և գաղափարական քայլերն ուղղելու դեպի ազատագրական ոսկեճաճանչ արշավույթ, միթե խրախուսանքի և քաջալերության արժանի չէ: Այդ ժամանակահատվածում Եվրոպան հայկական հարցի շուրջ ցույց տվեց շատ տմարդի վարմունք: Իր քաղաքականությամբ, իր քաղաքակրթությամբ և լուսավորությամբ հանդերձ՝ նա մեր արդար դատի պաշտպանության հարցում քաղաքավարի դավաճան հանդիսացավ ամբողջ գիտակից-հասկացող աշխարհի առաջ:

Դատապարտելով եվրոպացիների բարոյական վարքագիծը՝ Ավ. Իսահակյանը 1921 թ. «Մայիսի 27, Վենետիկ» գրառման մեջ արձանագրում է, որ Եվրոպան իր սեփական սոցիալ-քաղաքական շահերի համար «բորենի Թուրքիային հռչակելով տվեց մի ժողովուրդ, որը ցեղակից է եվրոպացուն և հավատակից է եվրոպացուն... հիմա այդ Եվրոպան թուրքին գրկում է, համբուրում, ճաշեր տալիս, մամուլը գոլում է, փառաբանում...»⁹

Ազգային գրողը շեշտում է. «Մեզանից հիմա օգուտ չունեն. ունենին, երբ նեղն էին, պատերազմ կար, խոստումների շրջան էր, որ կռվեին հայերը, որ ջարդվեին... իսկ հենց որ պատերազմը վերջացավ... մեզնից ի՞նչ շահ. քանդված երկիր, ավեր, սով, ջարդված, մերկ ժողովուրդ... Լիրբ Ֆրանսիա. գնաց զինաթափ արեց հայերին, կամավորներին և զինեց քյուրդերին, թյուրքին...»¹⁰

Ու եթե Միամանթոն մարդկության դավանած ոճրագործ օրենքների դեմ ըմբոստացած, բողոքում էր՝ «Ո՛վ մարդկային արդարություն, թող ես թքնեմ քու ճակատիդ...»¹¹, ապա Իսահակյանը՝ փոքր ազգերի (հույներ, ասորիներ) հանդեպ աշխարհի հզորների նյութած դավերին 1918 թ. պատասխանում է. «Թու՛ք ու մու՛ր մարդկության խղճին...»:¹²

Հայոց ճակատագրի ողբերգական դեպքերի պատճառներին անդրադառնալիս Վարպետը մեղադրում է ոչ միայն եվրոպական քրիստոնյա երկրներին, այլև հայերին: Մեծագույն մեղադրանքը այդ երկրների հանդեպ տաժած անվերապահ, միամիտ հավատն է, որը և դարձավ մեր ժողովրդի ամենամեծ դժբախտությունը. հայերին մեծ խոստումներ շռայլեցին, նրանք էլ հավատացին. «...Կարծում էին, թե աշխարհը իրենց պես է - գաղափարական, հավատարիմ, զոհաբերող...»: ¹³

⁹Իսահակյան Ավ., Հիշատակարան, Երևան, 1977, էջ 346:

¹⁰Նույն տեղում, էջ 341:

¹¹ Միամանթո. Ընտիր երկեր, Երևան, 1979, էջ 135:

¹²Իսահակյան Ավ., Հիշատակարան, Երևան, 1977, էջ 334:

¹³Նույն տեղում, էջ 335:

Հայոց ճակատագրի ողբերգական դեպքերից իմաստնացած՝ Բսահակյանը գտնում է՝ մեր հույսը մեզ վրա պիտի լինի, պետք է ապավինել մեր սեփական հավատի, մեր սեփական ուժի և կարողության վրա, ասած է «ուրիշի ձեռքով սև փուշ քաղիր»: Մարդասեր գրողը հանրագումարում է այն տեսակետը, թե «Մարդու մոտ չկա ոչինչ առավել վեհ, քան մարդասիրական ոգին», ¹⁴ և գտնում, որ պիտի հառնենք, քաղաքակրթվենք ու լուսավորվենք, բայց ոչ բռնության և անմարդասիրության հենքի վրա: Մեր ազատության և կրթության սուրբ գործը պիտի իրականացնենք բարոյական հիմունքներով:

Իր հնչեղ գործերով հայրենիքի ազատագրությանը նվիրված՝ Վարպետը նշում է, որ դարերով Հայաստանը հանդիսացել է աշխարհակալ, հզոր պետությունների զարհուրելի բախումների ռազմաբեմը: «Շատ հաճախ հայ ժողովուրդը պայքարելով իր հողի և գոյության համար, կռվել է անձնվիրաբար, արյուն է թափել, հերոսություններ է գործել, զենքով պահպանել իր ազգային կուլտուրական գանձերը: Ես արդար հպարտություն ունեմ այդ մարտնչող, հերոսացող և յավերժացող ժողովրդի զավակը լինելու»: ¹⁵

1936 թվականին Ավ. Բսահակյանը վերադառնում է հայրենիք և հանդես գալիս որպես Խորհրդային Միության կողմնակից. «Քաղաքների հրդեհների, արեան հեղեղների, արցունքոտ և անհամար զոհերի վրայ հնչեց և հասա մեզ վերջապես...Հոկտեմբերյան Սոցիալիստական մեծ Հեղափոխությունը, ազատեց և կյանքի կոչեց գերեզմանի ափին կանգնած հայ ժողովրդին»: ¹⁶

Գրողը մեկնաբանում է, որ հեղափոխությունից անցել է միայն քսանմեկ տարի, բայց նախկին ավերված Հայաստանը անճանաչելի է դարձել այսօր: «Նա իրավահավասար անդամ է Մեծ Միության ժողովուրդների ընտանիքում: Օրեցօր ամրանում են սիրոյ, և եղբայրութեան կապերը Հայաստանի, Վրաստանի և Ադրբեջանի ժողովուրդների միջև, որոնց իրարու դեմ լարել էր Ցարիզմը: Ցարիզմը ճնշում էր մեր ժողովրդին, արհեստական, թունավոր ատելություն էր սահմանում»: ¹⁷

Խրիմյան Հայրիկի՝ հետազայում մարգարեական խոսքեր դարձած հայտնի նգովքը. «Թող կործանվի այս աստվածընդդեմ ու բանտաժվար կայսրությունը» այդ ժամանակներում առավել քան արդիական էր:

Լինելով ակնառու դեմքերից մեկը՝ Վարպետը ամենաակտիվ մասնակցությունն է ունենում ազգային, քաղաքական կյանքի բուռն իրադարձություններին: «Առանձնապես հետաքրքրությամբ ու

¹⁴ Готфрид Г.И., Идеи и философии истории человечества, М., 1977, с.428.

¹⁵ «Արև» օրաթերթ, Կահիրե, 1943թ., թիվ 7330, էջ 2-3:

¹⁶ «Արև» օրաթերթ, Կահիրե, 1943թ., թիվ 7330, էջ 2-3:

¹⁷ Նույն տեղում:

աշխուժությամբ էր անցնում գրողների ընդհանուր ժողովի վերջին նիստը... Ընկ.Իսահակյանի ելույթը կրկին անգամ եկավ ապացուցելու, որ մեծ բանաստեղծն իրեն հարազատորեն կապված է զգում մեր սոցիալիստական հայրենիքի, նրա աշխատավոր մասսաների հետ»:¹⁸

Խորհրդային Միության մեջ՝ եղբայրական ժողովուրդների ընտանիքում, հայրենիքի «ազատության, բարօրության» գաղափարը սրտերում, բազմաթիվ մտավորականներ նորանոր հաջողություններ էին արձանագրում: Այդ ժամանակաշրջանը ամբողջությամբ բավարարում էր նաև հայ գրական, քաղաքական մտքի՝ ավանդույթի, հայրենասիրության դրսևորման ամենակարևոր պահանջը՝ Հայաստանում բարենորոգումներ անցկացնելու, գրական նոր գոհարներ ստեղծելու: Դրանցում ակտիվորեն ներգրավվում էին հատկապես առաջավոր մտավորականները, որոնցից մեկն էլ խոսքի մեծ վարպետ՝ Ավ. Իսահակյանն էր: «Մեծ Միությունը կազմող ժողովուրդները ոգևորուած են միևնույն գաղափարներով, պայքարում են միևնույն ընդհանուր նպատակի համար: Յուրաքանչյուրի կուլտուրական և տնտեսական նուաճումները ուրախացնում են միւս բոլորին: Չկայ մօտիկ և հեռու, բաժանումը բարձր և ստոր ցեղերի ոչնչացւած է հիմնովին, չկան այլևս ճնշողներ և ճնշուածներ»:¹⁹

Խորհրդային Միության մեջ «հետամնաց» ժողովուրդները ցույց տվեցին իրենց ողջ հարստությունը. «...ֆոլկլոր, դիւցազնավեպ, երգեր, արւեստ՝ արժանի խորին համակրանքի. Կարճ ժամանակաշրջանի մեջ նրանք յառաջադիմական ահագին ուղի կտրեցին անցան, շինեցին քաղաքներ, բացեցին բազմաթիվ դպրոցներ, ստեղծեցին թատրոն, գրականութիւն, նրանք սկսեցին տիրապետել տեխնիկային, որը կարծում էր թէ՛ պահուած է «ընտիր ցեղերին»: Խնամքով պահպանւում են հին ճարտարապետութեան յուշարձանները, նոր պեղումներ են կատարում, հավաքում են ֆոլկլորը, երգերը: Եւ օգտվելով մեր հարուստ ֆոլկլորից մշակեցի «Մասմա Մհեր» դիւցազնավեպը և այժմ էլ աշխատում եմ նրա վրա՝ լրացումներ անելով: Իմ տակաւին չավարտած «Ուստա Կարո» վեպը ֆոլկլորային շատ տարրեր է կրում իր մեջ»:²⁰

Խորհրդահայ ժողովրդի ձևավորումը, բնականաբար, պետք է բերեր մշակութային և ազգային ինքնագիտակցության վերելք: Հայ ժողովրդի դավանած հայրենասիրության, ազատատենչության և այլ արժեքները, միախառնվելով պատմական հիշողության հետ, արթնացրին սեփական ազգային պետություն ունենալու ձգտումը: Պատահական չէին Իսահակյան մտավորականի գրառումները, թե. «Սովետական Միության

¹⁸ «Արև» օրաթերթ, Կահիրե, 1937թ., թիվ 14, էջ 3:

¹⁹ «Արև» օրաթերթ, Կահիրե, 1943թ., թիվ 7330, էջ 2-3:

²⁰ Նույն տեղում:

մեջ ես վերագտայ իմ հայրենիքը, եղբայրական ժողովուրդների ընտանիքում»:²¹

Ավ. Իսահակյանը 30-ական թվականներն իր գրառումներում ուղղակի արտահայտում և բնութագրում է խորհրդանիշներով, որոնք ստալինյան բռնատիրական տարիները առավել կատարյալ տեսքով են ներկայացնում: «Ես անցել եմ երկար, կյանքի փորձով հարուստ ճանապարհ և իմ հայացքը սկսեցել ու ուղղել եմ Մեծ Ստալինին, որ միացնելով ժողովուրդները, տանում է մեզ այնտեղ, ուր ծաղկում է նոր աշխարհը ընդհանուր երջանկության համար ...աճում է հայ ժողովրդի տնտեսական բարեկեցությունը, քաղաքները բարեկարգվում են... ծաղկում են Համալսարանը, Կոնսերվատորիան/ երաժշտանոցը/, ամեն տիպի դպրոցները, հոյակապ օպերան, շքող թատրոնները, կինոները/շարժանկարային թատրոնները/, մուզեյները»:²²

Վարպետին ոգևորում է նաև այն փաստը, որ հայ գրքի հրատարակությունը Հայաստանում աննախընթաց չափերի էր հասել: «Լույս են տեսնում գիտական և գեղարվեստական բազմաթիվ գրքեր, թարգմանություններ ռուս և եղբայրական ժողովուրդների գրականությունից, վերահրատարակում են շատ գրքեր Հայ դասական երկերից: Հայ ժողովուրդը աճում է և զարգանում՝ ազատություն տալով դարերով խեղդուած իր ստեղծագործ ուժին... Հայ ժողովուրդը օգտագործելով իր պատմական լաւագոյն աւանդութիւնները և դասական ժառանգութիւնը- Խորենացի, Նարեկացի, Քուչակ, Մայաթ- Նովա, ստեղծում է նոր երկեր կոմունիզմի ոգով»:²³

Եվ որքան մեծ է լինում Վարպետի հիասթափությունը, երբ տեսնում է ժամանակի ողբերգությունը. արյունոտ բռնակալը ոչնչացնում էր ժողովրդի միտքն ու հոգին: Կարճ ժամանակ անց Իսահակյանը ականատես է լինում կրտսեր գործընկերների ողբերգական ճակատագրին՝ Ե. Չարենց, Ակ. Բակունց, Վ. Թոթովենց, Զ. Եսայան, Գ. Մահարի... Գրականագետ Լ. Հախվերդյանի հավաստմամբ՝ «...վկայել կարող եմ, թե Վարպետը ինչքան ծանր էր ապրում իր անազատ վիճակը... Երբեմն ասում էր նույնիսկ, թե իգուր եկավ հայրենիք, շատ թանկ գին վճարեց դրա համար՝ հոգու անկախությունը, բանաստեղծի ներքին ազատությունը, անհատականության կորուստը»:²⁴

Սակայն Իսահակյանը մինչև վերջ էլ հավատում էր հարազատ ժողովրդի լուսավոր ապագային: Իսահակյանի հունձքը ներծծված է մեղմ ու ջերմ լույսով: Ինչպես կասեր Պուշկինը, նրա թախիծը պայծառ է. վիշտն ու ցասումը նրա մոտ երբեք չեն վերածվում խավարի և չարության:

²¹ Նույն տեղում:

²² «Արև» օրաթերթ, Կահիրե, 1943թ., թիվ 7330, էջ 2-3:

²³ Նույն տեղում:

²⁴ Հախվերդյան Լ., Վարպետը, Երևան, 1990, էջ 175:

Վարպետի կարծիքով՝ մեր փրկության խարիսխը, մեր գորավիզը պետք է ապավինել մեր սեփական հավատի և ուժի կարողության վրա: Ուրեմն պետք է քաղաքակրթվենք ու լուսավորվենք, բայց ոչ ուրիշների նման բռնության և անմարդկասիրության շենքի վրա հիմնավորենք մեր այդ քաղաքակրթության ու լուսավորության սուրբ գործը: Մեր ազատության և կրթության գաղափարը պիտի ղեկավարենք բարոյական հիմունքներով:

ԱՄՓՈՓԱԳԻՐ

Ավետիք Բասիակյանը իր ապրած պատմական ժամանակաշրջանի ազգային, հասարակական-քաղաքական կյանքի յուրօրինակ գործիչն էր, ցեղասպանության, հայրենիքի մեծ մասի հափշտակության ու կոռստի մրմուռների, Հայաստանի բարօրության հետ կապված հույսերի երգիչը: Ուշագրավ են գրողի ազգային-քաղաքական ընկալումների և ստեղծագործության քննությունը, քանի որ նա՝ Բասիակյան մարդը և քաղաքացին՝ ազգային հենքով և եվրոպական կրթությամբ, իր ապրած բարդ ու հարափոփոխ ժամանակաշրջանում դիտարկում էր Հայաստան երկրի քաղաքական փոթորկահույզ իրադարձությունները: Բասիակյանը մինչև վերջ էլ հավատում էր հարազատ ժողովրդի լուսավոր ճակատագրին: Հազարամյակների ժառանգություն ունեցող հայկական քաղաքակրթությունը ներկայումս կանգնած է լուրջ խնդիրների առջև, որոնցից անկարևոր չէ ազգային արժեքների պահպանումը համաշխարհայնացման արդի փուլում:

Հիմնաբառեր. արժեք, պայքար, ժողովուրդ, հայրենիք, ազատություն, ազգային պոեզ

Գրականության ցանկ

1. Աղաբաբյան Ս., XX դարի գրականության զուգահեռներում, Գիրք 1, Երևան, 1983:
2. «Արև» օրաթերթ, Կահիրե, 1943թ., թիվ 7330:
3. «Արև» օրաթերթ, Կահիրե, 1937թ., թիվ 14:
4. Բասիակյան Ավ., Հիշատակարան, Երևան, 1977:
5. Հախվերդյան Լ., Վարպետը, Երևան, 1990:
6. Նժդեհ Գ., Հատընտիր, Երևան, 2000:
7. Սիամանթո. Ընտիր երկեր, Երևան, 1979:
8. Готфрид Г.И., Идеи и философии истории человечества, М., 1977.

АВЕТИК ИСААКЯН КАК ВОСПЕВАТЕЛЬ НАЦИОНАЛЬНОГО ДВИЖЕНИЯ

Нуне Мкртчян

канд. филол. наук, Северный университет

Аветик Исаакян был своеобразным деятелем в национальной, общественной и политической жизни того исторического периода, в

котором он жил, певцом, оплакивающим геноцид, разграбление и потерю большей части родины и надеющимся на благополучие Армении. Исследование творчества и национально-политических восприятий писателя примечательно тем, что, Исаакян, как человек и гражданин, как глубоко национальный поэт с европейским образованием, в этот сложный и переменчивый период своей жизни наблюдал за бурными и политическими событиями Армении. Исаакян до конца верил в светлую судьбу своего народа. Армянская цивилизация, имеющая тысячелетнее наследие, в настоящее время сталкивается с серьезными проблемами, среди которых на современном этапе глобализации немаловажным является сохранение национальных ценностей.

Ключевые слова: ценность, борьба, народ, родина, свобода, национальный поэт.

AVETIQ ISAHAKYAN AS THE PRAISER LIBERATION STRUGGLE

Nune Mkrtchyan

PhD in Philology, Northern University

Avetik Isahakyan was a unique figure in the national, social and political life of his historical period, mourning the abduction and loss of the homeland, and he also was the singer of hopes for the welfare of Armenia.

The examination of the writer's national-political perceptions is remarkable since Isahakyan as a citizen and human observed the turbulent political events in Armenia. Till the end Isahakyan believed in the bright destiny of his people.

The Armenian civilization, which has a heritage of millennia, is currently facing serious problems and it is crucial to preserve national values in the current stage of globalization.

Key words: value, struggle, nation, homeland, freedom, national poet.

Ներկայացվել է՝ 18.02.2021 թ.

Ընդունվել է՝ 25.03.2021 թ.

ՎԱՀԱՆ ԹԵՔԵՅԱՆԻ ՀՈԴՎԱԾՆԵՐԸ «ԱՐԵՒ»Ի 1915 ԹՎԻ ՀԱՄԱՐՆԵՐՈՒՄ

Վարդուհի Դավթյան

բանասիրական գիտությունների թեկնածու, Հյուսիսային համալսարան

varduhidavtyan@mail.ru

Սփյուռքահայ գրականությունն արևմտահայ կյանքի բնատված ծառի վերընձյուղումն է, դիմակայության խիզախումը: Առաջին աշխարհամարտի տարիներին և դրանից հետո արևմտահայ ժողովուրդն անլուր տառապանքների գնով կարողացավ ուրիշների մեջ վերաձևավորել ու ընթացքի բերել ոչ միայն իր կենսագործունեությունը, այլև գրական սեփական հոսքը:

Փշրված ու բեկորված կյանքը շարունակում էր զարգանալ կեցութեան և գործունեության հիմնարժեքների առանցքի շուրջ: Այն, բացի հպարտ գոյատևումից, ենթադրում էր նաև հայակերպ հարատևելու համառություն:

Այստեղ հիացնողը սփյուռքացած արևմտահայ հեղինակների տոկոսությունն էր, թուրքական սրից մազապուրծ, մահախուճապ հայրենիքը լքած հայերին ուղղված սթափեցման ազդակները: Մշակութային տարագրության ալիքն ասպարեզ էր բերել գրական նոր սերունդ, որը, բացի ստեղծագործ ուժ լինելուց, աշխուժորեն սկսեց պտտել հասարակական-մշակութային կյանքի անիվը, լցնել կյանքի «պարապը»: Մեկը մյուսի հետևիդ սկսեցին հիմնավորվել քաղաքական կառույցներ, խմբագրություններ: Լույս տեսնող տասնյակ պարբերականները ոչ միայն աշխուժացնում էին գաղթօջախները, այլ նաև դառնում էին մի յուստեսակ ամբիոն, որտեղից բարձրաձայնվում էին հարահաս խնդիրները:

Ազգային, մշակութային հաստատություններն ակտիվորեն էին գործում Ամերիկայում, Եվրոպայում, ու եթե համայնքների ներազգային կյանքը արագ էր վերակազմավորվում, ասենք, ամերիկյան կամ ֆրանսիական միջավայրերում, ապա Մերձավոր Արևելքում՝ Սիրիայում, Լիբանանում, Եգիպտոսում, զարգացման ընթացքը հապաղած էր: Մասնավորապես Եգիպտոսում, ցավոք, չկար բազմացող հայության հարաճուն զարգացում: Սակայն 20-րդ դարի սկզբին եգիպտական կենտրոնական քաղաքներում աստիճանաբար հավաքվող մտավորականների շնորհիվ փոխվում է վիճակը: Մայրաքաղաք Կահիրեն, Ալեքսանդրիան, իրենց շրջակա տարածքներով դառնում են հասարակական-քաղաքական կյանքի բուռն անցուղարձերի արդյունավոր միջավայրեր: Ալեքսանդրիայում է 1904-ին հայտնվում նաև Վահան Թեքեյանը, որը հաղթելով իր մեջ առևտրականի պահանջներին՝ ձեռք զարկեց մի շարք պարբերականների, որոնցից «Արեւ»-ը ժողովրդի և ժամանակի հետ մեկտեղվելու, հայության հետ երկխոսելու հոյակապ ամբիոն էր: Այն

Ալեքսանդրիայում սկսում է լույս տեսնել 1915 թվականի մայիսի 11-ից՝ որպես եռօրյա անկախ լրագիր: Տնօրեն-խմբագիրը Վ. Թեքեյանն էր, իսկ արտոնատերը՝ Լևոն Մկրտիչյանը, աշխատակիցներն էին՝ Տիգրան Կամսարականը, Վահան Մալեգյանը, Միքայել Կյուրճյանը: 1921 թ. մայիսի 4-ին «Արև»-ը դառնում է Եգիպտոսի Շրջանակի Հայ ռամկավար կուսակցության պաշտոնաթերթը, որի տնօրեն-խմբագիրը դառնում է Միքայել Կյուրճյանը, իսկ 1921թ. հոկտեմբերի 7-ին՝ Եգիպտոսի շրջանակի Ռամկավար ազատական կուսակցության պաշտոնաթերթը՝ կրկին Մ. Կյուրճյանի խմբագրությամբ: 1922թ. դեկտեմբերի 11-ին դառնում է օրաթերթ՝ Հովհաննես Հակոբյանի խմբագրապետությամբ, իսկ 1924թ. օգոստոսի 9-ին փոխադրվում է Կահիրե: Վ. Թեքեյանը տարբեր շրջաններում ստանձնել է թերթի խմբագրապետի պաշտոնը. որոշակի ընդմիջումներով մինչև 1920թ. հուլիսի 2-ը եղել է դրա տնօրեն-խմբագրապետը: 1927թ. սեպտեմբերի 1-ից մինչև 1928թ. հուլիսի 6-ը, 1931թ. հունվարից մինչև հունիս և 1935թ. սեպտեմբերից մինչև իր մահը՝ 1945 թվականը, կարճ ընդմիջումներով վարել է թերթի անխափան ընթացքը: «Արև»-ն իր ծավալած գործունեությամբ ներդաշնակ էր իր անունին՝ որպես լույսի, ջերմության, գաղափարների և մտքերի նորաբաց արշալույսի խորհրդանիշ:

Շնորհիվ «Արև»-ի՝ Վ. Թեքեյանն իր մեջ հայտնաբերեց զգայուն խմբագրին:

Գրեթե բոլոր համարներում Վ. Թեքեյանը հանդես էր գալիս խմբագրական հոդվածներով՝ կամենալով ոչ միայն բարձրաձայնել հրատապ խնդիրները, այլև դրանց լուծման և հաղթահարման շուրջ համախմբել ընթերցող հայությանը:

1915թ. մայիսի 11-ին լույս տեսած թերթի անդրանիկ համարը բացվում էր Վ. Թեքեյանի «*Մեր առաջին խօսքը*» խմբագրականով, ուր նա նկատում է, որ թերթի հրատարակությունն օգտակար գործ է առանց հպարտության և առանց կեղծ անկեղծության: Այն ոչ քաղաքական կուսակցական մարմին է, ոչ էլ հակակուսակցական: Պատմական բախտորոշ ժամանակահատվածում թերթի հրատարակությունը կարևոր էր ազգային շահերի պաշտպանության տեսակետից ակնկալելով հայերի միացածությունը: «*Բարեբաղդաբար, ազգային շահերու պաշտպանություն գործ մըն է, որ սկսած է*»²⁵, - հայտարարում է Վ. Թեքեյանը: Ըստ խմբագրի, «*Արև*»-ի *հրատարակությունը մի յուրատեսակ ծառայություն էր՝ «թրթոացնելու Եգիպտոսի և արտասահմանի Հայության սիրտը և անոր կամքի, մտքի, դրամի ու ի հարկին բազուկի ուժը բերել աւելցնելու այդ գործին վրայ*»²⁶: Իհարկե, ժամանակը հետագայում ցույց պիտի տար, թե որքան արդարացված էր փայփայված հավատը: Ճանաչելով

²⁵ Արև, 1915, Ալեքսանդրիա, թիվ 1:

²⁶ Նույն տեղում:

գաղթականի բարդությից դեպի ինքնության հաստատման ճանապարհը հասնելու դժվարությունը՝ Վ. Թեքեյանը դառնում է նախանձնախնդրորեն պահանջկոտ մարդկային մտքի ու սրտի հատկությունների նկատմամբ, առանց որոնց ոչ նյութական, ոչ ընկերային դիրքը չեն կարող արժանանալ ժողովրդական հարգանքի, ավելին, իրենք չեն *«ծոիր բոլոր այս յատկութիւնները ունեցող ամենաբարձր անձնաւորութեան մըն ալ առջեւ, երբ ան զանոնք ի սպաս չի դներ, պէտք եղած պահուն իր ազգին ու իր հայրենիքին»*²⁷:

«Գրքի և մտքի տէրերը» չեն կարող գուրկ լինել ազնվությունից, զոհողությունից ժողովրդասիրության ոգուց.- սա ազգային բարոյականության գերխնդիրն էր Վ. Թեքեյանի համար, առաջնային ու կարևոր: Վատությունը, նկարագրի տկարությունը անընդունելի էին: Բախտորոշ այդ ժամանակահատվածում անհրաժեշտ ու *«խիզախ բնավորութիւններ, որոնք իրենց գաղափարին պաշտպանութեան համար ամէն նկատում ոտքի տակ կ'առնեն, իրենց բարեկամները վշտացնելէ չեն վախնար և անժողովրդական ըլլալը հոգերին չեն ըներ»*²⁸: Յավոք, այս առումով մեր ազգը *«քիչ մը դժբաղդ է»*, բայց թեքեյանական անհուսությունը տեղի է տալիս ազգին ուղղված պատերթիկ կոչի մեջ, որը դառնում է շարունակակն հույսի վկայությունը: *«Երեւան հանէ,- գրում է նա,- պանծացո՛ւր ու տարածէ՛ աշխարհի առջեւ հայրենիքիդ ազատութեան այն նախօրին, առաքինութիւններուդ ամբողջ ծածուկ ու հարուստ գանձերը և զսպէ՛, ստուերէ՛, սպանէ՛ բոլոր թերութիւններդ, բոլոր տկարութիւններդ»*²⁹: Վ. Թեքեյանը «վաղվա սեմին» առաջ կանգնած հայից պահանջում է մի կողմ թողնել չկամությունն ու անմիաբանությունը և պարապ ձեռքով չվերադառնալ ազատութեան սեղանի բաշխումից կամ կոնակ դարձնել ծագող արշալույսին, որ պիտի բացվի մեր դաշնակից ազգերի կողմից՝ հակառակ դեպքում պիտի մտնի գերեզման, որտեղից դուրս է եկել: Սա համազգային տագնապի ահագանգ էր, անընկրկելի խստապահանջություն՝ անխտոր, անսայթաք ընթացքի, փրկության վերագնաց ուղու:

Այդ ընթացքը կասեցնել ցանկացող թշնամին նգովքի արժան է, և Վ. Թեքեյանը զգացումի զորությամբ «Արեւ»-ի հերթական համարներից մեկում տպագրում է «Պիտի իյնաս» հնչյակը՝ ուղղված հայի թշնամուն: Քերթողը անիծում է ոսոխին չմեռնել, այլ գետնաքարշ ապրել, ճանկոել հողը:

*...Տունդ մոխիր եղած՝ ծածկէ պիտի քեզ, երբեմնի տունդ եռուզեռ...
Պիտի իյնաս, կ'իյնաս ալ...
Եւ չմեռած դեռ տեսնես պիտի, ահե՛ղ պատուհաս,*

²⁷ Նույն տեղում:

²⁸ Նույն տեղում:

²⁹ Նույն տեղում:

*Ծաղիկը մեր աշխարհին, գոր թողուցիր ամերակ,
Եւ մեր խայտանքը ազատ քու ըստրուկի աչքիդ տակ..³⁰ ..*

Նույն ժամանակում Հովհ. Թումանյանը գրեց «Հայրենիքիս հետ» բանաստեղծությունը՝ զգացումի և տրամադրության նույնատիպ սրությամբ։ Վ. Թեքեյանը Հովհ. Թումանյանի պես չէ։ Վերջինս իր հույսը կապում է այն բանաստեղծների հետ, որոնք դեռ չեն պղծել իրենց շուրթերն անեծքով, որովհետև հենց ազգային գրողները պիտի գովեն հզոր հայրենիքի նոր կյանքը՝ նոր երգերով, նոր խոսքով։ Սա գրողական խառնվածքի խնդիր է՝ ազգային ողբերգության նկատմամբ ունեցած վերաբերմունքի ոչ օրինաչափ արտահայտություն։ Երկու բանաստեղծների համար էլ կարևոր է «վաղը» բացվող արշալույսի աստվածային խորհուրդը։

«Արեւ»-ի 1915 թ. մայիսի 24-ի համարում Վ. Թեքեյանը հրատարակեց «Վաղը» բանաստեղծությունը։ Քերթողի համար այսօրը տգեղ է իր անհուն տրտմությամբ։ Քնարի լարերը, որոնց վրայով սահում են նրա մատները, հին են, ասել է թե՛ բանաստեղծական նյութը հնացած է, հիմա կարևոր է նորի փնտրտուքը։ Նորը՝ վաղը, իր կենարար արևներով ջերմացնելու է իր երագների աշխարհը։ Բանաստեղծի քնարի երկունքը վաղվա պատասխանատվությունը ունի։

*Ա՛հ, այդ Վաղուան լոյսի առատ աղբիւրին՝
Որ մեզ ամբողջ պիտի լրւար, ողողէր...,
Ահ, ուշացած այդ կաթին, որ Հայ հոգին
Պիտի նորոգ սընուցանէր...որ, ով Տէր,
Աշխարհի վրայ պիտի նետէր մեզի ալ...*

*Եւ՝ օ՛հ, արդէն՝ մինչ խաւարէն կ'երգեմ ես,
Քընարիս վրայ, տեսէի նուրբ շող մը կ'իյնայ...:*

Այդ «շող»-ը Վաղվա բերկրալի արթնության խորհրդանիշն է, ազատության մոտալուտ այգը, որը իր մեջ խտացնում է ազգային հույսի իսկատիպ արժեքը։

«Արեւ»-ում լույս տեսնող իրարահաջորդ հոգվածները օր առ օր բացահայտում են ոչ միայն օրվա, ժամանակի ճշգրիտ անցուդարձը, այլ նաև Վ. Թեքեյանի վերաբերմունքը դեպքերի և իրադարձությունների նկատմամբ։

Թերթի 1915թ. մայիսի 31-ի համարում Վ. Թեքեյանը հանդես է գալիս մի լրագրական հոդվածով՝ «Կովկասի կամավորներուն» տիտղոսով։ Այն, ինչ անում էին կովկասյան կամավորները, հիացնող էր և ոգեշնչող։ Հոդվածում Վ. Թեքեյանը մասնավորեցնում է «Արեւ»-ի վերաբերմունքը Կովկասահայ կամավոր գնդի հանդեպ, որը զմայլանքի, սփոփանքի և երախտագիտության բացառիկ վերաբերմունք էր։

³⁰ Արեւ, հինգշաբթի, Մայիս 13, 1915:

Հոգվածում ապշեցնողը Վ. Թեքեյանի հավասարակշռող միտքն է. կռվի բռնվելը իրեն բնորոշ չէ, թեև հարկ եղած դեպքում չէր հրաժարվի: Սկզբունքները ավելի քան առաջնային էին:

Վ. Թեքեյանի համար անձնական և խմբային գոհացումներից վեր՝ ողջ ազգն է, հայրենիքը: Պետք չէ շեշտել, թե ամեն մեկը որքան է սիրում նրանց: Կարևորը նրանց ցավի տեղն իմանալն է, վերքը բաց պահելը. *«Այսպես աւելի յոյս կրնայինք ունենալ անոր մաքրուելուն: Կը կրկնենք, թէ այստեղ մենք կռիւ մղել կամ մղել ուզուած կռիւի մը պատասխանել չենք փափաքիր: Եթէ տեղ-տեղ ձայներնիս քիչ մը սուր եղաւ, պատճառը այն է, որ վերքին ցաւը կ'զգայինք, և պէտք եղաւ, որ այսօր քիչ մը փորենք զայն...»*³¹:

«Վերքի ցաւը» ներքին անհամաձայնությունն ու անհաշտությունն են, որ զգալի են դառնում ժամանակ առ ժամանակ. այսպես էր, երբ նախաձեռնվել էր կամավորների համար զինվորական նպաստ հավաքել: Դա առաջացրեց ոմանց հակառակությունը: Վ. Թեքեյանը զայրանում է. հերիք չէ չեն օգնում, դեռ հակառակվում են:

Վ. Թեքեյանն առաջադեմ այն մտավորականներից էր, որոնք վաղվա բացվող օրվա անկորնչելի հույսերը կապում էին երիտասարդների հետ: «Արեւ»-ի հինգ համարներում նա հանդես եկավ իրարահաջորդ հոդվածներով՝ *«Մեր երիտասարդությունը»*³² խորագրով: Վ. Թեքեյանը միշտ կանգնած է եղել երիտասարդների կողքին: Նրա փնտրածը էքսցենտրիկ, օրինաչափություններից դուրս, չափ և օրենքի չենթարկվող երիտասարդն է՝ անգուսպ եռանդով, անհաշիվ խոյանքով, դժվարահաճ ու ինքնահավան, որը պատրաստ է իրենից առաջ կառուցած որեւէ շինվածք քանդել՝ ավելի նորը կառուցելու համարձակությամբ: Երիտասարդները բոլոր ժամանակներում եղել են դժգոհ, նորասեր ու բացարձակապաշտ: Այն մարդկությանն արգելում է լճանալ վնասակար իր հանգստի և անդորրության մեջ: Երիտասարդությունն է մարդկության մտավոր և հոգևոր ուժերի վերանորոգիչը: Կարևորելով երիտասարդների օգուտը՝ դրան սակայն հակադրում է այն աննշան վնասը, որ ունի նա: Ցավոք, մարդկությունը բնութենատուր սովոր է պայքարել ամեն մի գահավեժ նորության, չափազանց եռանդի դեմ: Հոգվածների մեջ Վ. Թեքեյանը փորձում է տալ հայ երիտասարդության ոգու մեծությունն ու չափը՝ համեմատության եզր բերելով ֆրանսիացի և իտալացի երիտասարդությանը, կամենում է նրանց նորասեր, դժգոհ և խիզախ հատկանիշները գտնել նաև մեր մեջ, մեր գրական-գեղարվեստական դպրոցների, խմբակների, հոսանքների, խմորվող քաղաքականության դաշտերում: Չթաքցնելով իր հիացմունքը *«պելճիքական»* (իմա՝ բելգիական.-Վ.Դ.) մի քանի տաղանդավոր անհա-

³¹ Արեւ, երկուշաբթի, Մայիս 31, 1915:

³² Տե՛ս «Արեւ»ի թիվ 14, 15, 17, 19, 22 համարները, 1915:

տականությունների նկատմամբ, որոնք երկրից դուրս՝ Ֆրանսիայում, Անգլիայում կամ Գերմանիայում գնահատված ու փնտրված էին, Վ. Թեքեյանը հաջորդիվ հոգաձոր են քննադատում է տարբեր քաղաքական թևերի մեջ տարորոշված մեր մտավորական երիտասարդության եսական ձգտումները, մտահոգվում նրանց՝ սեփական գոյության փափաքը գոհացնելու մղմամբ³³։ Երիտասարդությունն է պարզում բարոյական կյանքի պայմանները, իսկ բարոյական կյանքը տարբերվում է ֆիզիկական կյանքից։ Ըստ Վ. Թեքեյանի, միայն ֆիզիկական կյանքով ապրողները չեն բարձրանում ցեղային մակարդակից, ինչպես քրդերը, եզդիները, ասորիները ու շատ-շատ այլ ժողովուրդներ։ Հայը թեև թվով քիչ է, բայց ցեղ չէ, որովհետև ապրում է բարոյական կյանքով, որի գրավականը լավ երիտասարդությունն է։ Ողջ հողվածը անուղղա լավատեսություն է, արևի, հույսի, հավատքի սպասման հաճախանք։

Հողվածի Ե մասում մշակութապաշտ Վ. Թեքեյանին զբաղեցնում է այն իրողությունը, որ մեր անցյալի մշակութային արդյունքները չպետք է բավարերեն մեզ։ Լինել ոչ թե պարզ ընդօրինակող, այլ արտադրող։ Զգոհանալ, չբավարարվել, չհանդարտվել, *«չքնանանք անոր վրայ»*, - պատվիրում է նա։ *«Իր ազգային սեփական մշակույթն է, որ կ'ապրեցնէ ազգ մը և զայն արժանի կ'ընէ ապրելու։ Մնացեալ բոլորը՝ հարստութիւն, դպրոց, գիրք, բարեգործութիւն, յեղափոխութիւն և ազատութիւն, ոչինչ է, եթէ չի ձգտիր այս նպատակին»*³⁴։

Տարակարծ ու բազմադեմ երիտասարդությունը դառնում Հայ Հոգու, Հայ կյանքի, Հայ ինքնության համախորհուրդ արժեքների լինելության գրավականը։ Այս արժեքներին երիցս հավատարմորեն փարված Վ. Թեքեյանն ուղղորդում է դեպի հայության ճակատագրի հուսալիությունը։ *«Քիչ մը յոյս»*³⁵ի առկայծումը Վ. Թեքեյանի մշտաբերուն լավատեսութեան, վաղվա հույսով դիմակայելու բանաձևն է։ Խոշտանգվող հայրենիքի ցավի սուր աղաղակներին արձագանքում են սուրբ գործին լծվելու պատրաստ նորահաս երիտասարդները։ Այդ ազնիվ տրամադրություններն են, որ պետք է օգտագործվեն հոգուստ *«ամենակարօտ Հայութեան»*։

1915 թվականի եղերական իրադարձությունների մղձավանջը Վ. Թեքեյանին հաճախակի ստիպում են անդրադառնալ ազգային խեղճության կաշկանդիչ մեր գիտակցությանը։ Դեռ 1909 թ. նա իր *«Կռուկ երթ»* քերթվածում հարձակման երթի ելած, կոմի գնացող բանակի պես ուռչող հոգիով պաշարում է *«նսեհին կծծի»*։ Չարին, ստությանը, կեղծիքին պետք է դիմակայել անվիատ կովով. ապրելու թեքեյանական այս

³³ Տե՛ս «Արեւ», երկուշաբթի, Յունիս 21, 1915:

³⁴ Նույն տեղում:

³⁵ Այսպես է կոչվում «Արեւ»-ի օգոստոսի 2-ի (երկուշաբթի, 1915թ.) համարում լույս տեսած Վ. Թեքեյանի հոդվածը:

դավանանքը հետո պետ է վերաձևակերպվի «Արեւ»-ի էջերում լույս տեսած բազմաթիվ հոդվածներում:

1915թ. «Արեւ»-ի հերթական համարներից մեկում Վ. Թեքեյանը հանդես է գալիս «Փափուկ թէ բիրտ զգացումներ» հոդվածով, որից տեղեկանում ենք, որ 1915թ. օգոստոսի 18-ին Կահիրեում Քյուրսակի մեջ տեղի էր ունեցել կոփամարտի մրցում հայ և ավստրիացի երկու մրցակիցների միջև: Արամ Չատրյանը ավստրիացի զինվոր Ճ. Տյուկնենի դեմ տանում է 15 ռաունդ, հաջողությամբ դիմանում մինչև վերջ, թեև մրցակիցն ուներ տարիքի, հասակի և ծանրության առավելություններ: Հաղթում է ավստրիացին, որովհետև վերջինիս քաջալերում էին հայրենակիցները, այնինչ հայերի կողմից լռություն էր:

Այս առիթով Կահիրեի «Ազգային Սրահ»-ի հիմնադիր Ս. Պ. Հովսեփյանը, որը ևս ներկա էր եղել, իր մասնավոր կարծիքն է հայտնում, թե կոփամարտը վայրենի ժողովրդից ժառանգված վայրենի խաղ է, որը անհնար է դիտել առանց ջղագրգռության: Այն մարդկային փափուկ զգացումները բրտացնելու բնույթ ունի: Վ. Թեքեյանն իր հոդվածում անսպասելի հակադարձում է տիար Հովսեփյանին. *«Հոգ չէ, որ մեր զգացումները բրտանան, որովհետև պետք է, որ բրտանան, որովհետև կուզան վայրկեաններ թէ անհատներու և թէ ազգերու կեանքին մեջ, ուր փափուկ զգացումները չէ, որ կը փրկեն զիրենք... Կոի ինքն իր մեջ և կոի՛ւ արտաքին աշխարհին հետ... Նախ մեր փափուկ զգացումները, յետոյ մեր ջիղերն ու մեր մկանները կրնան հաւասար ըլլալ ամէն ինչի դէմ»*³⁶:

Խոսքի դիպուկ նշանառությամբ Վ. Թեքեյանը կարևորում է կովին կռվով պատասխանելու սթափությունը: Ցավոք, մենք անհամբեր ենք մեր տեսակի մեջ. *«Մենք մեր ամէն գործերուն մեջ հունձքը չհասած կը քաղենք արդէն ու յաճախ ալ հունձք առնել կ'սպասենք՝ առանց ցանելու»*³⁷, եզրակացնում է Վ. Թեքեյանը: Սա ենթակայական գնահատական չէ: Նա ցավով է նկատում հայի մարած ոգու, անտարբեր գոյության փաստը, անտեղի ու ապարդյուն շտապողականությունը:

«Արեւ»-ի հաջորդող համարում Վ. Թեքեյանը տպագրեց *«Ազգային Բիւրօյի» շուրջ»* հոդվածը: Բանն այն էր, որ կամավորական խմբերի կազմակերպման հարցերը դյուրացնելու համար անհրաժեշտ էր մի պաշտոնական մարմին, որը պատասխանատու կլիներ: Կազմվեց «Ազգային բիւրօ» անունով մարմինը, որի գործունեության շուրջ բողոքներն սկսեցին աճել սկսած 1914թ. դեկտեմբերից, իսկ 1915թ. փետրվարին Թիֆլիսում գումարված «կոնֆերենցիան» չկարողացավ փոխել իրավիճակը: «Ազգային Բիւրօ»-ի գործունեությունը մնաց նեղ կուսակցական շրջանակի մեջ, կամավորական խմբերի հրամանատար նշանակվեցին կուսակցական մարդիկ:

³⁶ Արեւ, երկուշաբթի, Օգոստոս 23, 1915:

³⁷ Նույն տեղում:

Ահա այս ամենի շուրջ բարձրացած աղմուկին է արձագանքում Վ. Թեքեյանը: Նույն համարում արտատպվում է «Մշակ»-ի պատասխանատու խմբագիր Հ. Առաքելյանի «*Մեր պատասխանը*» վերնագրով հոդվածը, ուր լուսաբանվում էին որոշ ճշմարտություններ և հերքվում որոշ ստություններ, ինչպես «Մշակ»-ի խմբագրի կապված լինելը **Բիւրոյի**, և **Բիւրոյի** անդամ լինելու հետ, նրա (իմա՝ **Բիւրոյի**, -Վ. Դ.) գործունեության միակողմանիության հետ: Վ. Թեքեյանն իրեն հատուկ ուղղամտությամբ, կողմերը հավասարակշռելու, արդարությամբ նրանց չնսեմացնող մեծահոգությամբ կամենում է վերացած տեսնել պառակտիչ անհամաձայնությունը, հորդորում է սթափվել, որովհետև ողջ հայությունն արտասահմանից իր աչքերը դարձրել է դեպի Կովկաս, ուստի ազգային տարրերի համաձայնությունը պետք է զորեղանա մանավանդ օրհասական այս պահին, երբ թուրքական յաթաղանից մազապուրծ հարյուրիակազարավոր հայերի քարավանները օգնություն են աղաղակում, երբ հազարավոր կռվողներ կամավորական բանակների օգնությունն են ակնկալում: Վ. Թեքեյանի համար հուսահատեցուցիչ և ցավալի է տեսնել ներքին ջլատիչ վեճերը, թուլացնող անհամերաշխությունն ու անվստահությունը: Բոլորը պետք է հասկանան, որ Թուրքիան դարձել է հայերի համար սպանդանոց, և հայը մղում է իր ապրելու, տնելու, ազատելու կռիվն ընդդեմ լայնորեն ու վճռորեն գործադրված բնաջնջումի, ինչպես Վ. Թեքեյանն է ձևակերպում՝ *«յոյսի կռիւն ընդդէմ մահուան»*:

Ազգային ողբերգության ահազանգը անընդմեջ հնչում է Վ. Թեքեյանի հոդվածներում: Նրա հատու արձագանքները անմիասնականության, մարդկային անտարբերության դեմ մշտարթուն են պահում «Արեւ»-ի ընթերցողին: Վ. Թեքեյանը «Արեւ»-ը դարձնում է «միջնորդ», կազմակերպվելիք դրամահավաքների, հանգանակությունների համար՝ ուղղված մազապուրծ հայության խլյակներին: Այդպիսին էր *«Հայկական գոյութեան կռիւ»*-ին անունով հանգանակությունը, ուր հավաքված գումարը մաս-մաս ուղարկվում է Էջմիածին, Վեհափառ կաթողիկոսին, որպեսզի այն գործածվի ինչպես պետք է:

«Արեւ»-ի հերթական համարում Վ. Թեքեյանը հանդես է գալիս պատասխանատու, արթնության կոչ անող մի հոդվածով՝ *«Անդին կը մեռնին, չեն սպասեր»*³⁸: Սա մտահոգիչ հոդված էր՝ ուղղված եգիպտահայերի անհոգ անտարբերությանը: Վ. Թեքեյանը չէր կարող ինքնահաշտ ապրել՝ իմանալով, որ ինչ-որ տեղ տեղի է ունենում հայերի անպաշտպան խողխողում: Նա ցավով է նկատում, որ փրկվածների անտուն, սարսափահար փախուստը չի ներթափանցում եգիպտահայերի *«գրահապատ մտքէն ու սրտէն ներս»*³⁹: Վ. Թեքեյանն արտասահմանը համեմատում է Նոյան տապանի հետ, ուր աստծո ընտրյալի

³⁸ Արեւ, ուրբաթ, Մեպտեմբեր 10, 1915:

³⁹ Նույն տեղում:

հայարտությամբ հավաքվել են աղետից մազապուրծները, որոնք սակայն միայն իրենց մասին մտածելուց զատ պետք է մտածեն նաև, թե ինչ կլինեն դրսում մնացողները, հեռու մնացողները: Այնինչ նրանք շարունակում են անքույթ, անվրդով ծփալ տապանի հետ իմանալով, որ կրկին Արարատի կողքերին հեղեղ է բարձրանում, արյան հեղեղ՝ իր հետ քշելով բերելով հարյուրհազարավոր կործանված և սրտից վիրավորներ: Ցավոք, կային մարդիկ, որոնք ասում էին, թե իրենց շապիկը պիտի ծախեն ու տան, բայց *«ուզող չկայ, դիմող չկայ...»*, իսկ նրանք, ովքեր պիտի ուզեն, տեղից չեն շարժվում, որ *«ուզող ըլլալով տուող չըլլան»*⁴⁰, - դառնորեն հեզնում է Վ. Թեքեյանը, ապա շարունակում. *«Ամենքս մէջ մէկ պատրուակով ինկած փռուած ենք մեր հեղգութեանը մէջ ու շարժումը չենք ըներ ազգին ահագնածաւալ աղէտին մեր դոյզն օգնութեան բաժին բերելու»*⁴¹:

Օրհասական այս ժամերին ազգային փրկությունը մեկտեղումի մեջ է, համագործակցության և միևնույն ուղղությամբ նայելու համառության մեջ: Դեռևս «Արեւ»-ի 1915թ. սեպտեմբերի 6-ի համարում հրատարակված *«Հայութիւնը թէ սկզբունքը»* Վ. Թեքեյանի հերթական քննախոյզ հոդվածը առիթ էր մի բաց նամակի հրատարակության, որի հեղինակը Բարսեղ Օհանյանը, արձագանքելով Վ. Թեքեյանի խմբագրականին, անդրադառնում է նաև Կովկասի Ազգային Բյուրոյի մասին Վ. Թեքեյանի ամբաստանություններին՝ նկատելով, որ նրա հոդվածները կարող են պատենշ լինել եզրիպտահայ հարուստների համար. քննադատելու փոխարեն համագործակցություն է անհրաժեշտ առաջ բերել, ճշտել, թե որն է մեր սկզբունքը, գաղափարը և պատասխանատվությունը. թողնել անցյալի հաշիվները քննելու սովորույթը:

«Արեւ»ի սեպտեմբերի 15-ի համարում Վ. Թեքեյանը հանդես եկավ *«Պատասխան մը»* խմբագրականով՝ պատասխանելով Բ. Օհանյանի քննադատությանը. *«Ուրիշ ամէն ազգի մէջ համագործակցութիւն, համերաշխութիւն կարելի է, բայց մեր մէջ՝ ոչ, որովհետեւ մէկ կողմը անձնուէրներ և միւս կողմը անտարբերներ, մէկ կողմը զոհողներ և միւս կողմը վայելողներ կան...»*⁴²: Ցավոք, կուսակցական բազմաթւության մեջ համերաշխություն և համագործակցություն դժվար էր գտնել, բայց Վ. Թեքեյանի մղումները վեր էին ամեն տեսակ կուսակցական սկզբունքներից. լինելով կուսակցական, այնուամենայնիվ նա կարևորում էր ազգային խնդրի լուծումը, ու որքան էլ ճշգրտվեն բարեգործության սահմանները, միևնույն է, անտարբերությունն անթաքույց է: Եվս այլ հոդվածում՝ *«Ազգային զգացումը»* վերնագրով և *«Մեր պզտիկ գաղութներուն մէջ»* ենթախորագրով, թեքեյանական խոսքն ուղղված է Կահիրեի և Ալեքսանդրիայի ունևոր և բարեկեցիկ հայության դասակարգին, որը չի

⁴⁰ Նույն տեղում:

⁴¹ Նույն տեղում:

⁴² Նույն տեղում:

հուզվում, չի փոթորկվում, իր ասիերից դուրս չի գալիս, չի հանում իր «մետաղի կամ թուղթի այն կտորները, որոնք հոս գոյութեան պերճանքն են միայն և հոն՝ Հայաստանի և Կովկասի մէջ, հազարաւոր կեանքերու և գրեթէ ամբողջ ազգի մը կեանքին գինն են»⁴³։ Վ. Թեքեյանը նկատում է՝ հակառակ մեծ գաղութների ձեռքը գոց լինելուն, փոքր գաղութները կարող են ունենալ ազգային զգացումի ավելի մեծ զորություն, նրանք ավելի գործունյա են, ինչպես Կահիրեի և Ալեքսանդրիայի միջև գտնվող Թանթայի փոքր գաղութը։ Իրողությունն այն է, որ փոքր գաղութները, օտար մեծ զանգվածներով շջապատված, ավելի բուռն, անխառն ու կարոտալի զգացումներ ունեն դեպի իրենց հայրենիքն ու ազգը։ Կարևորը սիրտ ունենալն է, որին ապահովապես կապված են քսակները։ «Միրտն է, որ կը բանայ անոնց բերանը, ամէն անգամ որ ինքնաբերաբար կը բացուին անոնք»⁴⁴, - նկատառում է Վ. Թեքեյանը «Ի նչ սիրտ է մերինը» հոդվածում՝ չղադարելով համախմբման, ոգևորության անընդհատական կոչերով միավորել հայության սփյուռքացած հատվածին՝ հուսահատ ճիգով նկատելով, որ Կովկասի և արտասահմանի հայերը ցավոք ծանրորեն թերանում են իրենց պարտականությունների մեջ, թողնում, որ հիվանդները մեռնեն, առողջները՝ հիվանդանան և «չէզոքարար իրենք ալ կ'ընեն այն, ինչ որ թուրքը կ'ընէ ներգործապէս, - բնաջնջել Հայութիւնը...»⁴⁵։ Վ. Թեքեյանը ներազգային այս աղետի պատճառը համարում է հայի մեջ Ոգևորության պակասը, ազգային հավաքական, ընդհանուր ոգևորության բացակայությունը։ Սակայն գլխավոր պատճառը ըստ Վ. Թեքեյանի հեղափոխական կուսակցությունների ինքնապառակտմամբ շատացումն է. «...Առաջին յեղափոխական կուսակցութեան յաջորդեց երկրորդը, յետոյ առաջինն ինքն իր մէջ պառակտեցաւ, կարծեմ քիչ մըն ալ երկրորդին ջանքովը-ու ծնունդ տեսաւ երրորդի մը և երրորդն ալ չորրորդի մը...: Այդ բաժանումների, կոիւնների, անջատորէն ունեցած գործունէութեան պատճառաւ կը վնասուեն», - խորապես համոզված է Վ. Թեքեյանը։ Հենց այդպես սպանվեց ազգային ոգևորությունը, և ծրագրերի օտարոտի վարդապետությունները հաջողված ճիգերը դարձան բզկտված, ծվեն-ծվեն եղած, խլրկված ազգային հավաքականության։ Վ. Թեքեյանը գրում է. «Զառանցանք է սա, թէ միութիւնը անկարելի է, կրնայ շատ-շատ համերաշխութիւն գոյանայ, և թէ համերաշխութիւնն ալ արդէն կը գոյանայ ինքնին, պէտք եղած պարագային, վտանգի մը պահուն, հոն, ուր որ պէտք ըլլայ անոր»⁴⁶։ Ցավոք, այս է, որ հաշմեցրեց, կոնծեց և չորացրեց Հայի հոգին։

⁴³ Արեւ, երկուշաբթի, Մեպտեմբեր 20, 1915:

⁴⁴ Արեւ, չորեքշաբթի, Մեպտեմբեր 29, 1915:

⁴⁵ Արեւ, ուրբաթ, Հոկտեմբեր 8, 1915, «Յաւին պատճառն ու դարմանը»:

⁴⁶ Նույն տեղում:

Վ. Թեքեյանը ոչինչ չուներ կուսակցությունների դեմ, ինքն էլ կուսակցության մարդ էր. չմոռանանք այն արդյունավոր գործունեությունը, որը բխում էր Ռամկավար կուսակցության հավատամքից, բայց մտահոգիչը կուսակցությունների անմիաբանությունն է մանավանդ ազգի օրհասական ժամին: *«Թշնամին կամենում է սպանել ազգին, բայց ազգը մարդոց տարբերվում է նրանով, որ մեկ գլուխ չունի և նրան մեկ անգամով չեն կարող սպանել... Գլուխն է ր, գլուխն է ր պետք է փրկենք... կրցածին չափ շատ կտրել կուզե կոր թշնամին...»*⁴⁷: Կուսակցությունների մեկդի քաշվելը աններելի է: Որքան էլ նրանցից ամեն մեկը աղաղակի հայրենասիրական իր ծրագիրը, այնուամենայնիվ Վ. Թեքեյանը չի կարծում, որ չորս կուսակցությունները չորսական անդամներով դեմ դիմաց կգան և իրար ձեռքից կկամենան խլել ավերակների տիրապետությունը: Հիշելով պատմական Արտավազդ թագավորին, որը այդպես էլ չհանդուրժեց հոր գերեզմանի վրա մարդկանց ինքնագոհությունը, *«մինչդեռ մեր կուսակցությունները իրենց խեղճ մորը՝ հոգևարքի Հայաստանին, մեյ մեկ կից ալ իրենք պիտի տային, որպեսզի շուտ մեռնի և պիտի ըստին»*:

- *Կը մեռնի՛ս կոր, մեռի՛ր, մենք քու ոսկորներդ ալ կրնանք իբրեւ զենք գործածել և իրարու գլխուն զարնել...»*⁴⁸: Քաղական անհուսույթյան պայմաններում ո՞րն է մեր ազգի փրկության միջոցը: Վ. Թեքեյանը թերթի 1915 նոյեմբերի 19 համարում տպագրելով հերթական խմբագրականը *«Փրկութեան միջոց»* վերնագրով, պատմական ճշմարտության ենթակայությամբ ներկայացնելով աղետի պատճառների առարկայական հիմքերը, նկատում է. *«Պէտք է արդեօք գառնուկի պէս մայել ու ըսել անընդհատ «Եղբայրանանք», պէտք չէ որոնել և գտնել չարիքին արմատը: Պէտք է ի սեր խաբուսիկ խաղաղութեան մը, որ խաղաղութիւն չէ... թողուլ, որ լրանայ ազգի փճացումը: Եթէ մեր մեծ Ուժը պակասած ու կոտրած չըլլար մենք այսպէս ոչխարներու նման կը քշուէինք Թիւրքիոյ մէկ ծայրէն միւսը ոչ թէ բանակներու, այլ քանի մը տասնեակ կամ հարիւրեակ ժանտարմներու առջեւէն միայն»*⁴⁹:

ԱՄՓՈՓԱԳԻՐ

1915 թվականի «Արեւ» թերթի մեջ արտացոլված թեքեյանական տրամադրությունների հիմնական ուղղությունը կարելի է բնութագրել՝ սթափ ու առարկայական: Ուղղախոս Վ. Թեքեյանն անտարբերներից չէ: Նա իրեն բնորոշ ամենատեսությամբ նկատում է հասարակական, քաղաքական, տնտեսական ու մշակութային յուրաքանչյուր երևույթ, քննում, վերլուծում, շտկում և ուղղորդում:

⁴⁷ Արեւ, երեքշաբթի, Հոկտեմբեր 11, 1915:

⁴⁸ Արեւ, ուրբաթ, Հոկտեմբեր 15, 1915:

⁴⁹ Արեւ, ուրբաթ, Նոյեմբեր 19, 1915:

Հիմնադրանք- «Արև» օրաթերթ, Ազգային Բյուրո, Բ. Օհանյան, Թանրայի գաղութ

СТАТЬИ В. ТЕКЕЯНА В ГАЗЕТЕ «АРЕВ» ЗА 1915 г.

Вардуи Давтян

канд. филол. наук, Северный университет

12. Guidelines for the Practical Evaluation of Learning Based on Laboratory-Clinical in Epidemic Conditions, Yerevan, July, 2020 (in the Armenian language), Karapetyan N. “Flattening” the Recession Curve: Coordinated Fiscal and Monetary Policies Against Consequences of COVID-19, // Coronavirus and the World –Amberd Bulletin, Yerevan, 2020 1 (2), “Tntesaget” Publishing House, 2020, pp. 24-30,
https://asue.am/upload/files/amberd/Amberd%202020.1.pdf?fbclid=IwAR1w5sg7OKKd2ig1JwX678_vDFDBFdCpVgmuOaKL-hxzswOGC9N0N7dQoqQ
13. Marioni G., Land van’t H., Jensen T. The Impact of Covid-19 on Higher Education around the world IAU Global Survey Report. International Association of Universities, May, 2020.

14. New Department at Northern University (in the Armenian language), <https://www.northern.am/index.php/en/news/409-nor-storabajanum>

15. “Optimal human behavior in the crisis situations” webinar with Psychologist Tigran Grigoryan, November, 23, 2020, <https://erasmusplus.am/optimal-human-behavior-in-the-crisis-situations-webinar-with-psychologist-tygran-grygorian/>

16. Polikoff M., Silver D., Kom S., What’s the Likely Impact of Covid-19 on Higher Ed? // August 4, 2020, https://www.insidehighered.com/views/2020/08/04/analysis-data-national-survey-impact-pandemic-higher-ed-opinion?fbclid=IwAR2cYubRE5lvX0srNsBVCXf1x794SbPuEiBLpkErFLD0Cs4OFV_Oot7gVL4

17. Results of student survey of Northern University on online learning, Analysis and Conclusion (in the Armenian language), https://www.northern.am/images/NEWS/arcanc_verlucutyun_usanogh.pdf

18. Tadevosyan R.. Coronavirus has Undermined the Unity of the European Union, // Coronavirus and the World –Amberd Bulletin, Yerevan, 2020 1 (2), “Tntesaget” Publishing House, 2020, pp. 30-35, https://asue.am/upload/files/amberd/Amberd%202020.1.pdf?fbclid=IwAR1w5sg7OKKd2ig1JwX678_vDFDBFdCpVgmuOaKL-hxzswOGC9N0N7dQoqQ

19. Survey Report: The Impact of COVID-19 on Africa’s Higher Education by MAWAZO Institute, May 2020, https://static1.squarespace.com/static/57d0650220099eacd505d3fc/t/5eb244ca0f220170d7bb2a86/1588741398462/Mawazo+COVID-19+Survey+Findings.pdf?fbclid=IwAR1WdCXaTkWgWkT1cZCV6mx2zvWAof_DdR71lrhAK1NljgDxqWHe2LXXBVY&irgwc=1&clickid=XVL2Kg3SRxyLUtzwUx0Mo3EvUkERb01zzSJXxM0&utm_medium=pp&utm_source=adgoal%20GmbH&utm_campaign=adgoal%20GmbH&channel=pp&subchannel=adgoal%20GmbH&source=adgoal%20GmbH

20. The Attitude of the ANAU Students towards online teaching and learning, June 2020, https://anau.am/wp-content/uploads/2020/07/QAAC_Online-learning_Survey-Report_June-2020.pdf

21. The Covid-19 Pandemic drives the Latin Universities to research the Effects of the Pandemic, 23 December, 2020, <https://www.iesalc.unesco.org/en/2020/12/23/the-covid-19-pandemic-drives-latin-american-universities-to-research-the-effects-of-the-pandemic/>

22. The ESN Releases the Biggest Research Report on the Impact of COVID-19 on Student Exchanges in Europe, 9 April, 2020,

https://esn.org/covidimpact-report?fbclid=IwAR0ilx0PhnP-NXAriIErT86GfiVBC4etS1wNyt_8L6PJ_0uWTv8C9DypFIE

23. The higher education system in Armenia,
<https://supporthere.org/page/higher-education-armenia>

24. Vilyan Z., They switched to online teaching (in the Armenian language), 18 March, 2020
<https://hrparak.am/post/b69e6de2779fda8511686c254d0b00de>

ՔՈՎԻԴ-19-Ի ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՎՐԱ

Լուսինե Ֆլջյան,

բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, Հյուսիսային
 համալսարան

Հոդվածը հիմնված է փաստաթղթային հետազոտության վրա, որը հեղինակը ձեռնարկել է համալսարաններում իրավիճակը վերլուծելու համար՝ կորոնավիրուսային համավարակի (Covid-19) բռնկմամբ առաջացած սահմանափակումների պատճառով, ինչը հանգեցրել է հնարավորությունների պարտադրված վերանայման, հայաստանյան համալսարաններում դրանց արագ վերափոխման և հարմարեցման նոր միջավայրում: Հեղինակը քննարկում է տարբեր սցենարներ, որոնք համալսարանները կիրառել են երկու կիսամյակ առկա ուսուցումից հեռավար կրթությանն անցնելու ճանապարհին՝ դասավանդման և ուսուցման տարբեր գործիքների ներդրման և կիրառման միջոցով:

Հեղինակը եզրակացնում է, որ հանկարծակի խափանումը առիթ հանդիսացավ համալսարանների համար նորարարությունների ներդրման, նոր ռեսուրսների զարգացման, աշխատակիցների և ուսանողների վերապատրաստման ոչ միայն համավարակի պայմաններում գոյատևելու, այլև մեկ քայլ առաջ կատարելու և նոր համաշխարհային մարտահրավերներին դիմակայելու համար:

Հիմնաբառեր. Covid-19, բարձրագույն կրթական համակարգ, համալսարան, առցանց ուսուցում, թվայնացում, մարտահրավեր

ВЛИЯНИЕ КОВИД-19 НА СИСТЕМУ ВЫСШЕГО ОБРАЗОВАНИЯ В АРМЕНИИ

Лусине Флджян

доктор филологических наук, профессор Северного
университета

Статья основана на документальном исследовании, которое было предпринято автором для анализа положения дел в университетах в условиях ограничения передвижения, вызванной вспышкой коронавирусной инфекции (Covid-19), которая привела к вынужденному пересмотру возможностей университетов и их быстрой трансформации и адаптации к новой среде. Автор обсуждает различные сценарии, которые университеты использовали для перехода от очного режима к онлайн-обучению, различные изменения, которые им пришлось предпринять при переходе к дистанционному обучению, а также разнообразные инструменты преподавания и обучения, которые были внедрены в течение двух семестров обучения в условиях пандемии в Армении.

Автор приходит к выводу, что внезапный подрыв перешел в возможность для внедрения инноваций для университетов, разработки новых ресурсов, обучения сотрудников и студентов не только для выживания в условиях пандемии, но и для того, чтобы сделать шаг вперед на пути к противостоянию новых мировых вызовов.

Ключевые слова: ковид-19, система высшего образования, университет, онлайн обучение, цифровизация, вызов.

Ներկայացվել է՝ 11.03.2021 թ.

Ընդունվել է՝ 29.04.2021 թ.

ОСОБЕННОСТИ РОССИЙСКОЙ ГОСУДАРСТВЕННОЙ ПОЛИТИКИ В СФЕРЕ ВЫСШЕГО ОБРАЗОВАНИЯ В СОВРЕМЕННЫХ УСЛОВИЯХ

Эмиль Бурангулов

кандидат политических наук, «Уфимский государственный нефтяной
технический университет»

emilburangulov@mail.ru

Введение

Ориентация на извлечение прибыли стала одной из основных в стратегиях современных высших школ [Ридингс, 2010]. В США и многих других ведущих странах университеты (и контролирующие их государственные органы при наличии таковых) все чаще руководствуются идеями «академического капитализма»: учебный процесс и научные исследования становятся прямо зависимыми от перспектив их доходности. Вузы приобретают черты бизнес-структур, что отражается в концепции «предпринимательского университета».

Коммерциализации высшего образования способствуют информатизация и цифровизация, предоставляющие новые технологии, в т.ч. дистанционного обучения, что расширяет круг обучающихся (потребителей) и дает доступ на новые рынки, расширяя и углубляя процесс интернационализации, в т.ч. в рамках Болонского соглашения [Махов А.А., Усманова А.Т., 2013].

Особо актуальными и востребованными дистанционные технологии в высшем образовании стали с началом пандемии COVID-19.

В связи с изложенным возникает необходимость определения и критического анализа специфических черт государственной политики в сфере высшего образования России в условиях цифровизации, ориентации на прибыльность, интернационализации.

Методология исследования сочетает классические подходы к науке и образованию В. Гумбольдта, Р.К. Мертона, а также современные концепции «академического капитализма», «предпринимательского университета», «нового менеджериализма», рассмотренные сквозь концептуальную призму теоретических положений Д. Диксона, М. Кастельса, Б. Ридингса, Г. Шиллера.

Ведущими в исследовании стали методы сравнительного, системного, неоинституционального и статистического анализа, методы экспертного опроса, анкетирования и фокус-группы, в организации и проведении которых участвовал автор.

В январе 2019 г. в 9 российских регионах, входящих в состав Приволжского федерального округа, был проведен экспертный опрос.

Тридцать четыре работника сферы высшего образования на условиях анонимности ответили на вопросы о современных возможностях высшего образования России.

В декабре 2018 г. состоялось анкетирование 220 студентов Башкирского государственного педагогического университета им. М. Акмуллы (БГПУ) и Уфимского государственного нефтяного технического университета (УГНТУ) с целью выявить их специфику поведения и предпочтения.

В марте 2018 г. для рассмотрения возможностей привлечения иностранных студентов и факторов развития российского высшего образования были проведены три фокус-группы, в которых приняли участие 20 сотрудников вузов и колледжей, министерств и ведомств России.

Результаты. В ходе обсуждений, состоявшегося в рамках фокус-группы, участники определили следующие основные проблемы современного высшего образования России: кардинальный отход от социальной направленности высшей школы (в сочетании с постепенным отказом от ее массового характера), сосредоточенность на финансово-экономической деятельности, чрезмерный акцент на наукометрию, неопределенность компетентностного подхода, утрату национальных традиций, негативное влияние экономического упадка и технико-технологической отсталости.

При раскрытии сущности перечисленного, диспутанты отметили, что на сегодняшний день российскую высшую школу по большому счету можно рассматривать как вспомогательную структуру, которая предназначена для обслуживания текущих задач экономики по подготовке узкоспециализированных кадров из сравнительного небольшого числа граждан в рамках узковедомственной образовательной политики. Последняя в общих чертах характеризуется курсом на построение «вертикали вузов», ставкой на вызывающий споры компетентностный подход (в том виде, в каком он был понят российскими восприимчивыми оригинальными идеями Н. Хомского, Дж. Равена и др.), а также ориентацией на сугубо количественные показатели деятельности профессорско-преподавательского состава (индексы цитирования, Хирша).

В ходе анкетирования студентов, проведенного в декабре 2018 г., были получены дополнительные ответы на ряд вопросов, которые обсуждались ранее в фокус-группе. Так, например, подтвердились сведения о снижении социального статуса преподавателя высшей школы среди студенческой молодежи. Опрошенных заботит большое число ежедневных аудиторных занятий, некоторые из которых явно неэффективны. Отдельно было высказано мнение иностранных

студентов об имеющихся резервах по поддержке со стороны администрации вузов.

Представленную картину дополняет и расширяет экспертный опрос. Более половины экспертов определяют роль российской высшей школы в современном социально-политическом процессе как низкую (54,2%) и скорее низкую, чем высокую (22,7%), часть опрошенных считает такую роль скорее высокой, чем низкой (12,1%) и высокой (7,2%), затруднились ответить (3,8%).

Большинство экспертов указали на серьезное ведомственное давление на высшую школу (78,3%), часто приобретающее облик бюрократического произвола (20,1%).

Эксперты полагают, что в современных условиях российская высшая школа выполняет следующие функции: удовлетворение потребности личности и общества в профессиональных образовательных услугах, профессиональная социализация (подготовка квалифицированных работников, способных обеспечить все потребности экономической и социальной сфер жизнедеятельности общества, профессиональное определение личности), воспроизводство социальной структуры, передачу накопленного в обществе социокультурного опыта всем его членам, просветительство, проведение научных исследований, воспитание.

Треть респондентов считают, что текущее развитие конкурентоспособной высшей школы в России и государственная образовательная политика вполне эффективны, другая треть полагает, что это не так; около 10% усматривают негативные тенденции, связанные с утратой национальных традиций в высшем образовании, снижением социального статуса преподавателей, массовым оттоком наиболее успешных выпускников за рубеж.

Основными проблемами современной российской высшей школы были названы: 32,1% – отход от национальных традиций высшего образования и отказ от прошлого опыта; 24,9% – вхождение в Болонскую систему; 15,4% – давление правительства и государственной бюрократии; 12,8% – отъезд выпускников в другие страны; 8,6% – слабое финансирование; 4% – несоответствие требованиям Болонской системы; 2,2% – затруднились ответить.

К числу сохраняющихся (хотя и постепенно утрачиваемых) преимуществ российского высшего образования опрошенные отнесли фундаментальность подготовки, относительно низкую стоимость (в сравнении с вузами Западной Европы и США), значительный опыт и потенциал по обучению направлениям естественных наук и массовым специальностям (врачей, инженеров и др.).

Ряд особенностей государственной политики в сфере высшего образования России отмечается в исследованиях Журавлевой Л.А., Костина Н.Б., Дуран Т.В., Костиной Л.В., Трофимова К.В. [Журавлева, 2016; Костина, Дуран, 2016; Трофимов, 2017; Шестопалова, 2016].

Обсуждение. Рассмотрение итогов исследования и формулирование выводов наталкивается на трудность, которую непросто обойти, – разрыв между классическим видением университетского образования и неуклонной коммерциализацией высшей школы.

Авторы исходят из тезиса В. Гумбольдта о том, что «высшее учебное заведение – не что иное, как духовная жизнь людей, которых досуг или внутреннее стремление приводят к науке и исследованиям» [Гумбольдт, 2000, с. 24]. В такой организации профессора, преподаватели, научные сотрудники, студенты сообща служат обществу и науке, вносят вклад в научный прогресс согласно провозглашенным Р. Мертоном принципам универсализма, коллективизма, бескорыстности и организованного скептицизма [Merton, 1973]. Однако современные реалии размыли представления о традиционной миссии университета и способствовали переходу к иной парадигме – «академическому капитализму».

Создатели концепции «академического капитализма» Ш. Слотер и Л. Лесли рассматривают вузы как активно конкурирующие на рынке коммерческие компании, специализирующиеся на оказании платных образовательных услуг, продаже результатов исследований и разработок (лицензий, патентов), создании малых предприятий, привлечении грантов, пожертвований, заключении торговых контрактов [RhoadesG., Slaughter, 1997; SlaughterS., LeslieL., 2003]. Б. Кларк предложил называть такие структуры «предпринимательскими университетами» [Clark, 2000, p. 10].

Вследствие экспансии «академического капитализма» с его требованиями финансово-экономической эффективности трансформируются состав и структура университетского управления путем передачи полномочий менеджерам технократического толка. На это указывает, например, Д. Роджеро, анализируя реалии итальянских университетов, которые сейчас стали очень похожи на коммерческие корпорации [Роджеро, 2011, с. 88].

Автор статьи разделяет опасения Д. Диксона и др., кто подчеркивает, что упор на извлечение прибыли неизбежно приводит к тому, что университеты изменяют своей изначально ориентированной на общественный прогресс и бескорыстный поиск нового знания (классической) стратегии развития и встают на службу обладателям

крупного капитала и их экономическим потребностям [Dicson, 1998, p. 17].

Кроме того, цифровизация капиталистического общества ведет к ограничению доступа к информации, усилению информационного контроля, нарастанию разного рода манипуляций информацией в интересах правительств и корпораций [Кастельс, 2004; Шиллер, 1980], вследствие чего сокращается публичное пространство и сужается область доступной и достоверной информации [Хабермас, 2000].

Разрешением сложившегося противоречия между традиционным видением университета и капиталистической экспансией может стать конструктивное совмещение интересов общества и науки и общей тенденции коммерциализации. Удачный пример этому дает О. Юлийоки, который убедительно показывает, как в ряде вузов Финляндии продуктивно сосуществуют традиционные ценности, общественно значимые практики, идеалы и нормы науки и рыночная ориентация [Ylijoki, 2003].

Стоит добавить, что указанный путь будет способствовать и демократизации России с учетом ее специфики [Яковлев, 2013, с. 218].

Заключение. На основе изложенного можно сделать вывод о том, что основными особенностями российской государственной политики высшего образования в современных условиях являются: ведомственный характер, недоработанность проектов в сфере высшего образования (наподобие «компетентностного подхода»), утрата национальных традиций (фундаментальности, специалитета и др.), необходимость выполнения требований Болонского соглашения, снижение статуса высшей школы, ставка на финансово-экономическую эффективность и наукометрию.

Зарубежный опыт совмещения тенденций академического капитализма и классической университетской традиции целесообразно осуществлять в России. Вместе с тем, на российскую высшую школу влияет ряд факторов, которые, как полагают авторы, прямо коррелируют со спецификой развития ее потенциала.

Речь идет, во-первых, о том, что в настоящее время наблюдается, видимо, беспрецедентное падение международного престижа России, связанное с известными политическими, экономическими и другими обстоятельствами.

Во-вторых, Российское государство, пожалуй, впервые с имперских времен Петра I и Елизаветы Петровны, практически полностью уподобила свою систему высшего образования зарубежным схемам – согласно Болонскому соглашению и другим моделям, разработанным в странах Запада.

Далеко на задний план оказались отодвинуты результаты трудной и долгой разработки оптимальной системы высшего образования в России, которая велась умнейшими представителями российского народа в целях национального развития. Вследствие этого происходит утрата национальных традиций (фундаментальности, специалитета и др.) в сфере образования, которые на протяжении длительного периода являлись отличительными особенностями и конкурентными преимуществами российской высшей школы во всем мире.

В связи с изложенным на передний план вновь выдвигается задача выработки отечественной формы и содержания системы высшей школы, которая, как это было раньше, отражала бы уникальные достижения культуры нашего общества на протяжении всего его истории. Это можно делать и в Болонском формате.

И только в фарватере такого подхода можно разрабатывать эффективную стратегию развития российского высшего образования – такую стратегию, которая позволила бы наполнить Болонскую форму отечественным содержанием, включающим сумму достижений и традиций российской высшей школы и учитывающей реалии «академического капитализма» и цифровизации. Здесь стоит обратиться к положениям, которые применительно к образованию сформулировали Н.А. Бердяев, С.Н. Булгаков, М.О. Гершензон, С.Л. Франк и др. [Вехи, 1991].

На основе этих соображений и результатов исследований предлагается следующая модель эффективной государственной политики в сфере российского высшего образования: развитие электронного обучения (позволяющего избежать проблем с адаптацией иностранцев) в виде коротких модульных программ с упором на практические навыки, востребованные в ежедневной работе на базе традиционных университетов. Движущими силами, конкурентными преимуществами и особенностями развития данной модели являются учет советского опыта обучения иностранных студентов, фундаментальность подготовки, относительно низкая стоимость услуг, ориентация на обучение по направлениям естественных наук (математика, физика, биология и др.) и массовым специальностям (врачи, инженеры и т.д.) студентов из Китая, Индии, стран Средней Азии и Ближнего Востока (впоследствии и Южной Америки).

Представляется, что основанная на этих особенностях и модели стратегия вполне может стать экономически эффективной в современных условиях.

Библиографический список

1. Вехи. Интеллигенция в России. М. : Молодая гвардия, 1991. 462 с.
2. Гумбольдт В. О внутренней и внешней организации высших научных учреждений в Берлине // Современные стратегии культурологических исследований: сборник. М. : РГГУ, 2000. С. 68-83.
3. Журавлева Л.А. Перспективные направления развития государственной образовательной политики в России // Среднерусский вестник общественных наук. 2016. № 1. Т. 11. С. 118-125.
4. Кастельс М. Галактика Интернет: Размышления об Интернете, бизнесе и обществе, У-фактория, Екатеринбург, 2004. 328 с.
5. Костина Н.Б., Дуран Т.В. Государственные стратегии в сфере высшего образования: содержание, виды, субъекты // Вопросы управления. 2016. № 3. С.124-132.
6. Кузнецова Л.В. Социально-проектная деятельность в сфере государственной образовательной политики в российской федерации // Вестник государственного и муниципального управления. 2016. № 1. Т. 5. С. 49-52.
7. Махов А.А., Усманова А.Т. Роль университета XXI века в формировании человеческого капитала // Педагогика и психология: актуальные проблемы исследований на современном этапе: Сборник материалов 1-й международной науч.-практ. конф., 1 марта 2013 г./ НИЦ "Апробация" – М.: Изд-во Перо, 2013.-192 с.; С. 75-83.
8. Ридингс Б. Университет в руинах. М.: Изд. дом ВШЭ, 2010. 304 с.
9. Роджеро Д. Из руин в кризис: об основных трендах в жизни глобального университета // Неприкосновенный запас, 2011. № 3. С. 88-102.
10. Трофимов К.В. Политологический анализ государственной образовательной политики России: теоретико-методологические подходы // Вестник Забайкальского государственного университета. 2017. № 2. Т. 23. С. 86-94.
11. Хабермас Ю. Моральное сознание и коммуникативное действие. Наука, СПб.: Наука, 2000. 382 с.
12. Шестопалова А.В. Рейтинги вузов как инструмент государственной образовательной политики // Власть. 2016. № 9. С. 62-71.
13. Шиллер Г. Манипуляторы сознанием. М.: Мысль, 1980. 326 с.
14. Яковлев М.В. Российская демократия: особенности концепта // Исторические, философские, политические и юридические науки, культурология и искусствоведение. Вопросы теории и практики. 2013. № 1-2 (27). С. 216-218.
15. Clark B. Collegial Entrepreneurialism in Proactive Universities: Lessons from Europe // Change. 2000. Vol. 32. № 1. Pp. 10-19.

16. Dickson D. The new politics of science. University of Chicago press, 1988. 404 p.

17. Merton R. The Sociology of Science. Chicago: Chicago University Press, 1973. 606 p.

18. Rhoades G., Slaughter, S. Academic Capitalism, Managed Professionals, and Supply-Side Higher Education // Social Text. 1997. № 51. Pp. 9-38.

19. Slaughter, S., Leslie, L. Academic Capitalism: Politics, Policies and the Entrepreneurial University. Johns Hopkins University Press, 1997. 276 p.

20. Ylijoki O.-H. Entangled in Academic Capitalism? A Case-study on Changing Ideals and Practices of University // Higher Education. 2003. 45(3). P. 307-335.

Аннотация. В статье на материалах авторских исследований при помощи системного, неоинституционального, исторического, сравнительного анализа, определяется и критически осмысливается проблематика и специфика российской государственной политики в сфере высшего образования в условиях академического капитализма, цифровизации, интернационализации, формулируется модель эффективного развития российской высшей школы в современных условиях. Делаются выводы о том, что необходимо искать возможности и внедрять способы конструктивного совмещения ориентированной на интересы общества и науки классической университетской стратегии и принципов «академического капитализма»; необходима выработка в рамках Болонской модели отечественной формы и содержания системы высшей школы, которая отражала бы уникальные достижения культуры нашего общества. В этом направлении перспективным представляется расширение электронного обучения в виде коротких модульных программ с упором на практические навыки, востребованные в ежедневной работе на базе традиционных университетов.

Движущими силами, конкурентными преимуществами и особенностями развития данной модели являются учет прошлого (советского) опыта обучения иностранных студентов, фундаментальность подготовки, относительно низкая стоимость услуг (в сравнении со странами Запада), ориентация на обучение по направлениям естественных наук и массовым специальностям студентов из Китая, Индии, стран Средней Азии и Ближнего Востока, Южной Америки.

Для усиления конкурентных преимуществ российской системы высшего образования на международном уровне предлагается использовать теоретические и практические разработки вопросов содержания и формы образования виднейших российских исследователей (Н.А. Бердяев, С.Н. Булгаков, М.О. Гершензон, С.Л. Франк и др.).

Ключевые слова: «академический капитализм», высшее образование, государственная политика, интернационализация, образовательные услуги, цифровизация.

FEATURES OF THE RUSSIAN STATE POLICY IN THE SPHERE HIGHER EDUCATION IN MODERN CONDITIONS

Emil Burangulov

PhD in Political Science, Ufa State Petroleum Technological University

In article on materials of investigations using a systematic, neo-institutional, historical, and comparative analysis, defines and critically analyzes the issues and the specifics of Russian state policy in the sphere of higher education in terms of academic capitalism, of digitalization, internationalization, formulated a model of efficient development of the potential of Russian higher education in modern conditions.

Conclusions are made about the need to look for opportunities and ways to implement constructive alignment-oriented society and science classical University strategy and principles of "academic capitalism"; it is necessary to develop in the framework of the Bologna model of domestic form and content of the higher school system that reflects the unique cultural achievements of our society. In this direction,

It is promising to expand e-learning in the form of short modular programs with an emphasis on practical skills, that are in demand in daily work on the basis of traditional universities. The driving forces, competitive advantages and features of the development of this model are taking into account the past (Soviet) experience of teaching foreign students, the fundamental nature of training, the relatively low cost of services (in comparison with Western countries), the focus on training in the areas of natural sciences and mass specialties of students from China, India, Central Asia and the Middle East, South America.

To strengthen the competitive advantages of the Russian higher education system at the international level, it is proposed to use theoretical and practical developments of the content and form of education of the most prominent Russian researchers (N. A. Berdyaev, S. N. Bulgakov, M. O. Gershenzon, S. L. Frank, etc.).

Keywords: “academic capitalism”, educational services, digitalization, higher education, internationalization, state policy.

**ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ ՌՈՒՍԱՍՏԱՆԻ
ՊԵՏԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՆԵՐԿԱՅԻՄ
ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

Էմիլ Բուրանգուլով
քաղաքական գիտությունների թեկնածու, Ուֆայի
նավթամթերքների պետական տեխնիկական համալսարան

Հոդվածում հեղինակային հետազոտության նյութերի հիման վրա համակարգված, նոր ինստիտուցիոնալ, պատմական, համեմատական վերլուծության, ակադեմիական կապիտալիզմի, թվայնացման, միջազգայնացման համատեքստում որոշվում է բարձրագույն կրթության ոլորտում Ռուսաստանի պետական քաղաքականության առանձնահատկությունը և քննադատորեն մեկնաբանվում է, որ ձևակերպված է ժամանակակից պայմաններում Ռուսաստանի բարձրագույն կրթության արդյունավետ զարգացման մոդել: Առաջարկություններ են արվում, որ անհրաժեշտ է փնտրել հնարավորություններ և ներկայացնել հասարակության և գիտության շահերին ուղղված «համալսարանական կապիտալիզմի» սկզբունքներին միտված դասական համալսարանական ռազմավարությունը կառուցողականորեն համատեղելու ուղիներ: Անհրաժեշտ է համարվում Բոլոնիայի մոդելի շրջանակներում զարգացնել բարձրագույն կրթության համակարգի կենցաղային ձև և բովանդակություն, որը կարտացոլի մեր հասարակության մշակույթի եզակի նվաճումները: Այս ուղղությամբ հեռանկարային է թվում ընդլայնել էլեկտրոնային ուսուցումը կարճ մոդուլային ծրագրերի տեսքով՝ շեշտը դնելով գործնական հմտությունների վրա, որոնք պահանջարկ ունեն ամենօրյա աշխատանքում:

Հիմնադր. «ակադեմիական կապիտալիզմ», բարձրագույն կրթություն, պետական քաղաքականություն, միջազգայնացում, կրթական ծառայություններ, թվայնացում

Ներկայացվել է՝ 02.04.2021 թ.

Ընդունվել է՝ 04.05.2021 թ.

ՄԱՐԴՈՒ ՀԻՄՆԱԽՆԴՐԻ ՀԵԳԵԼՅԱՆ ԸՄԲՈՒՆՈՒՄԸ

Գրիգոր Ասատրյան

փիլիսոփայական գիտությունների դոկտոր, Հյուսիսային
համալսարանegorovicgrigorij@gmail.com

«Մարդը չի դառնա բնության տերը, քանի
դեռ նա չի դարձել իր իսկ տերը»:
Հեգել¹

Գերմանական դասական փիլիսոփայության հումանիստական միտումներին հավատարիմ՝ Հեգելն իր փիլիսոփայական համակարգում բացառիկ տեղ է հատկացնում մարդու հիմնախնդրին: Չափազանցություն չի լինի ասել, որ այդ հիմնախնդիրը, որպես յուրահատուկ լայնմտիվ, անցնում է նրա ամբողջ փիլիսոփայության միջով:

Թեև իդեալիստական հիմքի վրա՝ Հեգելն ստեղծել է մարդու և մարդկային հասարակության մասին ինքնատիպ ու հարուստ ուսմունք, որի միջուկը մարդու ռացիոնալիստական ըմբռնումն է:

Հեգելն, առաջին անգամ ամբողջ բնական, պատմական ու հոգևոր աշխարհը ներկայացնելով որպես գործընթաց, այդ ընդհանուր մեթոդաբանական դիրքերից էլ մոտեցավ մարդու հիմնախնդրի քննությանը:

Համաշխարհային ոգին համարելով բնական գորավոր ուժ և աշխարհի սկիզբ՝ նա մարդուն դիտում է որպես այդ ոգու զարգացման երրորդ՝ բարձրագույն աստիճան: Նա գտնում է, որ մարդուն՝ որպես բնական էակի, սոցիալ-պատմական գործընթացում վերապահված է բացառիկ դեր: Այդ գործընթացում, որն իրականանում է որպես մարդկանց համատեղ գործունեություն, տեղի է ունենում մարդու հոգևոր էության առարկայացումը, և ստեղծվում է շրջապատող աշխարհը, որի և՛ արարիչը, և՛ արգասիքը ինքը մարդն է:

Հնարավորության և իրականության փոխհարաբերության հարցի լուծումը հոգուտ իրականի տարածելով մարդու էության ըմբռնման վրա և սկզբունքային քննադատության ենթարկելով «սուբյեկտիվության կեղծ սնապարծությունը», մարդու էությունը որոշելիս ուշադրության կենտրոնը նրա ներքնաշխարհը տեղափոխելու ռոմանտիկական միտումները՝ Հեգելը գտնում էր, որ մարդուն պետք է ճանաչել ոչ թե ըստ այն բանի, թե ինչ հնարավորություններ են թաքնված նրա ներքնաշխարհում, թե նա ինչ է իրենից ներկայացնում որպես **հնարավորություն**, այլ այն բանով, թե նա ինչպես է իրեն դրսևորում առարկայորեն, ինչպիսին են նրա գործերն ու արարքները, ինչպիսին է նրա **իրականությունը, առկա կեցությունը**: «Ինչ որ մարդն անում է, նա

¹ Гегель, Лекции по истории философии, М., 2018, стр. 255.

այնպիսին է,- գրում է նա այդ կապակցությամբ,- և կեղծ սնապարծությանը, որը զվարճանում է իր ներքին բնավորության առավելության գիտակցությամբ, մենք պետք է հակադրենք ավետարանական ասույթը՝ «ճանաչեցեք նրանց իրենց սեփական պտուղներով»²:

Հեգելը կռահեց աշխատանքի դերը մարդու ծագման, նրա ընդունակությունների զարգացման գործում՝ այն համարելով մարդու առաջացման հիմնական գործոնը³: Հետաքրքիր է, որ Մարքսը հեգելյան «Ոգու ֆենոմենոլոգիայի» ամենամեծ արժանիքը տեսնում էր այն բանի մեջ, որ հեղինակն այնտեղ «ըմբռնում է աշխատանքի էությունը», մարդուն դիտում «որպես իր սեփական աշխատանքի արդյունք»⁴:

Սակայն Հեգելը միաժամանակ նկատում էր այն մեծ հակասությունը, որ գոյություն ունի աշխատանքի էության և այն ձևի միջև, որով այն իրեն դրսևորում է իր ժամանակակից հասարակարգում: Նա գտնում էր, որ բուրժուական հասարակության պայմաններում աշխատանքը, զարգացնելով մարդու ընդունակությունները՝ բանականությունը, ուշադրությունը, հիշողությունը և այլն, միաժամանակ նրան զրկում է ազատությունից և նախաձեռնությունից: Մարդկային անհատի զարգացման վրա բացասաբար է անդրադառնում հատկապես աշխատանքի կապիտալիստական բաժանումը, որը ոչ այնքան զարգացնում, որքան խեղում է մարդուն:

Հեգելի մոտ մարդու պրոբլեմի հետ սերտորեն առնչվում է «օտարման» (Entäusserung, Entfremdung) հասկացությունը, որը նրա ամբողջ փիլիսոփայության և հատկապես «Ոգու ֆենոմենոլոգիայի»⁵ կենտրոնական կատեգորիան է: «Օտարում» հասկացությունն առհասարակ նա օգտագործում է երեք իմաստով, այն է՝

1. որպես ամեն մի առարկայականության առաջացում ոգուց, այսինքն՝ ոգու կողմից բնության և հասարակության արարում (առարկայացում),

2. սուբյեկտի և օբյեկտի միջև ամեն մի բարդ հարաբերություն կամ մարդու ամեն մի նպատակահարմար գործունեություն, ամեն մի աշխատանք,

3. մարդկանց կողմից իրենց սեփական գործունեության արդյունքների աղավաղված ընկալում:

² Гегель, Соч., т. 1, М.-Л., 1929, стр. 238.

³ См. у Гегель Соч., т. 7, М.-Л., 1934, стр. 221-223:

⁴ См. у Маркс К. и Энгельс Ф. Из ранних произведений, Москва, 1956, стр. 627:

⁵ «Ոգու ֆենոմենոլոգիան», որտեղ Հեգելն ազատվում է Շելլինգի ազդեցությունից, Մարքսն անվանել է «Հեգելյան փիլիսոփայության իսկական ակունքը և զաղտնիքը» (Маркс К. и Энгельс Ф. Из ранних произведений, стр. 624):

Հանգամանքների բերումով՝ մարդու ձեռքերով ստեղծված նյութական ու հոգևոր արժեքների ամբողջ աշխարհը, հարստությունը, պետությունը, արվեստի ստեղծագործությունները և այլն հանդես են գալիս որպես մարդու էական ուժերի օտարում, առարկայացում: Իրական պատմությունն էլ այս դեպքում դրսևորվում է որպես մարդկային օտարված գործունեության արդյունք: Դրա հետ մեկտեղ՝ մարդկանց կողմից իրենց սեփական գործունեության արդյունքների աղավաղված ընկալման հետևանքով այդ արդյունքները մարդկանց ներկայանում են որպես նրանց ինչ-որ խորթ ու օտար ուժեր, որոնք ապրում են ինքնուրույն կյանքով և իշխում են մարդկանց վրա: Այս վերջին իմաստով օտարումը կազմում է բուրժուական հասարակության մեջ մարդկանց հարաբերությունների առանձնահատկությունը:

Զարգացած փոխանակային հարաբերությունների պայմաններում, ըստ Հեգելի, մարդու գործունեության յուրաքանչյուր արդյունք անխուսափելի բախման մեջ է իր ստեղծողի հետ: Ինքը՝ այդ արդյունքը ստեղծողի գործունեությունը, դառնում է օտարված գործունեություն. նա մի կողմից հանդես է գալիս իբրև այդ արդյունքը ստեղծողի կենսական ուժերի դրսևորում, մյուս կողմից՝ իբրև դրանց օտարում հոգուտ նրա, ով դառնում է այդ արդյունքի սեփականատերը: Այլ կերպ ասած՝ մարդու գործունեությունը մի կողմից նրա էության դրսևորումն է, իսկ մյուս կողմից՝ այդ էությանը թշնամական գործունեություն:

Նրան խորապես մտահոգում էր կապիտալիզմի պայմաններում մարդկանց հարաբերությունների անհատապաշտական բնույթը, անհատի ու հասարակության, անձնական ու հասարակական շահերի միջև եղած խոր հակասությունը, այն, որ այստեղ «յուրաքանչյուրն ինքն իր համար նպատակ է, մյուս բոլորը նրա համար՝ ոչինչ»⁶: Հասարակության մեջ «ընդհանուր շահը», ըստ նրա, ինքնուրույն ուժ է, որը կախված չէ այդ հասարակությունը կազմող անհատների մասնավոր շահերից:

Հեգելը նկատեց նաև բուրժուական հասարակության հակասությունները՝ աղքատության ու հարստության բևեռացումը, մարդկանց միակողմանի զարգացումն աշխատանքի բաժանման հետևանքով:

Նա բացահայտեց նաև այն հակասությունը, որ գոյություն ունի պետության բուն կոչման և հասարակական կյանքում դրա իրական դրսևորման միջև. «...*պետության* բարոյական *իշխանությունը որպես ինքն իրեն ճանաչող գործողության շարժում* իր հակադրությունն ունի բարոյականության *պարզ ու անմիջական էության մեջ*. որպես *իրական համընդհանրություն* նա բոնություն է անհատական իր - համար - կեցության նկատմամբ, իսկ որպես իրականություն ընդհանրապես նա իր

⁶ Гегель, Соч., т. 7, стр. 211.

ներքին եության մեջ ունի մեկ այլ բան ևս, քան ինքն է»⁷:

Վերլուծելով իր ժամանակի քաղաքացիական հասարակության հակասությունները՝ Հեգելը հանգում է այն եզրակացության, որ այստեղ հարստության ավելացման հետ զուգընթաց տեղի է ունենում թշվառության ու ընչազրկության աճ, այն մարդկանց մտավոր աղքատացում, որոնք ստեղծում են այդ հարստությունը⁸:

Քաղաքացիական հասարակությունը համարելով հակասական երևույթ՝ նա փորձում էր գտնել այդ հակասության լուծումը:

Պետական իրավական հարաբերությունների բյուրոկրատացումը, ինչպես նաև բարոյական հարաբերությունների ֆորմալականացումը մարդկային բոլոր կապերի վրա դնում են դիմագրկության ու անազատության դրոշմ: Իր հերթին աշխատանքի օտարումը նրան զրկում է ստեղծագործական բնույթից: Այդ օտարումը, ձեռք բերելով համընդհանուր բնույթ, ընդգրկում է մարդկային գործունեության բոլոր ոլորտները: Այսպիսով, ըստ Հեգելի, իրենց ամբողջության մեջ բուրժուական կարգերի, կենսակերպի և մարդկային բոլոր կապերի գորշությունը ձեռք է բերում գլոբալ, համընդգրկող բնույթ:

Մարդկային գործունեության նման վերլուծությունը Հեգելին բերում է այն համոզման, որ թեև հասարակական ամբողջ իրականությունը մարդկային գործունեության արդյունք է, սակայն ինքը՝ այդ գործունեությունը, ենթարկված է այնպիսի օրենքների, որոնք կախում չունեն մարդկանցից: Մյուս կողմից՝ նա տեսնում էր, որ մարդկանց գործունեության այդ արդյունքները, նրանց կողմից կյանքի կոչված իրերի աշխարհը, չի կարելի դիտել որպես մարդկային գործունեությունից բոլորովին անկախ, առավել ևս, նրա նկատմամբ առաջնային ինչ-որ բան, քանի որ իրերի այդ ամբողջ աշխարհը ստեղծված է մարդկանց կողմից:

Իրական աշխարհում չկարողանալով գտնել այդ հակասության լուծումը՝ Հեգելը դրա պատճառը, պատմական զարգացման աղբյուրը, նրա շարժիչ ուժը սկսեց որոնել իրական աշխարհից դուրս գտնվող ինչ-որ «ուրիշ բանի» մեջ, որին պետք է ենթարկված լինեին ինչպես մարդու գործունեությունը, այնպես էլ նրա միջոցով կյանքի կոչված «օտարված աշխարհի» ամբողջ շարժումը: Այդ «ուրիշը» նրա մոտ հանդես եկավ որպես «օբյեկտիվ ոգի», որի ներմուծումը մարդկային հասարակության պատմության տեսական ըմբռնման բնագավառը հանգեցրեց պատմական շարժման պատճառների իդեալիստական մեկնաբանության, դրանց միաստիճիկացման:

Այսպիսով, սկսելով իրական հասարակական հարաբերությունների վերլուծությունից՝ Հեգելը դրանց աղբյուրը տեսավ անիրական ու աննյութական բացարձակ ոգու մեջ: Իրական հարաբերությունները

⁷ Гегель, Соч., т. 4, М., 1959, стр. 237.

⁸ См. у Гегель, Соч., т. 7, стр. 254-255:

գլխավայր շրջվեցին, պատմական շարժման մտային արտացոլումները ներկայացան իբրև այդ շարժման աղբյուր, նրա շարժիչ ուժ: ««Ֆենոմենոլոգիայում», հեգելյան այս ավետարանում,- գրում է Մարքսն այդ կապակցությամբ,- անհատները նախ վեր են ածվում «գիտակցության», իսկ աշխարհը՝ «առարկայի», որի շնորհիվ կյանքի ու պատմության ամբողջ բազմազանությունը հանգեցվում է «առարկայի» նկատմամբ «գիտակցության» տարբեր հարաբերությունների»⁹:

Մյուս կողմից՝ բուրժուական հասարակության, նոր քաղաքակրթության հեգելյան քննադատությունը չի կարելի դիտել որպես մարդկային հասարակության վերընթաց շարժման, գիտատեխնիկական առաջադիմության անհրաժեշտության ժխտում, անտիկ ժամանակներից կամ ֆեոդալիզմի վերադառնալու կոչ: Աշխատանքի բաժանումը, մեքենաների կիրառումը, գիտական ու տեխնիկական գիտելիքների զարգացումը նա համարում էր առաջադիմական գործընթաց: Դրա հետ մեկտեղ նա ընդգծում էր, որ այդ առաջադիմական շարժումն իր համար ճանապարհ է հարթում հակասական ձևերով և ուղեկցվում է բազմաթիվ կորուստներով: Ջարգացած պետական հարաբերությունները և իրավակարգը նա նույնպես համարում է դրական ձեռքբերում, սակայն միաժամանակ գտնում, որ դրանք իրենց հետ բերում են մարդկային կախվածության նոր ձևեր, անհատական ամբողջականության ու ինքնուրույնության կորուստ:

Հատկանշական է, որ մարդու հիմնախնդիրը, հասարակության սոցիալ-քաղաքական կյանքի, մարդկային գործունեության հարցերը Հեգելը հատուկ քննության է առնում իր փիլիսոփայական համակարգի եզրափակիչ մասի՝ ոգու փիլիսոփայության «Օբյեկտիվ ոգի» բաժնում (որը, ի դեպ, միջակա տեղ է գրավում «Սուբյեկտիվ ոգի» և «Բացարձակ ոգի» բաժինների միջև):

Հեգելի կողմից մարդկանց սոցիալ-պատմական կյանքի զանազան կողմերի ու երևույթների հանգեցումը «օբյեկտիվ ոգու» կարգին նշանակում է այն մտքի միաստիճիկացված արտահայտություն, որ մարդկանց սոցիալական կյանքը ըմբռնվում է որպես գերանհատական ամբողջություն, որը բարձրանում է անհատի կյանքից վեր և իշխում է նրա վրա:

Օբյեկտիվ ոգին, ըստ Հեգելի, օբյեկտիվ օրինաչափություն է, որը վեր է կանգնած առանձին մարդկանցից և դրսևորվում է մարդկանց զանազան կապերի ու հարաբերությունների միջոցով:

Իր զարգացման մեջ օբյեկտիվ ոգին, ըստ Հեգելի, անցնում է երեք աստիճան և ծավալվում է իրավունքի և բարոյականության մեջ. վերջինս իր հերթին ընդգրկում է ընտանիքը, քաղաքացիական հասարակությունը և պետությունը:

⁹ Маркс К. и Энгельс Ф. Соч., т. 3, М., 1955, стр. 140.

Հանդես գալով ընդդեմ Կանտի էթիկական հայեցակարգի հակապատմականության՝ նա ձգտում էր բացահայտել բարոյական սկզբունքների ու կատեգորիաների բովանդակության «բանական լինելը», քանզի ամեն բանական, ըստ նրա, իրական է: Նա ջանում էր կապ հաստատել բարոյական կատեգորիաների և հասարակական կյանքի տարբեր կողմերի միջև: Էթիկական կատեգորիաները, ըստ նրա, իմաստ ու նշանակություն ունեն միայն հասարակության մեջ: Սակայն նա չըմբռնեց բարոյականության դասակարգային բնույթը:

Բարոյականության մասին ուսմունքում Հեգելը քննադատության է ենթարկում բարոյական սուբյեկտիվիզմի զանազան ձևերը, որոնք տանում են դեպի հասարակական կապերի բոլոր տիպերի քայքայում: Բարոյականությունը, ի տարբերություն մորալ հասկացության, վերաբերում է այն բանին, ինչը սուբյեկտիվ հայեցողությունից ու մտադրությունից անցել է արտաքին գոյության:

«Ոգու ֆենոմենոլոգիայում», անդրադառնալով բարոյականության, մարդկային փոխհարաբերությունների, մասնավորապես մերձավորի նկատմամբ սիրո հարցերին և աշխատելով բացահայտել *«սիրիք մերձավորիդ՝ ինչպես ինքդ քեզ»* պատգամի ներքին իմաստը, Հեգելը փիլիսոփայելու իրեն հատուկ ոճով գրում է. «Այն (մերձավորի նկատմամբ սերը - Գ.Ա.) ուղղված է առանձինին՝ դեպի առանձինը նրա հարաբերության մեջ և *հաստատում է այդ հարաբերությունը որպես մի առանձինի հարաբերություն դեպի մյուս առանձինը* կամ որպես զգացմունքի հարաբերություն»¹⁰:

Անդրադառնալով Կանտի «կատեգորիկ իմպերատիվին» և մեկնաբանելով նրա բովանդակությունը՝ Հեգելն այն կարծիքն է հայտնում, որ այդ օրենքն անհրաժեշտ չափով օժտված չէ համընդհանուր բովանդակությամբ և չի արտահայտում, ինչպես որ պատշաճ է բացարձակ բարոյական օրենքին, որն է այնպիսի բան, որը կա «իր մեջ» և «իր համար»: Նման տիպի օրենքները, եզրակացնում է փիլիսոփան, լրվում, մնում են զուտ *անհրաժեշտության* ոլորտում, սակայն օժտված չեն *իրականությամբ*. դրանք *օրենքներ* չեն, այլ լոկ *պատգամներ*:

«Բարոյական էությունն ինքն անմիջական բովանդակություն չէ, այլ միայն չափանիշ, որը որոշում է՝ թե ընդունակ է, արդյոք, որոշ բովանդակություն՝ լինել օրենք, թե՞ ոչ, երբ այն չի հակասում ինքն իրեն: Օրենքներ թելադրող բանականությունը իջեցված է մինչև միայն *ստուգող* բանականության աստիճանի»¹¹:

Պետության մասին ուսմունքում առավել պարզորոշ է երևան գալիս Հեգելի դասակարգային սահմանափակությունը, նրա սոցիալական տեսության կոմպրոմիսային բնույթը: Նա կտրականապես հանդես էր

¹⁰ Гегель Соч., т. 4, стр. 226.

¹¹ Տե՛ս նույն տեղում, էջ 226-227:

գալիս պետության այն բացատրության դեմ, որը հիմնված է բնական իրավունքի տեսության վրա: Պետությունը, ըստ նրա, ստեղծված է ամենևին ոչ այն բանի համար, որ պաշտպանի անհատի ազատությունն ու սեփականությունը: Պետությունը միջոց չէ, այլ նպատակ իր մեջ: «Պետության գոյությունը,- գրում է նա,- դա աստծո երթն է աշխարհում»¹²: Պետության գաղափարը, ըստ Հեգելի, իրացվում է պետական կարգի մեջ, միմյանց նկատմամբ պետությունների հարաբերություններում և համաշխարհային պատմության նկատմամբ վերջիններիս հարաբերություններում: Պետական կարգի լավագույն ձև Հեգելը հռչակեց սահմանադրական միապետությունը:

Իրավունքը, ըստ Հեգելի, ազատության առկա կեցությունն է: Նրա կարծիքով մասնավոր սեփականությունը անհատի միակ էական բնորոշումն է: Նա չափազանց բարձր էր գնահատում Ֆրանսիական մեծ հեղափոխությունը, նրա ժամանակակից ոգին ու ազատարար շունչը և այն ընդունեց հսկայական խանդավառությամբ: «Իրավունքի միտքը, նրա գաղափարը,- գրում է նա այդ հեղափոխության մասին,- *միանգամից* ճանաչման իրավունք նվաճեց, և անարդարության հնամաշ նեցուկները նրան ոչ մի դիմադրություն ցույց տալ չէին կարող: Իրավունքի միտքը դրվեց սահմանադրության հիմքում, և այժմ ամեն ինչ պետք է այդ մտքի վրա հենվի:

Այն օրից, երբ երկնքում լույս է տալիս արեգակը, և նրա շուրջը պտտվում են մոլորակները, դեռ երբեք տեսնված չէր, որ մարդը գլխի վրա կանգներ, այսինքն՝ հենվեր մտքի վրա և մտքի համաձայն էլ կառուցեր իրականությունը: Անաքսագորասն առաջինն է ասել, որ Նոս-ը, այսինքն՝ բանականությունն է կառավարում աշխարհը, բայց միայն այժմ առաջին անգամ մարդը հասավ այն բանն ընդունելուն, թե միտքը պետք է կառավարի հոգևոր իրականությունը: ... Դա *մի հոյակապ արևածագ էր: Բոլոր մտածող էակները բերկրանքով ողջունեցին նոր դարաշրջանի սկսվելը: Վեհ հրճվանքն էր իշխում այդ ժամանակ, և ամբողջ աշխարհը համակվեց ոգու խանդավառությամբ* (ընդգծումը իմն է – Գ.Ա.), կարծես առաջին անգամ կատարվեց աստվածայինի հաշտեցումը աշխարհի հետ»¹³:

Հեգելի մոտ մարդու պրոբլեմի հետ սերտորեն շաղկապվում է ազատության հարցը, որին նրա պատմության փիլիսոփայության մեջ վերապահված է բացառիկ տեղ:

Առաջին անգամ նա համաշխարհային պատմությունը դիտեց որպես դիալեկտիկական անցումների շղթա, ամբողջական պրոցես և փորձեց խորամուխ լինել պատմական շարժման օրինաչափությունների մեջ: Սակայն պատմության նկատմամբ իդեալիստական մոտեցումը թույլ չտվեց նրան գիտական հիմքի վրա լուծելու այդ հարցը: Պատմական

¹² Տե՛ս Գегель, Соч., т. 7, стр. 268:

¹³ Գегель, Соч., т. 8, М.-Л., 1935, стр. 413-414.

պրոցեսը նա դիտում էր որպես բացարձակ ոգու արշավ, որը, սկիզբ առնելով Արևելքից, գնում է դեպի Արևմուտք՝ իր վախճանը: Մյուս կողմից՝ պատմությունը նրա համար ժամանակի մեջ բացարձակ ոգու զարգացման պրոցես է, որը շարժվում է դեպի որոշակի նպատակ՝ ազատությունը: Համաշխարհային ողջ պատմությունը նա ներկայացնում է որպես առաջընթաց՝ ազատության ըմբռնման մեջ: Պատմության փիլիսոփայության մեջ նա իր առջև խնդիր է դնում թափանցել պատմական իրադարձությունների սուբստանցիոնալ բովանդակության մեջ: Երբ ոգին դուրս է գալիս տվյալ ժողովրդի սահմաններից, ասում է նա, մենք ոտք ենք դնում համաշխարհային պատմության հողը:

Ազատությունը, ըստ Հեգելի, ոչ միայն մարդու ամենանվիրական իդեալն է, այլև նրա կյանքի բուն նպատակը: Մարդը լույս աշխարհ է գալիս ազատության տենչով, սակայն իրականությունը նրան այլ բան է մատուցում: Մանկան առաջին ճիչով, ասում է նա, սկսվում է անհատի հոգու պայքարը ազատության համար՝ հասնելով երիտասարդի իդեալի և իրականության հակասականության գիտակցմանը: Մարդկային ազատությունը, գտնում է նա, երկարատև պայքարի արդյունք է: Մարդը չի ծնվում ազատ, ինչպես կարծում էր Ռուսոն: Նա ազատ է ոչ թե իր բնական, այլ հոգևոր բնույթով: Ազատությունը հնարավոր է դառնում միայն այն ժամանակ, երբ դրա համար ստեղծվում են անհրաժեշտ օբյեկտիվ պայմաններ՝ քաղաքացիական հասարակություն, իրավական պետություն և այլն:

Պատմությունն իր ամբողջության մեջ դիտելով որպես ոգու առաջադիմություն ազատության ըմբռնման ճանապարհին՝ Հեգելը գտնում էր, որ այն ծավալվում է առանձին ժողովուրդների «ոգու» միջոցով, ժողովուրդներ, որոնք պատմական պրոցեսում իրենց առաքելությունը կատարելուց հետո հաջորդափոխում են միմյանց:

Համաշխարհային պատմության նման իդեալիստական ըմբռնումը որոշեց և պատմության հեգելյան պարբերացման իդեալիստական բնույթը: Մարդկության պատմությունը նա բաժանում է չորս շրջանների՝

Արևելյան աշխարհ՝ Չինաստան, Հնդկաստան, Պարսկաստան, Եգիպտոս

Հունական աշխարհ

Հռոմեական աշխարհ

Գերմանական քրիստոնեական աշխարհ:

Ընդ որում Արևելյան աշխարհը նա համարում է մարդկության մանկության ժամանակաշրջան, անտիկ աշխարհը՝ պատանեկության և առնականության (հռոմեացիների մոտ), ռոմանագերմանականը՝ ծերության ժամանակաշրջան¹⁴:

¹⁴ Տե՛ս նույն տեղում, էջ 98-104:

Այնուհետև նա ձեռնամուխ է լինում տարբեր պատմական դարաշրջաններում մարդկային անհատի իրավունքների ու ազատությունների հարցի քննությանը:

Արևելյան աշխարհում, գտնում է նա, մարդիկ պատկերացում չունեն ազատության մասին, ուստի չեն կարող ազատ լինել, այստեղ ազատ է միայն բռնապետը:

Նրա տեսակետից՝ նա՛ մարդու ազատության, նա՛ արվեստի զարգացման առումով պատմականորեն առավել բարենպաստ էր դեմոկրատական անտիկ աշխարհը:

Նա գտնում էր, որ անտիկ աշխարհի դեմոկրատական կարգերը մարդու համար ապահովում էին անկախություն, նախաձեռնություն, բնավորության ամբողջականություն և չէին կաշկանդում նրա անհատականության զարգացումը: Աշխատանքն այստեղ չունեւ օտարված բնույթ, տրոհված չէր բազմապիսի օպերացիաների ու այդ պատճառով կրում էր ստեղծագործական, ոգեշունչ բնույթ: Պետությունն այստեղ տակավին չէր դարձել անդամ և մարդկանցից օտարված ուժ, ճիշտ այդպես էլ իրավական հարաբերությունները ձեռք չէին բերել ֆորմալիզացված տեսք: Անկախությունը և ազատությունը ինքնուրույնություն էին հաղորդում անհատի բոլոր գործողություններին, և նա լիակատար պատասխանատվություն էր կրում իր արարքների ու գործողությունների համար:

Այդ ամենը մարդու անհատականությանը տալիս էր որոշակի ամբողջականություն, զարգացման լրիվություն, իսկ դրա հետ մեկտեղ՝ նաև բանաստեղծականություն ու հոգեկանություն: Մարդը, նրա գործունեության բոլոր դրսևորումները ընձեռում էին բարենպաստ նյութ հոգեկան, գեղարվեստական մարմնավորման համար: Այդ հոգեկան, բանաստեղծական աշխարհին Հեգելը հակադրում է իր ժամանակների պրոզայիկ իրականությունը:

Թեև միայն գերմանական ժողովուրդներն են, ըստ Հեգելի, հասել քրիստոնեական գիտակցության՝ ըմբռնելու, որ նրանց էության հիմնական հատկանիշն ազատությունն է, սակայն այստեղ զարգացած իրավական ու քաղաքական հարաբերությունների պայմաններում անհատը կորցնում է գործողությունների ու նախաձեռնությունների ազատությունը: «Սուբստանցիոնալությունն արդեն միայն այս կամ այն անհատի հատուկ սեփականությունը չէ, այլ գոյություն ունի ինքն իր համար ու համընդհանուր ձևով և անհրաժեշտաբար սեփական զարգացումն է գտել իր բոլոր կողմերի մեջ՝ ընդհուպ մինչև փոքրագույն մանրամասները: Ինչպիսի իրավական, բարոյական օրինաչափ արարքներ էլ որ կատարեն առանձին մարդիկ հանուն ամբողջի շահերի՝ նրանց կամքը և ձեռքբերումները, ինչպես որ նրանք իրենք, միշտ մնում են որպես ամբողջի համեմատ ինչ-որ աննշան, ընդամենը մասնակի օրինակ: Նրանց արարքները եզակի դեպքը իրականացնում են որպես

ինչ-որ բոլորովին մասնակի, այլ ոչ թե համընդհանուր բան այն իմաստով, որ տվյալ արարքը կամ դեպքը դրա շնորհիվ դառնար օրենք կամ երևույթի մեջ հանդես գար որպես օրենք»¹⁵:

Բացարձակ ոգին, ըստ Հեգելի, ինքնաբացահայտվում է երեք ձևերով՝ արվեստի, կրոնի և փիլիսոփայության մեջ: Արվեստի մեջ նա ճանաչում է ինքն իրեն հայեցողության ձևով, կրոնի մեջ՝ պատկերացման ձևով, փիլիսոփայության մեջ՝ հասկացության ձևով:

Հեգելը ազատությունը¹⁶ մեկնաբանում էր որպես հասկացության մեջ ըմբռնված անհրաժեշտություն. «Կույր է անհրաժեշտությունը միայն այնքանով,- գրում է նա,- որքանով նա չի ըմբռնվում հասկացության մեջ...»¹⁷: Ազատությունը, ըստ Հեգելի, ձեռք է բերվում անհրաժեշտության ըմբռնման ճանապարհին:

Սակայն քանի որ Հեգելն անտեսում է նյութական պրակտիկան և հեղափոխական պայքարը, ուստի ազատության նրա մեկնաբանությունը հայեցողականությունից այն կողմ չի անցնում և մնում է լոկ գիտակցության շրջանակներում:

Հեգելի կարծիքով համաշխարհային ոգին իր նպատակներին հասնելու համար որպես միջոց է օգտագործում ժողովուրդներին և անհատներին: Մարդիկ, ըստ նրա, համաշխարհային ոգու գործիքներն են, որոնց միջոցով համաշխարհային ոգին դրսևորում է իր ակտիվ, գործունյա էությունը:

Հեգելը պատմության մեջ առանձնահատուկ դեր է հատկացնում ականավոր անհատներին, որոնք, պատմական անհրաժեշտությունը դարձնելով անձնական նպատակ, իրենց եռանդուն ու հերոսական գործունեությամբ, ըստ էության, իրականացնում են համաշխարհային ոգու առաջադրանքը, նրա կամքը:

Նշանավոր անհատների, պատմական անձնավորությունների միջոցով է, որ մարդիկ գիտակցում են իրենց անելիքները և մասնակից դառնում մեծ նպատակների իրականացմանը:

Մեծ անհատները, համաշխարհային պատմության հերոսները, ինչպես նաև ժողովուրդները, որոնց վիճակված է իրականացնել տվյալ պատմական շարժումը, կատարելով իրենց համաշխարհային-պատմական առաքելությունը, հեռանում են ասպարեզից:

Հեգելի մոտ համաշխարհային-պատմական պրոցեսի մասին դիալեկտիկական կռահումները, սակայն, աղավաղվում են իդեալիստական ելակետային դրույթներով, այն է՝ ամբողջ իրական

¹⁵ Гегель Г.В.Ф. Эстетика, т. 1, М., 1973, стр. 192.

¹⁶ Ազատության կատեգորիայի վերլուծությամբ է ավարտում Հեգելն իր «Տրամաբանության գիտություն» («Wissenschaft der Logik») աշխատության (1812-1816) երկրորդ բաժինը՝ էության մասին ուսմունքը:

¹⁷ Гегель, Соч., т. 1, М.-Л., 1929, стр. 248.

պատմական պրոցեսը ներկայացվում է որպես ոգու շարժում՝ «իր մեջ կեցությունից» դեպի «իր համար կեցություն»:

Նա գտնում էր, որ մեծ մարդկանց գործունեությունը պարունակում է սուբստանցիոնալը պատմական պրոցեսում և պահանջում էր պատմաբաններից բացահայտել նշանավոր անհատների գործունեության օբյեկտիվ բովանդակությունը:

Վերլուծելով *օտարման* կատեգորիան՝ Հեգելը, թեև իդեալիստական հայեցակետից, ըմբռնում է աշխատանքի էությունը, մարդու առարկայական գործունեության մի շարք կարևոր կողմեր, մարդուն և նրա պատմությունը դիտում իբրև նրա սեփական աշխատանքի արդյունք, կռահում պատմական պրոցեսի որոշ ռեալ օրինաչափություններ:

Հեգելի հումանիզմը, սակայն, իր արժանիքներով հանդերձ՝ գերծ չէր նաև թերություններից ու պատմական սահմանափակություններից:

1. Մարդու պրոբլեմի ռացիոնալ ըմբռնման ու մեկնաբանման վրա բացասաբար անդրադարձավ, ամենից առաջ, Հեգելի ընդհանուր իդեալիստական աշխարհայացքը, մտքի կատեգորիաների ու իրականության կապի միստիֆիկացիան, որի հետևանքով «կատեգորիաները նրա մոտ հանդես են գալիս իբրև ինչ-որ նախորդող մի բան, իսկ ռեալ աշխարհի դիալեկտիկան՝ իբրև դրանց հասարակ անդրադարձումը: Իրականում, ընդհակառակն, գլխի դիալեկտիկան ռեալ աշխարհի՝ ինչպես բնության, այնպես էլ պատմության շարժման ձևերի արտացոլումն է միայն»¹⁸:

2. Թեև Հեգելն ըմբռնեց աշխատանքի էությունը, սակայն նա գիտեր և ընդունում էր աշխատանքի միայն մեկ տեսակ, այն է՝ վերացական-հոգևոր աշխատանքը: Եվ այդ պատճառով, չնայած այն բանին, որ նա անհամեմատ բարձր էր կանգնած իր ժամանակակից տնտեսագետներից, սակայն չկարողացավ հաղթահարել նրանց տեսակետի սահմանափակությունը և վերջիններիս հետևելով տեսնում էր աշխատանքի միայն դրական կողմը, իսկ բացասականը՝ ոչ: Նա չնկատեց աշխատանքի բացասական կողմը, այն, որ պատմական զարգացման որոշակի փուլերում աշխատանքը հանդես է գալիս ոչ թե որպես «մարդկային էության ինքնահաստատում», այլ ընդհակառակն, որպես նրա «ինքնաբացասում»:

Այդ հանգամանքը Հեգելի ուշադրությունից վրիպեց ամենից առաջ այն պատճառով, որ նրա համակարգում տարբերություն չէր դրվում «օտարման» և «առարկայացման» միջև: «Ոգու» ամեն մի «առարկայացում» նրա կողմից ընդունվում էր որպես «օտարում», քանզի նա չունեւ դրանց տարբերակման չափանիշներ. նրա համար կարևորն այստեղ այն է, որ թե՛ մեկը և թե՛ մյուսը հակադիր էին «ոգուն» և հանդես էին գալիս որպես նրանից տարբեր և նրան «խորթ» ինչ-որ բան:

¹⁸ Էնգելս Ֆ., Բնության դիալեկտիկա, Երևան, 1969, էջ 204:

3. Մյուս կողմից՝ բուրժուական հասարակության մեջ մարդկային հարաբերությունների ֆետիշային բնույթի մասին Հեգելի կոռուպցիոն, իրենց դրական խոր բովանդակությամբ հանդերձ, ծայրաստիճան մանվածապատ էին ու անորոշ: Կապիտալիստական օտարումը նույնացնելով մարդու գործունեության առարկայացման հետ ընդհանրապես՝ նա կարծում էր, թե այն հնարավոր կլինի վերացնել ապառաքելայացման շնորհիվ, որն իր հերթին կարող է կատարվել իմացության միջոցով: Մնալով օտարված իրականության շրջանակներում՝ Հեգելը չկարողացավ թողնել մտահայեցողական փիլիսոփայության հողը, որպեսզի իրական հիմքի վրա լուծեր սոցիալական իրականության հակասությունները և գտներ դրանց հաղթահարման ճշմարիտ ուղին: Օտարման վրա խաբսխված բուրժուական հասարակությունը նրա կողմից չէր դիտվում որպես պատմական զարգացման անցողիկ փուլ, հասարակական կազմակերպության ավելի բարձր ձևին անցնելու նախադրու, այլ ներկայանում էր որպես հասարակական միակ համապարփակ իրականություն:

4. Դասակարգային սահմանափակության ու պահպանողականության գծեր է կրում նաև միջազգային իրավունքի մասին Հեգելի ուսմունքը: Հանդես գալով Կանտի հավերժական խաղաղության և պետությունների ու ժողովուրդների դաշնության մեջ դրա իրականացման գաղափարի դեմ՝ Հեգելը մերժում էր միջազգային անվտանգության երաշխիքների ստեղծման գաղափարը:

Ավելին՝ նա դրական էր վերաբերվում պատերազմներին, խոսում էր դրանց «բարձր կոչման մասին», որի շնորհիվ իբր «պահպանվում է ժողովուրդների բարոյական առողջությունը», որ հաջող պատերազմները թույլ չեն տալիս «ներքին խռովությունների» զարգացում և «ամրապնդում են պետությունը»¹⁹:

5. Հեգելի հումանիզմի թերություններից է նաև նրա ուսմունքում, հատկապես պատմության տեսության մեջ ազգայնական նախապաշարմունքների առկայությունը՝ քամահրական վերաբերմունքը արևելյան ժողովուրդների նկատմամբ, գերմանական ժողովուրդների փառաբանումը:

6. Պատմական օրինաչափության ըմբռնման ու գնահատման հարցում Հեգելը անհետևողական էր ու հակասական: Մի կողմից՝ նա պաշտպանում էր օբյեկտիվ օրինաչափության գաղափարը, որն իր համար ճանապարհ է հարթում՝ անկախ առանձին անհատների ցանկությունից, մյուս կողմից՝ առաջ քաշում դրա խեղաթյուրված արտացոլումը հանդիսացող այսպես կոչված «համաշխարհային բանականության խորամանկությունների մասին» ուսմունքը, ըստ որի

¹⁹ Տե՛ս Гегель, Соч., т. 7, стр. 334:

համաշխարհային բանականությունն օգտվում է անհատական շահերից ու կրքերից՝ իր նպատակներին հասնելու համար:

7. Հեգելի փիլիսոփայությունը յուրօրինակ ձևով արտացոլում էր Գերմանիայի զարգացման հակասական բնույթը բուրժուական հեղափոխության նախօրյակին, գերմանական բուրժուազիայի երկակի բնույթը, բուրժուազիա, որի գաղափարախոսն էր Հեգելը: Այստեղից էլ՝ մի կողմից նրա փիլիսոփայության առաջադիմական և նույնիսկ հեղափոխական միտումները՝ որպես Գերմանիայում բուրժուական հեղափոխության գաղափարական նախապատրաստության արտահայտություն, իսկ մյուս կողմից՝ պահպանողական և հետադիմական գաղափարները որպես արդյունք գերմանական բուրժուազիայի անհետևողականության ու վախկոտության, ռեակցիոն յունկերության հետ կոմպրոմիսների մեջ մտնելու նրա հակման: Այդ երկվությունն իր արտահայտությունն է գտել նաև մարդու պրոբլեմի նրա մեկնաբանման հարցերում:

Հեգելի աշխարհայացքը, որքան էլ լայն ու ընդգրկուն, վերջին հաշվով իր ապրած պատմական դարաշրջանի արդյունք էր, այդ դարաշրջանի տեսական-փիլիսոփայական ընդհանրացված արտացոլումը: Նրա փիլիսոփայությունը տառապում էր ներքին խոր հակասություններով, որն արտահայտվում էր ամենից առաջ նրա մեթոդի և սիստեմի միջև եղած սուր խզման, առաջադիմականի ու պահպանողականի զուգակցման մեջ:

Սակայն իր հակասականությամբ ու թերություններով հանդերձ՝ մարդու մասին հեգելյան ուսմունքն իր ամբողջության մեջ պատկանում է համաշխարհային փիլիսոփայության ոսկե ֆոնդին և իր արդիականությունը չի կորցրել նաև մեր օրերում:

ԱՄՓՈՓԱԳԻՐ

Հոդվածը նվիրված է մարդու հիմնախնդրի հեգելյան ըմբռնման հետազոտմանը, Հեգելի հումանիստական ժառանգության, նրա բնորոշ առանձնահատկությունների նրա վերլուծությանն ու իմաստավորմանը, այդ ժառանգության արդի իմաստի բացահայտմանը: Հոդվածում քննական անդրադարձ է կատարվել նաև Հեգելի հումանիզմի պատմական սահմանափակություններին ու թերություններին:

Հոդվածը կարող է նպաստել մարդու հիմնախնդրի տարբեր տեսանկյունների ուսումնասիրությանը, այդ հիմնախնդրի առավել ամբողջական հետազոտությանը, նոր հազարամյակի հումանիստական հայեցակարգի մշակմանը:

Հիմնաբառեր. Հեգել, փիլիսոփայություն, մարդու հիմնախնդիր, բացարձակ ոգի, օտարում, ազատությունը որպես իդեալ

ГЕГЕЛЕВСКОЕ ПОНИМАНИЕ ПРОБЛЕМЫ ЧЕЛОВЕКА

Асатрян Григорий

доктор философских наук, Северный университет

Статья посвящена исследованию гегелевского понимания проблемы человека, анализу и осмыслению гуманистического наследия Гегеля и его специфических особенностей, выявлению современного смысла этого наследия. В статье критическому анализу подвергаются также исторические ограниченности и недостатки гуманизма Гегеля.

Статья может способствовать изучению различных аспектов проблемы человека, более целостному ее исследованию, разработке гуманистической концепции нового тысячелетия.

Ключевые слова: Гегель, философия, проблема человека, гуманизм, абсолютный дух, отчуждение, свобода как идеал

HEGEL'S UNDERSTANDING OF HUMAN PROBLEMS

Asatryan Grigory

Doctor of Philosophy, Northern University

The article is devoted to the study of Hegel's understanding of the problem of human, analysis and comprehension of Hegel's humanistic heritage, consideration of the characteristic features of this heritage. The article also critically analyzes the historical limitations and shortcomings of Hegel's humanism.

Keywords: Hegel, philosophy, the problem of man, absolute spirit, alienation, freedom as an ideal.

Ներկայացվել է՝ 09.03.2021 թ.

Ընդունվել է՝ 27.04.2021 թ.

ԱՎԵՏԻՔ ԻՍԱՀԱԿՅԱՆԻ ԿԵՆՏԱՓԻԼՍՈՓԱՅՈՒԹՅՈՒՆԸ

Վալերի Միրզոյան

փիլիսոփայական գիտությունների դոկտոր, ՀՊՏՀ
valerimirzoyan@yahoo.de

Մինչ Ավետիք Իսահակյանի կենսափիլիսոփայության բովանդակային դիտարկումը հնարավոր չէ շրջանցել մի հարց, որն իսահակյանագիտության մեջ երկարատև քննարկումներ է անցել: Դա հայ բանաստեղծի հայացքների և ստեղծագործության վրա Ֆրիդրիխ Նիցշեի ազդեցության խորության գնահատման հարցն է, ընդ որում տեսակետների գունապնակը լայն է. մի եզրում այն հեղինակներն են, որոնք ընդունում են Նիցշեի անցողիկ կամ էլ սոսկ ռճական բնույթի ազդեցությունը, մյուս եզրում գտնվողները հիմնավորվում են ոչ միայն աշխարհայացքի, այլև որոշ ստեղծագործությունների բովանդակային ընդհանրությունը. այս հեղինակների համար հատկապես գայթակղիչ է Ֆ. Նիցշեի «Այսպես խոսեց Ջրադաշտը» և Ավ. Իսահակյանի «Աբու-Լալա Մահարի» ստեղծագործությունների համեմատությունը²⁰:

Հակիրճ շարադրեմ տեսակետս: Ֆրիդրիխ Նիցշեի պես մտքի տիտանը չէր կարող, իհարկե, որոշ ազդեցություն չթողնել Ավետիք Իսահակյանի փիլիսոփայական աշխարհայացքի ձևավորման վրա, մանավանդ Գերմանիայի համալսարաններում սովորելու ընթացքում. վկայությունը՝ «Հիշատակարան»-ում Նիցշեի անվանն ու մտքերին բազմաթիվ անդրադարձները: Այդուհանդերձ, Վարպետն ինքն է վերջակետ դրել այս հարցին՝ բնութագրելով իր գաղափարական զարգացման ընթացքը. նա նշում է, մասնավորապես, իր հափշտակությունը Բուդդայով, Շոպենհաուերով, Նիցշեով, հոռետեսության և անիշխանական փիլիսոփայական ուսմունքներով. «Ինձ ոգևորում էր Նիցշեի բողոքող, ընդվզող ոգին: Տիրող հասարակության կաշկանդումներից մարդուն ձերբազատելու ձգտումն

²⁰ Տե՛ս Լ. Հախվերդյան, Իսահակյանի կյանքն ու գործը, Եր., 1974, Ար. Ինճիկյան, Ավ. Իսահակյան, Եր., 1977, Ալ. Մուշեղյան, Ավետիք Իսահակյան: Վաղ տարիներ. 1875–1898, Մ. Զաքարյան, Իսահակյանի «Հիշատակարանը», Եր., 1999, Ավիկ Իսահակյան, Ավետիք Իսահակյան: Գիտական կենսագրություն, գիրք 1, 1875–1900, Եր., 2000, Յու. Հովսեփյան, Նիցշեի ազդեցությունը Իսահակյանի աշխարհայացքի ձևավորման և ստեղծագործության վրա // «Բանբեր Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի», 2013, № 2, էջ 118–132 :

էի տեսնում նրա մեջ: Բայց ավելի շատ ինձ գրավում էր Նիցշեի լակոնիկ, աֆորիստիկ, կոտ ոճը: Հետո տեսա, որ նրա փիլիսոփայությունը խորթ է իմ հոգուն.... Հերոսների պաշտամունք ես էլ ունեմ, բայց Նիցշեի գերմարդու դաժանությունը չեմ ընդունում: Նիցշեն իմ մեջ արմատ չձգեց. նա դաժանության փիլիսոփան է»²¹:

Համաձայնեմք, որ Ավետիք Իսահակյանն իսկապես սպառնիչ բնութագրել է թե՛ Նիցշեի փիլիսոփայության էության իր ըմբռնումը, և թե՛ գերմանացի մտածողի հետ իր հոգեհարազատության չափը: Այլ բան է «երրորդ կողմի» մեկնաբանությունը: Արդ, մեջբերվածը մեկնաբանել այնպես, թե իբր Իսահակյանը ճշգրիտ չի արտահայտվել, կաշկանդված է եղել, կամ էլ անկեղծ չի եղել²², ըստ իս, բնավ համոզիչ չէ: Հավելեմ ես մի փաստարկ: Ինչպես հայտնի է, Իսահակյանն ինքը համարել է, որ «Ուստա Կարո» վեպն ավելի արժեքավոր է, քան «Աբու-Լալա Մահարի» պոեմը²³, ընդ որում նա նաև ընդունում էր տարածված այն կարծիքը, թե այդ վեպը նման է «Դոն Զիշոտ»-ին: Արդ, հիմք ունե՞նք նաև Միգել Սերվանտեսի ազդեցությունից խոսելու:

Լիովին համաձայնելով, թե հայ հեղինակների աշխարհայացքային և գեղարվեստական զարգացման վրա առհասարակ ամեն տեսակի ազդեցություններ չեն ունեցել «վատ ավանդույթ» է²⁴, միննայն ժամանակ մյուս ծայրահեղությունն էլ, թերևս, չարժե վերածել մեկ այլ ավանդույթի: Ավետիք Իսահակյանը համաշխարհային մակարդակի բանաստեղծ է, բայց՝ նա բնաշխարհիկ հեղինակ է, հայրենաշունչ ստեղծագործող, մինչև ուղնուծուծը հայկական երևույթ, հայկականության ընդոճին արգասիք, և հենց հայկականության հիմքով էլ մեծ մտածողն իր գեղարվեստական և գաղափարական զարգացման ընթացքում յուրացրել, ներքնայնացրել է արտաքին ամեն մի «ազդեցություն»:

Արդ, ինչպես հայտնի է, փիլիսոփայելու սկիզբը զարմանքն է. մարդը զարմանում է, սկսում է փիլիսոփայել (բառի ստույգ, ոչ թե մակերեսային-

²¹ Ար. Ինճիկյան, Ավ. Իսահակյան, էջ 229:

²² Տե՛ս Յու. Հովականյան, Նիցշեի ազդեցությունը Իսահակյանի աշխարհայացքի ձևավորման և ստեղծագործության վրա, էջ 126–127:

²³ Տե՛ս **Ավիկ Իսահակյան**, Կյանքի գիրքը («Ուստա Կարո» վեպի ստեղծագործական պատմությունից) // **Ավ. Իսահակյան**, Ուստա Կարո, Եր., 2000, էջ 289:

²⁴ «Մեր մշակույթի և, հատկապես, գրականագիտության մեջ ձևավորվել է, մեր կարծիքով, մի վատ ավանդույթ, ըստ որի հնարավորինս մերժվում են հայ հեղինակների և մշակույթի կրած ազդեցությունները, մանավանդ, եթե խոսքը օտար հեղինակների ազդեցությունների մասին է՝ անկախ նրանց մեծությունից: Այդ ավանդույթին հարազատ են մնում նաև իսահակյանագետները» (Յու. Հովականյան, Նիցշեի ազդեցությունը Իսահակյանի աշխարհայացքի ձևավորման և ստեղծագործության վրա, էջ 122):

գոեհկացված իմաստով) հիմնականում անսպասելի, անսովոր պատկերի բախվելիս, իմացական կամ զգայական աններդաշնակության պահեր ապրելիս: Ահավասիկ, երբ տողերիս հեղինակին հարկ է լինում ուսանողներին բացատրելու, թե ի՞նչ է «փիլիսոփայությունը» և ի՞նչ է նշանակում «փիլիսոփայել», ապա լավագույն սկիզբը Ավետիք Իսահակյանի հետևյալ քայական է լինում.

*«Տիեզերքն այս անսահման
Իր ծանրությամբ ահագին
Կախված է սոսկ մի մագից,
Եվ այդ մագն է իմ հոգին»²⁵:*

Համեմատենք «փիլիսոփայության» ընդունված սահմանման հետ՝ «գիտություն բնության, հասարակության և մարդկային մտածողության առավել ընդհանուր օրենքների մասին». սա սխալ սահմանում չէ, իհարկե, բայց չի զարմացնում, չի հուզում, չի ցնցում՝ ի տարբերություն մեջբերված քայակի: Եվ նկատի ունենանք, որ 1932 թ. գրված այդ խորախորհուրդ քայակը միակը չէ Ավ. Իսահակյանի հայացքների աշխարհում: Այնպես որ, թեպետ, ի տարբերություն Հովհաննես Թումանյանի, նա հատկապես չի առանձնացրել իր քայակները՝ որպես փիլիսոփայական ժանր, նաև ինքն իր մասին որոշակիորեն չի ասում, թե, ասենք, աստիճանաբար հակվում է դեպի փիլիսոփայությունը²⁶, սակայն իր մեծ գրչակցի և համախոհի պես մեզ ուղղորդում է դեպի փիլիսոփայական դատողություններ:

Ավետիք Իսահակյանի մտածելակերպն է էապես փիլիսոփայական. կենսական ամեն մի երևույթի ընկալումն ու հուզական արտապատկերումը ներքնապես ուղղված են դեպի համընդգրկուն ամփոփում և իմաստավորում: Պատահական չէ, որ առօրյա կյանքի թմբիրի մեջ գտնվող, առտնին հոգսերի ձեռքը տառապող մարդուն Ավետիք Իսահակյանը պարբերաբար հորդորում է աչքերը վեր հառել, հիանալ աստղերի աստվածային գեղեցկությամբ. այսկերպ բանաստեղծը հուշում է ճշմարիտ փիլիսոփայության ուղին, մարդու կյանքի իմաստավորման սկիզբը. զարմանք-հիացմունքն է փիլիսոփայելու ազդակը, խորհրդածությունների սկիզբը.

*«Երկինքն հիասքանչ, շրթեղ, լուսալից,
Հոգիս արթնացուց լրություն երգով.
Եվ այս տաղտուկից, կյանքի անձուկից*

²⁵ Ավ. Իսահակյան, «Տիեզերքն այս անսահման» // Երկեր, Եր.: Սովետ. գրող, 1987, էջ 185:

²⁶ Տե՛ս Վ. Միրզոյան, Հովհաննես Թումանյանի կենսափիլիսոփայությունը, Եր., 2019:

Թափ առավ հոգիս երագ-թներով»²⁷:

Բնության հրաշալիքները ոչ միայն ինքնին ունակ են մարդուն ազդակելու դեպի ընդգրկուն խորհրդածություններ կյանքի իմաստի շուրջ, այլև հուշում են այդ հավիտենական հարցի պատասխանը՝ ամենից առաջ՝ մարդու և բնության ներքին կապի ըմբռնման անհրաժեշտությունը: Ոչ թե սուսկ հիանալ բնությամբ, այլ նաև խորհել մարդու և բնական աշխարհի միասնականության մասին: Բնությունն է մեր արարիչը և նաև մեր վերջնական հանգրվանը: Բնապաշտ փիլիսոփայի հավատամքի անկեղծ խոստովանություն է Ավետիք Իսահակյանի աղոթքը.

*Միտքս ահա՝ դատարկ անոթ,
Լցրու նրան, ո՛վ բնություն,
Քո ուժերով, քո գործությամբ,
Իմաստությամբ ստեղծագործ:
Սրտիս խորքով հավատում եմ
Քո գերասքանչ հրաշքներին,
Անհունության, հավերժության,
Իմաստության քո անսահման,
Ո՛վ բնություն աստվածային»²⁸:*

Տիեզերական անըմբռնելի և աննկարագրելի խորությունների մեջ մարդու կյանքն առաջին հայացքից թվում է, իսկապես, մի աննշան հյուլե, «փոշի փոշու մեջ», բայց չէ՞ որ մեզ տրված է նաև բանականության մեծագույն պարզևր, սեփական կեցությունը իմաստավորելու հնարավորությունը: Եվ խորագգաց բանաստեղծը հորդորում է փիլիսոփայող մարդուն խորասուզվել բնության գաղտնիքների մեջ, ամեն ինչ ընդգրկել և ամեն ինչի հետ միաձուլվել.

*«...Տիեզերքը մեծ՝ լցվում է ինձնով,
Մեկ եմ զգում ինձ երկրի, երկնի հետ»²⁹:*

Բնության ներդաշնակությունը բանաստեղծին հուշում է անհատական և հանրային կյանքի ներդաշնակ կազմակերպման հնարավորության մասին: Իսկապես, եթե բնության մեջ եղած պայքարը, հակասական ուժերի բախումը ի վերջո չեն հանգեցնում կործանման, այլ ապահովում են հարատև նորոգում, վերածնունդ, ապա ինչո՞ւ հանրային կյանքը չի կարող կառուցակարգվել նման կերպ: «Թո՛ղ լինի մեր կյանքը հարանման բնության կյանքին՝ մենք լանք ու ժպտանք, մրրկվենք ու մեղմանանք, երգենք ու լսենք, եփվենք ու քնենք, սիրենք ու տանջվենք,

²⁷ Ավ. Իսահակյան, «Երկինքն հիասքանչ, շրթեղ, լուսավից...» // Երկեր, Եր.: Սովետ. գրող, 1987, էջ 107:

²⁸ Ավ. Իսահակյան, Իմ աղոթքը // Երկեր, Եր.: Սովետ. գրող, 1987, էջ 92–93:

²⁹ Ավ. Իսահակյան, «Անմահ արևի վառ գգվանքի տակ...» // Երկեր, Եր.: Սովետ. գրող, 1987, էջ 126:

կովենք ու վիրավորվենք, միայն թո՛ղ ոգևորություն լինի, այդ կրակը, այդ բոցը, այդ շունչը մեր սիրտը դորդացնե, շաչե-շառաչե թող մեր սիրտը»³⁰:

«Բնություն–հասարակություն» հարաբերակցության նման ըմբռնումը որոշակիացվում է նաև «երկրագունդ–մարդկություն» փոխհարաբերության օրինակով՝ փիլիսոփայական խորիմաստ պատկերի ձևով. «Ո՞վ է ասում, թե երկիրը չնչին բան է, մարդկությունը՝ նույնպես չնչին. ո՛չ, հազար անգամ ո՛չ: Երկրագունդը թեև տարածության մեջ մի հյուլ է, բայց նա գեղեցիկ է, վեհ, խորհրդավոր, իսկ մարդկությունը՝ նա թեև թշվառ է, անբախտ, դատապարտված է մահվան, ամեն մի բույսն նրա կյանքը վտանգի մեջ է, բայց նա է բնության, տիեզերքի փառքը, միտքը, իմաստը, հոգին, լեզուն, սիրտը, զգացմունքը, երգը, վիշտը, ուղեղը, զանգը, հոգին. նա՛ է Տիեզերական զանգի լեզուն»³¹: Իսկ նման ձևակերպմամբ երկրագնդում բանական կյանքի պահպանման համար մարդու և մարդկության պատասխանատվությունը ստացել է համատիեզերական ընդգրկում: Մարդը ոչ միայն բնության մեծագույն ստեղծագործությունն է, այլև նույն այդ բնության և մանավանդ բանականության ոլորտի հիմնական պահապանը:

Մարդկային կյանքը մեծագույն պարզ է՝ Աստծուց կամ բնությունից: Եվ կյանքը ստանալով որպես պարզ, աշխարհ գալով՝ մենք հնարավորություն ենք ունենում վայելելու այդ հեքիաթ-աշխարհը՝ «անսկիզբ, անվերջ, հրաշք դյուխական»: Բայց, ավա՛ղ, մեզանից շատերն այդպես էլ չեն ընկալում իրենց համար հյուսված այդ շքեղ հեքիաթը, դեռ ավելին՝ ոչ միայն իրենք չեն վայելում, այլև զրկում են կենսական շիտակ վայելքից «մի բուռ լավերին», քանզի իրենց վարքուբարքով ապականում են, պղծում, աշխարհը դարձնում իսկական դժոխք: Եվ Ավետիք Իսահակյանը անողոք բնութագրումներով տալիս է «տխեղծ մարդու» ամբողջական պատկերը.

«Աղքատության մեջ՝ քծնի, վաճառվող, թշվառության մեջ՝ վախկոտ, դավաճան,

Հարստության մեջ՝ լկտի, չարախինդ, և՛ վրիժառու, և՛ ամբարտավան»³²:

Հեռանալ մարդկանց ապականված միջավայրից դեպի անապատի խորքերը՝ մտածող և տառապող մարդու ինքնական ընտրությունն է: Անշուշտ, դյուրին չէ հրաժեշտ տալ անցյալ կյանքին, առավել ևս ինքն իրեն խոստովանել, թե «աստում եմ, ինչ որ սիրել եմ առաջ, ինչ որ տեսել

³⁰ Ավ. Իսահակյան, Հիշատակարան / Տեքստի պատրաստումը և ծանոթագրությունները Արամ Ինճիկյանի, Եր.: Սովետ. գրող, 1977, էջ 72–73:

³¹ Ավ. Իսահակյան, Հիշատակարան, էջ 267–268:

³² Ավ. Իսահակյան, Աբու-Լալա Մահարի // Երկեր, Եր.: Սովետ. գրող, 1987, էջ 249:

եմ մարդկային հոգում³³։ Իրականության և իրական մարդկանց համակեցության բոլոր դրսևորումների մերժում՝ ա՛յս ճանապարհին է ընտրում Աբու-Լալա Մահարին, նույն ինքը՝ Ավետիք Իսահակյանը³⁴։ Վերջինիս կյանքն արդեն այնքան դառնություն էր պատճառել թե՛ անձնապես (ցարական ոստիկանության հսկողություն, անհիմն դատական մեղադրանք, բանտարկություն, արքայ, կենսական անապահովություն, հիվանդություններ, վտարանդի դառնալու անխուսափելիություն), և թե՛ հանրային, ազգային կյանքի առումով (հայկական դպրոցների փակում, ազգային և սոցիալական անարդարություն, աշխատավոր ժողովրդի ծանր վիճակ, Արևմտյան Հայաստանում հայերի հալածանքներ), որ նրա զայրույթը, անտարակույս, միանգամայն ընդոծին էր, բնավ կարիք չունեին նմանակելու մեկ ուրիշին կամ ինչ-որ բան վերցնելու Ֆ. Նիցշեի «գերմարդուց»³⁵։ Եվ բնավ դա չէր Իսահակյանի պատկերացրած «գերմարդը»։ մինչ 1909 թ. արարված պոեմը (մի շնչով, ընդամենը երեք օրում. ասել է, թե՛ ասելիքը կուտակվել, հասունացել էր)՝ արաբ բանաստեղծի կերպարի հետ ինքնանույնացման հիմքով և մարդկանց հասարակության էկզիստենցիալ մերժման հանճարեղ պատկերի ստեղծումը, ավելի վաղ, 1902 թ. արդեն նա իր սեփական, ավարտուն ըմբռնումն ուներ հերոսի և զանգվածի փոխհարաբերության, հատկապես իրական հերոսի առաքելության մասին։ Գաղափարանվեր, գործունակ, աշխարհը վերափոխող, պայքարող մարդու տեսակն այլ է. տեսնելով նույնիսկ կախաղանի ուրվականը՝ Ավ. Իսահակյանի հերոսը չի ընկրկում, նույնիսկ հասկանալով սեփական խոսքի հասցեատիրոջ՝ «թշվառ և ունայն» ամբոխի հոգեվիճակը, այդ հերոսը գաղափարի աննկուն զինվոր է, և այդ գաղափարն ուզում է հասցնել մարդկանց հոգուն ու մտքին.

*«Եվ խոսքըս մուրճ էր, և խոսքըս՝ հրդեհ,
Ես փշրում էի սրտերը մարդկանց.
Եվ խոսքըս մուրճ էր, և խոսքըս՝ հրդեհ
Ես այրում էի սրտերը մարդկանց»³⁶:*

³³ Ավ. Իսահակյան, Աբու-Լալա Մահարի, էջ 234:

³⁴ «..... Այնտեղ ես եմ, ուրիշ ոչ ոք, միայն դա ուրիշի վերաբերուի տակ» («Ավետիք Իսահակյանի նամակները» / Կազմ.՝ Ա. Ավետիսյան, Եր.: Երևանի պետական համալս. հրատ., 2016, էջ 66): «Այդպես եմ և ես, որպես Աբու-Լալա Մահարի» (Ավ. Իսահակյան, Հիշատակարան, էջ 372):

³⁵ «Եթե նրա մեջ կա ինչ-որ բան նիցշեական ուժեղ անհատից՝ «գերմարդուց», ապա դա այն տիեզերական հանդգնությունն է, որով նա ժխտելով ժխտում է նաև ընկեր ու բարեկամ.....» (Լ. Հախվերդյան, Իսահակյանի կյանքն ու գործը, էջ 84):

³⁶ **Ավ. Իսահակյան**, «Հոգիս մըռայլ էր մըրրիկի նըման.....» // Երկեր, Եր.: Սովետ. գրող, 1987, էջ 83:

Գրողի ստեղծագործության մեջ, այսպիսով, արտացոլվել են նրա անձնական կյանքի, հայության վիճակի, պետության վարած քաղաքականության, տնտեսական փոխհարաբերությունների, գրական աշխարհի ամենատարբեր երևույթները: Պարզ է, որ կյանքի տարբեր պահերին արտաքին աշխարհի իրադարձությունների անձնային արձագանքը տարբեր է լինում, նաև՝ հետադարձ կերպով ազդում է ստեղծագործողի աշխարհագրացողության վրա: Բայց վերջինիս միջուկը, մարդու խորքային «ես»-ը գրեթե անփոփոխ է լինում: Ահա եթե հանրագումարի բերենք Ավ. Իսահակյանի կենսափիլիսոփայությունը, ապա առավել սեղմ և տպավորիչ արդեն արտահայտված է 1894 թ. Լայպցիգում գրված մի բանաստեղծության մեջ.

*«Կենսական ծովի հույզերի միջին
Ես ժայռի նման կանգնած եմ ամուր.
Կայծակն է զարկում իմ վեա ճակատին,
Ես ժայռի նման կանգնած եմ ամուր:
Հողմ ու փոթորիկ շուրջըս են հածում,
Ես ժայռի նման կանգնած եմ ամուր:
Գոռ ալիքները կուրծքս են ծեծում,
Ես ժայռի նման կանգնած եմ ամուր:
Ինձնի՛ց բռնեցեք, խորտակվող մարդիկ,
Ես ժայռի նման կանգնած եմ ամուր,
Ձեր խարխախները ոտքիս տակ ձգեք,
Ես ժայռի նման կանգնած եմ ամուր»³⁷:*

Սա հերոս է, գերմա րդ, թե՛ սովորական մարդ, որը հաղթահարել է ոչ միայն գալիք մահվան վախը, այլև բաց է ներկայի արհավիրքների դեմ-հանդիման, տարերքի փորձությունը վերածում է սեփական կայունության միջոցի: Ամենահաղթ կենսափիլիսոփայության մի պատկեր է մեզ մատուցվում՝ սովորական մարդուց գերմարդ դառնալու գրավիչ ուղին: Եվ մի՞ թե հենց այսպիսին չպիտի լինի իրական հերոսը, մի մարդ, որը պատրաստ է օգնելու այլոց և անվարան հրավիրում է թույլերին, կենսական հույզերի ծովում խորտակվողներին ապավինելու իրեն:

Ավետիք Իսահակյանի «գերմարդը» մտահոգ է մարդկանց համակեցության ստվերոտ կողմերով, տեսնում է անցանկալի շատ բան, ուստի և իր պարտքն է համարում նախազգուշացնելու «Ոգու սովի» անխուսափելի գալստյան վտանգի մասին: Հատկապես նախազգուշացնում է, այլ ոչ թե մարդկանց արհամարհոտ դատապարտում, քանզի վստահ է՝ մարդը ներքնապես, իր էութենական բնութագրով կոչված չէ

³⁷ Ավ. Իսահակյան, «Կենսական ծովի հույզերի միջին...» // Երկեր, Եր.: Սովետ. գրող, 1987, էջ 24:

սոսկ «հափրած որկորով» ապրելու, այլ իսկապես կարոտ է «հըրեղեն խոսքի, վեհ խոսքի»: Ահա թե ինչու այդ բանաստեղծության եզրափակիչ տողերը խոսում են հոգուտ այն բանի, որ մարդ արարածն ի վերջո հասկանալու է ոգեղեն խոսքի արժեքը.

*«Եվ մուրացկի պես փշրանքի համար
Շարավ ու նոթի կանցնեք ծովե ծով...»³⁸:*

Եվ ի՞նչ փառահեղ տողեր է գրում Իսահակյանը, հիրավի տիեզերական ընդգրկման մտքի տեր, իր գորեղ հոգով ամենուր սավառնող, բայց ազգակիցներից երբեք չկտրվող բանաստեղծը, որքա՞ն խորն է ըմբռնել իր մարգարեական առաքելությունը.

*«Ոգու հարության լույսն եմ ձեզ բերում...
Եվ մարգարեի հուրն է իմ կրքոճքում,
Մուրը իմ ձեռքում, բարբառը՝ ազատ.
Եվ ինձ հավիտյան անմահ եմ զգում,
Եվ երկրի վերա քայլերըս հաստատ...»³⁹*

Իհարկե, Ավետիք Իսահակյան գրողը կարող է հանճարեղորեն կերպարանափոխվել, և արաբ բանաստեղծի դերում իսպառ դատապարտել ու արմատապես մերժել մարդուն և մարդկային կյանքը, բայց Իսահակյան մարդը չէր կարող իրական կյանքում չտեսնել և արժանին չհատուցել իր հանդիպած արժանահարգ մարդկանց, նրանց, ովքեր իրենց կենսակերպով պատիվ են բերում մարդկային ցեղին, դրանով իսկ լիուլի հակադարձում հոռետեսության փիլիսոփայությանը: Մի թե այդպիսի հերոս չէ Շաքրո Վալիշվիլին, հարստահարված ժողովրդի շահերի անձնվեր պաշտպանը, ազատության դրոշակակիր⁴⁰: Որքա՞ն ջերմորեն է Ավ. Իսահակյանը պատկերում ծերունի գարիբալդիականին, որքա՞ն խորն է հասկանում նրա հոգին և սրտալից խոստովանությունը. «Ա՛խ, ինչքա՞ն լավ է, վեհ է կռվել հայրենիքի համար լավ ընկերների հետ մեկտեղ, մեռնել հայրենիքի համար լավ ընկերների գրկում...»⁴¹: Երկրորդ աշխարհամարտում զոհված հայ գորահրամանատարի՝ Սիմոն Զաքիյանին նվիրված ջերմ բանաստեղծության վերջին տողերով Իսահակյանը իմաստավորում է հերոսական մահվան երևույթը.

³⁸ Ավ. Իսահակյան, «Ես ձեզ ասում եմ՝ կըգա Ոգու սով...» // Երկեր, Եր.: Սովետ. գրող, 1987, էջ 89:

³⁹ Ավ. Իսահակյան, «Լըսում եմ դողանջն տիեզերական...» // Երկեր, Եր.: Սովետ. գրող, 1987, էջ 87:

⁴⁰ Տե՛ս Ավ. Իսահակյան, Շաքրո Վալիշվիլի // Երկերի լիակատար ժողովածու տասնչորս հատորով, հատ. վեցերորդ, Եր., 2019, էջ 14–18:

⁴¹ Ավ. Իսահակյան, Գարիբալդիականը // Երկերի լիակատար ժողովածու տասնչորս հատորով, հատ. վեցերորդ, Եր., ՀՀ ԳԱԱ «Գիտելիք» հրատարակչություն, 2019, էջ 21:

*«Քե՛զ հավերժ փառք... հանգչի՛ր խաղաղ ու անդորր.
Նոր հերոսներ կկայծակեն քո հետքով.
Հայաստանը կբողբոջի նորից նոր,
Կգարդարե քո շիրիմը վարդերով»⁴²:*

Իսկ հանճարեղ «Կտակ» բանաստեղծությունը: Սա մի ամբողջ կենսական իմաստություն է, կյանքն արժանավայել ապրելու յուրատեսակ վարքականոն, որ փորձառությամբ իմաստնացած տարեցի հոգատար խրատների ձևով ծավալվում, մատուցվում է պատանուն (մանկիկին): Սա, իհարկե, բավական տարածված հնարք է համաշխարհային գրականության մեջ, սակայն Բսահակյանի բանաստեղծությունը հազվադեպ է ասելիքի նման սեղմությամբ, աֆորիստիկ ոճով: Եվ դարձյալ՝ բանաստեղծը պարզ ու անպաճույճ խոսքով ստիպում է մեզ տեսնել կյանքի պարադոքսները և նաև առաջարկում՝ սեփական կյանքի աշխարհայացքային հիմքը ինքնուրույն ձևակերպել, օրինակ՝ մարդու վարվելակերպի մեջ հուզականի և խելատության հարաբերակցության հարցում:

*«Զգացմունքն է գերիշխանը, խելքը՝ նրա լոկ ծառան.
Բայց դո՛ւ խելքդ վրադ պահի՛ր, ինչպես պողպատ կուռ
վահան»⁴³:*

Եվ կամ հոգու անտրամության, տոկունության, լավատեսության, աներեր ընթացքի իսահակյանական հորդորը. կյանքում, արդարև, ձախողումներն անխուսափելի են, ամենքիս ճանապարհին բազում խոչընդոտներ և խոչընդոտողներ կան, դրանց մի մասը հաղթահարում ենք, մյուսը՝ ոչ: Եվ քանի որ բոլոր տեսակի խաղերում մշտապես հնարավոր չէ հաղթել, ուստի այդ փիլիսոփայությամբ տոգորված՝ կարող ենք ամեն մի խաղի էլ մասնակցել:

*«Խաղերով լի այս աշխարհում խաղդ եթե տանուլ տաս,
Զվարթ եղի՛ր, ու այդպիսով բախտի վրա կըխնդաս»⁴⁴:*

Եվ ո՞ւմ կարող է անտարբեր թողել «ատելու չափ սիրի՛ր մարդկանց» անսպասելի, բայց անվերապահ նրբաբանության հրամայականը. հիրավի, որքան՝ կենսական եռանդ ենք մենք երբեմն գուր մսխում ատելության վրա՝ թողած սիրելու հնարավորությունը:

Ամեն մի հասուն անհատի, իսկ առավել ևս մտավորականի կենսափիլիսոփայության կարևորագույն բաղադրիչներից է ազգայինի և համամարդկայինի հարաբերակցության սեփական ըմբռնումը: Եվրոպայում կրթություն ստացած, այլազգիների մեջ երկար տարիներ

⁴² Ավ. Բսահակյան, Սիրելի հերոս Ս.Գ. Զաքիյանի անմահ հիշատակին // Երկեր, Եր.: Սովետ. գրող, 1987, էջ 198:

⁴³ Ավ. Բսահակյան, Կտակ // Երկեր, Եր.: Սովետ. գրող, 1987, էջ 156:

⁴⁴ Ավ. Բսահակյան, Կտակ, էջ 156:

ապրած Ավետիք Բսահակյանն այդ հարցում ունի միանգամայն հստակ, անսասան դիրքորոշում, այն է՝ «կոսմոպոլիտիզմը ֆայլ է և չոր», քանի որ ամբողջ աշխարհը որպես մարդկության բնակության վայրը և հայրենիքը որակապես տարբեր իրողություններ են: «Մարդ կարող է թափառել աշխարհի ամեն կողմերը, օտար երկրներ, ուրիշ ժողովուրդների մեջ, իբրև ճանապարհորդ, ուսումնասեր և այլն, բայց հայրենիքը՝ այդ նրա տունն է, իր հայրենի, պապական օջախը. ինչպես որ մարդ միայն տանը իրեն լավ է զգում, ազատ է զգում, համարձակ ու ապահով, ու հարազատ, ընտանի, այնպես էլ մարդ իր հայրենիքումն է զգում այդպես, իր հայրենակիցների, իր ընտանիքի մեջ, մոր, հոր, քույր-եղբայրների մեջ»⁴⁵: Ավետիք Բսահակյանի համար սա ոչ թե սոսկ խոսք է եղել, այլ գերագույն արժեք, աշխարհագրություն, և երբ նա հայ հայտնվում է դաժան երկրնտրանքի առջև՝ դրսում հրատարակել իր ամենից երկարատև աշխատանքի պտուղը՝ «Ուստա Կարո» վեպը, թե՛ վերադառնալ հայրենիք՝ 15 տարվա բացակայությունից հետո⁴⁶, վճռում է հոգուտ վերջինի:

1915 թվականի եղեռնը կործանարար եղավ նաև մեծ քնարերգուի համար: Հայրենի եզերքի և հայոց երկնքի, ծառ ու ծաղկի, սիրո և ջահելության, նվիրվածության և հավատարմության երգիչն ահավոր ցնցում ապրեց թուրք գազանների ոճիրից և քրիստոնյա աշխարհի դավադիր անտարբերությունից: Քնարերգությունն ինքնին դարձավ անիմաստ ու անհանդուրժելի: Բնության հրաշալիքների անգուգական երգիչը չի կարողանում ներել նույնիսկ... անմեղ բնությանը. «Կտրեցե՛ք, կտրեցե՛ք թռչունների լեզուները, որոնք հանդգնում են գարնանը երգել մեր մորթված մանուկների անթաղ, ցիր ու ցան ոսկորների վրա, որոնց ծածկել են անգութ, անզգա, անտարբեր, սինքլոր ծաղիկները»⁴⁷:

Բանաստեղծի սիրտն անգոր է տանելու հայոց տառապանքը, արտահայտելու անհուն վիշտը. հիրավի, սա համատիեզերական աղետ է, որն անհնարին է ո՛չ զգալ, ո՛չ ըմբռնել, ո՛չ արտահայտել, ո՛չ, առավել ևս, դիմանալ. «Ինչպե՛ս դիմանալ. հայր տիեզերքից մեծ սիրտ պիտի ունենա, որ կարողանա տիեզերքի չափ այս ցավերին դիմանա...»⁴⁸: Եվ տիեզերական ներդաշնակության քարոզիչը «Հիշատակարանում» ինքն իրեն շիփ-շիտակ խոստովանում է. «Իմ և աշխարհքի մեջ չկա

⁴⁵ Ավ. Բսահակյան, Հիշատակարան, էջ 296–297:

⁴⁶ «Այն ձևով ինչպես ուզում էր ավարտել «Ուստա Կարոն» Բսահակյանը, հնարավոր էր միայն Վենետիկում, այսինքն՝ Եվրոպայում: Եվ եթե այդպես նա հրատարակեր վեպը, իր ետևից այրած կլինեք վերադարձի կամուրջները: Իսկ նա ավելի ուզում էր վերադառնալ հայրենիք... քան թե ավարտած լինեք «Ուստա Կարոն»» (Ավիկ Բսահակյան, Կյանքի գիրքը, էջ 292):

⁴⁷ Ավ. Բսահակյան, Հիշատակարան, էջ 338:

⁴⁸ Ավ. Բսահակյան, Հիշատակարան, էջ 320:

ներդաշնակություն: Մի քացի, մի հարված տամ և գահավիժեմ երկրագունդը անդունդի մեջ՝ իր մորալով, օրենքներով...»⁴⁹:

Եվ բնական է նաև, որ Ավետիք Բասահյան փիլիսոփայական փորձում է հասկանալ ողբերգության պատճառները: Ինքն իրեն, իր ժամանակակիցներին ու մեզ՝ իր հետնորդներին է ուղղում մինչ օրս սպառնալից պատասխան չստացած հիմնական հարցը. «Քեզ ի՞նչ պատահեց, իմ անմահ ժողովուրդ, ինչո՞ւ թողեցիր, որ քո հնձանները երեխաների արյունով լեցվի, հանգչի քո երդի հուրը, խորտակվի քո բերդի դուռը...»⁵⁰:

1915–1916 թվականներին արված այս գրառումները վկայում են, որ Բասահյան քնարերգուն այլևս չի կարող նախկինը լինել, որ փորձ էլ չի անելու այդկերպ արտահայտել հայոց մեծ վիշտը: Բանաստեղծը, կարծեք, գիտակցաբար խեղդում է իր քնարի ձայնը: Սասնա Մհերի պես (պատահական չէ, ուրեմն, «Սասնա Մհեր» պոեմի իսահակյանական մշակումը) քնարերգուն փակվում է ժայռի մեջ, մինչև այն պահը, երբ հայոց դատն արդար լուծում կստանա:

Էապես փոխվում է Ավետիք Բասահյանի մոտեցումը իրողությանը: Մասնավորապես, եթե մինչև 1915 թիվը նրա խոհափիլիսոփայական բնույթի դատողությունների հիմքը համամարդկային է (ցայտուն օրինակն է «Աբու Լալա Մահարին»), ապա դրանից հետո ազգային և ազգայնական հայացքներն են դառնում գերիշխող: Բանաստեղծն արձանագրում է հայերիս բնորոշ միամտությունը, այլասիրությունը, հարևանների խարդավանքներին ամեն անգամ դուրս գալիս դառնալը: Եվ մենք շարունակում ենք աշխարհին մոտենալ վերացական արժեքներով խանդավառ, համամարդկային կարգախոսներին հավատարիմ: Պատժվում ենք չարաչար, բայց դարձյալ դաս չէք առնում: Հենց նման եզրակացության է հանգում Բասահյանը 1922 թվականին. «Դո՛ւ՝ եսապաշտ, նյութապաշտ, եսամոլ, շահամոլ Եվրոպա՛, արյունարբու, խաբեբա, խարդախ... Դո՛ւ՝ իմ ժողովուրդ, սո՛ւրբ, մաքո՛ւր, միամի՛տ ժողովուրդ, զոհ քո հավատքին դեպի մարդը, եղբայրը, մարդկայինը, սերը, ազնվությունը, գուրքը, համամարդկայինը, արդարությունը և վեհ իդեալները... Դու քո ջարդված, ճղակոտոր, հաշմ տեղովդ բարձր ես բոլորից, բոլորից»⁵¹:

Եվ, ուրեմն, դարձյալ չխաբվելու, մյուս ազգերի հետ արդարացի և ազգաշահ փոխհարաբերություններ հաստատելու գլխավոր պայմաններից մեկն ազգային ինքնաճանաչումն է, մի հարցադրում, որին հայոց մեծերը մշտապես անդրադարձել են՝ Միքայել Նալբանդյանը, Ղազարոս Աղայանը, Ռաֆայել Պատկանյանը, Եղիա Տեմիրճիպաշյանը,

⁴⁹ Ավ. Բասահյան, Հիշատակարան, էջ 314:

⁵⁰ Ավ. Բասահյան, Հիշատակարան, էջ 321:

⁵¹ Ավ. Բասահյան, Հիշատակարան, էջ 357:

Ստեփանոս Պալասանյանը, Բաֆֆին, Հովհաննես Թումանյանը, Լևոն Շանթը, Գարեգին Նժդեհը, Հայկ Ասատրյանը... Որքա՛ն ստույգ է ախտորոշում Ավետիք Բասիակյանը մեր աշխարհաքաղաքական վիճակը. «Մենք՝ հայերս, կես-արևելքցի, կես-արևմուտքցի ենք. բայց քրիստոնեությամբ կապված արևմուտքի հետ, և դարերով կոճկել ենք արևելքի հետ, և միշտ դավաճանվել ենք Արևմուտքից...»⁵²: Հույսեր չկապել այլոց հետ, չհավատալ սին խոստումներին, հավատարիմ մնալ սեփական ուղուն. սա՛ է Բասիակյանի մտորումներից ամփոփում-հրամայականը. «Իմ ժողովուրդ, գոտիդ կապի՛ր, և հավատարիմ մնա դու քեզ...»⁵³:

Ավետիք Բասիակյանի ազգայնական խոհերի պսակը հայոց լեզվին նվիրված մտքերն են: Մեծ հայրը լավ է իմացել հայ մնալու պարզ ու մատչելի գաղտնիքը: Դիմելով ամերիկահայերին (1956 թ.)՝ նա հիշեցնում է. «Հայոց լեզուն և տոհմիկ գրականությունը դարերի երկար ընթացքում պահել-պաշտպանել են հայերիս. այժմ էլ մենք պիտի պահպանենք նրանց, որ նրանք էլ այսուհետև, կատարեն իրենց փրկարար դերը»⁵⁴: Ազգային ինքնատիպության, ազգի տոկունության և գալիք բարգավաճման հիմքն ու գլխավոր պայմանը հարազատ լեզվի պահպանումն է ու հզորացումը. սա՛ է անդուլ հիշեցնում Ավ. Բասիակյանը. «Միտե՛ք հայ լեզուն, հայ կուլտուրան, և հայ ժողովուրդը չի կորչի. ազգերը ֆիզիկապես չեն ոչնչանում, ֆիզիկապես նրանց չեն կարող ոչնչացնել. ազգերը ջնջվում են միայն ինքնասպանությամբ»⁵⁵: Որքա՛ն խորն է ըմբռնել հայրենի լեզվի դերը մարդու ամբողջական աշխարհագրությունից մեջ. «Ականջդ օրեցօր, ամեն օր, ամեն ժամ, ամեն վայրկյան լցվում է հայությամբ ու հայերով: Ականջդ միալար հայության մեջն է, հայերենի մեջ: Պառկում ես և լսում ես՝ ծառերը հայերեն են սոսափում, թռչունները հայերեն են ծլվում, առվակները հայերեն են խոխոջում: Ամեն քար ու իր, աստղ ու երկինք հայերեն, հայկական, հայաշունչ»⁵⁶:

Ավետիք Բասիակյանին, բնականաբար, անհանգստացրել է հայոց անմիաբանությունը, հատկապես մտավորականության շրջանում: Այդ մասին է նա 1936 թ. գրել ֆրանսահայ գրող Վահան Մալեգյանին. «Թվում է ինձ՝ անհատական վրեժխնդրությունը մեծ դեր է խաղում, մանավանդ գրական գործիչների մեջ, ու անտաղանդ մարդիկ ստոր միջոցներով

⁵² Ավ. Բասիակյան, Հիշատակարան, էջ 357–358:

⁵³ Ավ. Բասիակյան, Հիշատակարան, էջ 324:

⁵⁴ **Ավ. Բասիակյան**, Ամերիկահայ հայրենակիցներին // Երկեր, Եր.: Սովետ. գրող, 1987, էջ 846:

⁵⁵ **Ավ. Բասիակյան**, Սարիկ Սարյանին // Երկեր, Եր.: Սովետ. գրող, 1987, էջ 841:

⁵⁶ Ավ. Բասիակյան, Հիշատակարան, էջ 380:

հարվածում են տաղանդավորներին: Ցավալի է շատ, որ համերաշխություն չկա հայերիս մեջ, մի պատմական ունակություն, որից չարաչար տուժել ենք: Հույս ունեմ, որ շուտով կիրքը տեղի տա զգաստության, կյանքը մտնի իր հունի մեջ, խաղաղվի հուզված երկիրը, և ստեղծագործ աշխատանքը շարունակվի»⁵⁷: Մեծ ազգասերի, հայոց միաբանության ջատագովի այս խոսքը, կարծում եմ, հարկավոր է պարբերաբար հիշեցնել ինքներս մեզ՝ հանուն խաղաղ և ստեղծագործ աշխատանքի:

Ավարտին էլ հիշեցնեմ գրողի, հեղինակի առաքելության մասին Ավետիք Իսահակյանի ձևակերպումը, որը, ըստ իս, փիլիսոփայող գրողի հավատամքի լավագույն ձևակերպումն է. «Գրելու ու ստեղծելու ասպարեզը պիտի մտնեն այն մարդիկ, որոնք իրենց մեջ մի ուժ, մի պահանջ են զգում գրելու ու ստեղծելու: Գրելու ցանկությունը զուտ, մաքուր ու աբսոլյուտ լինի՝ անկախ նյութական և այլ գծով դիտումներից՝ փող կամ հարգանք ձեռք բերելու ձգտումից: Ո՛չ, գրողը պիտի գրիչ վեր առնե՝ ոգևորված այն խորը մտքով, որ նա անդամահատում է տիեզերքը հավիտենականության համար և ո՛չ թե մարդկանց զվարճության ու զբոսանքի: Պիտի գրել ողջ էությանմբ, գրելու ժամանակ պիտի ապրել՝ ողջ տիեզերքի հետ»⁵⁸:

Վարպետի սեփական կյանքն ու գործը լավագույն հաստատումն են իր իսկ պատվիրանի: Տարիներ առաջ մի առիթով զուսպ ու հակիրճ ձևակերպել է իր «ես»-ի գնահատականը. «Ես ինձ գիտեմ, ես իմ արժեքը գիտեմ, և դա բավարար է»⁵⁹: Հիրավի, Ավետիք Իսահակյանի ասածը մեկ ուրիշի շուրթերին այլ կերպ կհնչեր. միայն հանճարը իրավունք ունի ինքն իրեն այդպես գնահատելու՝ դրանով իսկ իր առջև կյանքի և ստեղծագործության գերագույն պահանջները դնելու: Նման պահանջկոտությունը շիտակ ստեղծագործողի, ազգի հոգևոր զարգացման նվիրյալի լավագույն ինքնաբնութագիրն է. ինչպես խոստովանել է բանաստեղծը իր սրտակից բարեկամներից մեկին, «եթե իրոք իմ հարյուրավոր գրածներից միայն մեկը պիտի ապրի մեր լեզվի մեջ, բավ է. կնշանակե արդարացած է իմ գոյությունը և իմ տագնապները՝ լիովի վճարված»⁶⁰: Եվ, ահավասիկ, մենք՝ մեծ հայորդու ազգակիցներս, հավիտենապես երախտապարտ ենք նրա արարած աշխարհի համար, ուր ամեն անգամ մուտք գործելիս ավելի ենք հագնում հայկականության ոգով, լցվում ազգային արժանապատվությամբ և վստահաբար նայում թե՛

⁵⁷ «Ավետիք Իսահակյանի նամակները» / Կազմ.՝ Ա. Ավետիսյան, Եր.: Երևանի պետական համալս. հրատ., 2016, էջ 289:

⁵⁸ Ավ. Իսահակյան, Հիշատակարան, էջ 600:

⁵⁹ «Ավետիք Իսահակյանի նամակները», էջ 47:

⁶⁰ «Ավետիք Իսահակյանի նամակները», էջ 233:

ամեն մեկիս անհատական կյանքի, թե՛ մեր հավաքականության ապագային:

ԱՍՓՈՓԱԳԻՐ

Հայոց քնարերգության գագաթներից մեկին՝ Ավետիք Իսահակյանին, խորապես բնորոշ է փիլիսոփայական մտածելակերպը. կենսական ամեն մի երևույթի նրա ընկալումն ու հուզական արտապատկերումը մեզ ուղեկցում են դեպի համընդգրկուն ամփոփումներ և իմաստավորում: Ընթերցողին հորդորում է տրտմության և հուսալքության պահերին աչքերը վեր հառել, հիանալ աստղերի աստվածային գեղեցկությամբ. զարմանք-հիացմունքն է փիլիսոփայելու ազդակը, ուստի և մարդու կյանքի իմաստավորման սկիզբը: Իսահակյանի կերտած հերոսը ոչ միայն ինքն է լավատես, այլև մյուսներին է համակում կենսական լավատեսությամբ: Եվ նա ոչ թե արհամարհանքով է նայում մարդկանց թերություններին, այլ պատրաստ է օգնելու նրանց, հրավիրում է ապավինելու իրեն:

Հիմնարաներ. բնություն, տիեզերք, կյանքի իմաստ, լավատեսություն, հերոս, «Աբու Լալա մահարի», «Կտակ», հայրենիք, գրողի հավատամքը

ЖИЗНЕННАЯ ФИЛОСОФИЯ АВЕТИК ИСААКЯНА

Валерий Мирзоян

доктор философских наук, АГЭУ

Одной из вершин армянской лирики – Аветику Исаакяну, присуще истинное философское мышление. Восприятие и эмоциональное выражение им каждого жизненного явления подводит нас к всеобъемлющим обобщениям. В моменты печали и отчаяния поэт призывает читателя поднять глаза вверх, восхищаться божественной красотой звезд. Ведь именно удивление – это побуждение к философствованию, отсюда и начало осмысления человеческой жизни. Созданный Исаакяном герой не только сам полон оптимизма, но и других заряжает всепобеждающей жизненной энергией. И герой этот вовсе не смотрит свысока на недостатки людей, а готов им помочь, предлагает положиться на него.

Ключевые слова: природа, мироздание, смысл жизни, оптимизм, герой, «Абу Лала Маари», «Завещание», родина, кредо писателя

LIFE PHILOSOPHY OF AVETIK ISAHAKYAN

Valeri Mirzoyan

Sc. D. in Philosophy, ASUE

One of the heights of Armenian lyric poetry, Avetik Isahakyan, is inherent in true philosophical thinking. His perception and emotional expression of each life phenomenon leads us to all-encompassing generalizations. In moments of sadness and despair, the poet urges the reader to raise his eyes up, to admire the divine beauty of the stars. After all, it is surprise that is an incentive to philosophizing, hence the beginning of understanding human life. The hero created by Isahakyan is not only full of optimism himself, but also charges others with the all-conquering vital energy. And this hero does not at all look down on the shortcomings of people, but is ready to help them, offers to rely on him.

Key words: nature, cosmos, meaning of life, optimism, hero, "Abu Lala Mahari", "Will", fatherland, credo of a writer

Ներկայացվել է՝ 15.03.2021 թ.

Ընդունվել է՝ 27.04.2021 թ.

ԱԶԳԱՅԻՆ ԲՐԵՆՆԻ ԳԱՂԱՓԱՐԸ ԵՎ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԴԻՎԱՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆԸ

Թաթուլ Մանասերյան
տնտեսագիտության դոկտոր, ԵՊՀ
tatoulm@gmail.com

Մշակութային դիվանագիտությունը ոչ միայն քաղաքական, այլև տնտեսական դիվանագիտության կարևորագույն բաղադրիչն է: Անցյալ դարում մշակութային դիվանագիտության նշանակության փորձագիտական ուսումնասիրությունները ժամանակ առ ժամանակ կենտրոնացել են Միացյալ Նահանգների և Սառը պատերազմի վրա՝ հիմք ընդունելով այն մտադրությունը, որ մշակութային դիվանագիտությունը կարող է հանդես գալ որպես արտաքին քաղաքականության առանցքային գործիք՝ Խորհրդային Միությունը ներառելու խաղաղության և անվտանգության առումով Արևմուտքի կամ առանձին վերցրած որևէ երկրի ջանքերում: Այս ամենի արդյունքում, «մշակութային դիվանագիտություն» տերմինը վերածվել էր միակողմանի հասկացության, որը որոշ առումով կապված էր նաև քաղաքական մանիպուլյացիայի և ենթակայության հետ և «տեղավորվել էր» քաղաքական դիվանագիտական փոխգործակցությունների շրջանակներում:

Երրորդ հազարամյակի սկզբին ի հայտ եկան նոր մոտեցումներ, իրականացվեցին նոր ուսումնասիրություններ, որոնց նպատակն է դիտարկել մշակութային դիվանագիտության նշանակությունը ոչ միայն և ոչ այնքան ԱՄՆ-ում կամ «արևմտյան» երկրներում, այլև տարբեր երկրներում, այսինքն՝ այն տարածաշրջաններում, որոնք մինչ այդ անտեսվել են գիտնականների և փորձագետների կողմից՝ Արևելյան և Կենտրոնական Եվրոպա, Ասիա, Միջին Արևելք, անգամ՝ Ավստրալիա, Հարավային Ամերիկա և Աֆրիկա: Ինչպես վկայում են մեր դիտարկումները, այս տարածքներում ուսումնասիրելով մշակութային դիվանագիտությունը, տեղեկատվության և իրականացվող զարգացման ծրագրերի և դրանց գործառնությունների առումով զգալիորեն տարբերվում են մի տարածքից մյուսը՝ կախված պատմական հանգամանքներից և, առավել ևս, ամենակարևորը, ներգրավված անձանց մշակութային մտածելակերպից:

Մշակութային դիվանագիտության գործոնն ուղղակիորեն լուծում է փոխըմբռնման, կայունության և զարգացման փոխկապակցված խնդիրները, և որպես այդպիսին տալիս է հատկապես բեղմնավոր աշխատանքի հուսալի ելակետ:

Ժամանակակից եվրոպական երկրների զարգացման պատմության ուսումնասիրությունը հուշում է, որ տարիների ընթացքում մշակութային դիվանագիտության վերաբերյալ առաջին հիմնարար հրատա-

րակությունները Գիենով-Հելստի և Դոնֆրիդի գործերն են, որոնք խիստ արժեքավոր են ոչ միայն անաչառության և գիտականորեն հիմնավորվածության պատճառներով: Ակադեմիական քննարկումների և անխնա քննադատությունների տեսանկյունից նրանց աշխատանքները անկյունագծորեն հակառակ կարծիքներ դավանող փորձագետների առկայության և գործնական կիրառության տեսանկյունից ոչ այնքան բարենպաստ միջավայրում ակնհայտորեն համարձակություն, ինչպես նաև գիտական քաջություն է պահանջում: Դրա հետ մեկտեղ, նրանք միասին ձեռնարկել են լայնածավալ և խորը ուսումնասիրությունների հավաքածու, որը հավասարապես օգտակար է տարբեր հանրային կառավարման համակարգ ունեցող երկրներում մշակութային դիվանագիտությունն ընկալելու և այն ըստ արժանվույն կիրառելու համար:

Միասին վերցրած, մասնագիտական գրականության մեջ հիշյալ հարցին առնչվող բազմաբնույթ ակնարկները հիշեցնում են մշակութային դիվանագիտությունը հաշվի առնելու կարևորության և հատկապես այն ինստիտուցիոնալ հիմքերի վրա դնելու և զարգացնելու անհրաժեշտության մասին, որը ներառում է ոչ միայն այն երկրները, որոնք ձգտում են վարել արտաքին քաղաքականություն՝ նաև մշակույթի միջոցով օտարերկրյա հասարակությունների, այլև տարբեր հասարակական կազմակերպությունների, երբեմն՝ նաև՝ տարածաշրջանային միությունների ներգրավմամբ: Նման գործընթացում հաճախ կարելի է տեսնել հանրաճանաչ դերասանների, նկարիչների, դասական կամ ժամանակակից երաժշտության տարբեր ոճեր ներկայացնող երգիչների, կոմպոզիտորների, բանաստեղծների կամ գրողների, որոնք հետապնդում են նման նպատակներ:

Համեմատած ավանդական դիվանագիտության գործիքակազմի, մշակութայինն ավելի մատչելի է: Արվեստի տարբեր արտահայտչաձևերն ավելի ընկալելի են, իսկ արվեստի միջոցով մատուցվող բանակաությունը խմելու ջրի կամ սիրված խմիչքի նման հեշտությամբ են ընդունվում: Մշակութային դիվանագիտության մեջ փորձառություն ձեռք բերած անձինք, որպես կանոն, ցույց են տալիս անհավատալի գիտելիքներ քննարկվող թեմաների վերաբերյալ, և արդյունքում՝ տվյալ թեմայի շուրջ բանակցությունները կամ քննարկումները տեղի են ունենում առավել պրոֆեսիոնալ ձևով:

Ունանց կարծիքով մշակութային դիվանագիտությունը կարող է տարբեր լինել, կախված այն հանգամանքից, թե ինչ նպատակներ են դրվում, ովքեր են դրա ներկայացուցիչները, ինչպես նաև այն, թե որ պետությունների շահերին է այն միտված: Այսպես օրինակ, Ջ. Գիենո-Հելստի և Մ. Դոնֆրիդի համոզմամբ, կարևոր է հաշվի առնել հիշատակված գործոնները՝ մշակութային դիվանագիտության կոնկրետ մոդել մշակելիս: Ըստ որում, կարևոր է հաշվի առնել տվյալ երկրի ներուժը, բանակցող երկրների միջև ընկած ֆիզիկական հեռավորությունը,

պատմական և մշակութային առանձնահատկությունները, քաղաքացիական հասարակության ավանդական և ժամանակակից խնդիրները և այլն¹:

Հարկ է նկատել, որ վերջին երկու-երեք տասնամյակում հույժ կարևոր ուսումնասիրություններ են հրապարակվել, մասնավորապես, կաթոլիկների դերի մասին՝ Օստպոլիտիկում կամ էլեկտրոնային, ցանցային, ոչ պետական դիվանագիտության առանձին խնդիրների վերաբերյալ Bensberger Polen-Memorandum համատեքստում, հատկապես, 1966-1970թթ. իրադարձությունների տեսանկյունից, ինչպես նաև միջազգային մրցակցության ու մշակույթի առանձնահատկությունների վերաբերյալ Մերձավոր Արևելքում, Սիրիայում և Լիբանանում՝ Ֆրանսիայի մանդատի ներքո, ինչպես նաև ԱՄՆ մշակութային դիվանագիտության սահմանների մասին Արաբական Մերձավոր Արևելքում, Ճապոնիայում և այլուր, որոնք նորովի են մեկնաբանում մշակութային դիվանագիտությունն իր բազմաթիվ ծալքերով: Այնուամենայնիվ, հետխորհրդային տարածքը պահպանում է իր գրավչությունը և հետաքրքրությունը ոչ միայն քաղաքական և տնտեսական զարգացումների, այլև հենց մշակութային դիվանագիտության իմաստով:

Հետաքրքիր կարծրատիպեր են ձևավորվել խորհրդային մշակույթի վերաբերյալ, մեկնաբանելով այն որպես ընտրովի և կայսրության քաղաքական ու տնտեսական շահերին ծառայող հին ու նոր մշակութային արժեքների հավաքածու: Մինչդեռ հայտնի է, որ բազմաթիվ հանրապետություններ այդ պատմական ժամանակահատվածում հնարավորություն ստացան ձևավորելու ոչ միայն «ձևով՝ սոցիալիստական, բովանդակությամբ՝ ազգային» ուղղություններ, այլև պարարտ հող ստեղծվեց ընդունված շրջանակներում չտեղավորվող մշակույթի ներկայացուցիչների դրսևորման՝ այլախոհների արվեստի համար, ինչը նույնպես յուրօրինակ մշակութային դիվանագիտական ցանց ձևավորեց աշխարհով մեկ: Նրանց, որպես կանոն, ճանաչեցին և գնահատեցին իրենց երկրային կյանքից և խորհրդային կայսրության փլուզումից հետո միայն: Ձևավորվեց, մեր համոզմամբ, այլընտրանքային մշակութային դիվանագիտության նոր ուղղություն, որի վառ ներկայացուցիչներից էին Ս. Փարաջանովը, Ա. Տարկովսկին, Մ. Բուլգակովը և ուրիշներ: Հենց նման գործիչների շնորհիվ նրանց հայրենիքն ավելի ճանաչելի և սիրելի դարձավ աշխարհի ժողովուրդների համար: Հետևաբար, Խորհրդային Միության մշակութային հարաբերությունները և արտաքին քաղաքականության, խորհրդային սոցիալիզմն Արևմուտքին վաճառելու հարցերը, Արևելյան Եվրոպայում մշակութային դիվանագիտության և կոմունիստական երկրներում արևմտյան մշակութային գործունեության

¹ Searching for a cultural diplomacy, Edited by Jessica C. E. Gienow-Hecht and Mark C. Donfried, (2013), Berghahn, New York - Oxford, pp. 17-29.

արձագանքների խնդիրները պահպանում են իրենց արդիականությունն ու օգտակարությունը նաև այսօր:

Большое значение имеет и **охранительная функция, функция защиты существующей системы общественных отношений**. Для отечественной науки выделение данной функции является традиционным³⁴. Согласно марксистскому подходу к генезису публичной власти, основным ее назначением признавалась защита экономических интересов господствующего класса. Если отвлечься от существовавших узкоклассовых трактовок, то нужно признать, что лежащая в основе марксистского подхода идея верна в своей основе. Публичной власти, действительно, свойственна защита существующей в обществе системы общественных отношений, общественного строя. Решение же вопроса о том, чьи интересы (какого класса, социальной группы, страты) в большей степени защищает публичная власть, вытекает не из сущности публичной власти, а детерминировано, скорее, внешними по отношению к публичной власти, факторами. Речь идёт об отношениях политического характера, в которые включены органы публичной власти. О роли и значении данной функции можно судить хотя бы по тому, что в любом государстве, при любом политическом режиме существует разветвленная система правоохранительных органов, на которые возлагается задача в своей повседневной деятельности осуществлять охрану общественного строя. Можно отметить, что эффективная реализация рассматриваемой функции является одним из признаков правового государства. Однако

³⁴ См.: Григорян Л.А. Народовластие в СССР. - М.: Юрид. лит., 1972. - С.190.

при этом следует отметить, что не может государство именоваться правовым, если оно не способно обеспечить защиту прав и интересов своих граждан и иных лиц.

С развитием цивилизации меняются принципы³⁵ организации и функционирования публичной власти. Таким изменениям подвержены и выполняемые публичной властью функции. На сегодняшний день все основополагающие акты в области прав человека в качестве первого принципа общественного и государственного строя закрепляют признание человека в качестве высшей ценности. Данная мысль ярко отражена в Документе Копенгагенского совещания Конференции по человеческому измерению СБСЕ (от 29 июня 1990 г.): "Государства-участники выражают свою убежденность в том, что защита и поощрение прав человека и основных свобод является одной из основополагающих целей правления ..." (п.1); и далее: "Они (государства-участники – П.М.) считают, что правовое государство означает ... законность, ... основанную на признании и полном принятии высшей ценности человеческой личности и гарантируемую учреждениями, образующими структуры, обеспечивающие ее наиболее полное выражение" (п.2)³⁶. В ст.2 Конституции РФ закреплено: "Человек, его права и свободы являются высшей ценностью. Признание, соблюдение и защита прав и свобод человека и гражданина - обязанность государства". Анализируя два вышеуказанных акта, нетрудно заметить, что Конституция РФ возлагает обязанность по соблюдению и защите прав и свобод человека и гражданина только на государство (государственные органы); Документ же Копенгагенского совещания говорит вообще об "учреждениях, образующих структуры...". На наш взгляд, под учреждениями следует понимать не только государственные органы, но органы и институты иных видов публичной власти. При таком подходе **функция обеспечения прав человека** будет присуща всей публичной власти как социальному институту.

Действующие нормативно-правовые акты, устанавливающие правовой статус органов публичной власти, исходят из того, что признание, соблюдение и защита прав человека является неотъемлемой функцией последних. Конституция РФ в ст.114, определяя компетенцию Правительства РФ, указывает, что оно

³⁵См. подробнее: Минаков П.А. Публичная власть: политологический аспект. Монография. – Уфа, 2008.

³⁶Официальный сайт Организации по безопасности и сотрудничеству в Европе ОБСЕ <https://www.osce.org/ru/odihr/elections/14304>.

"...осуществляет меры по обеспечению законности, прав и свобод граждан".

Согласно современным воззрениям, можно говорить, что основное предназначение публично-властных институтов состоит прежде всего, в обеспечении прав и свобод человека и гражданина. Именно на субъектах публичной власти (и в первую очередь на органах и должностных лицах власти) лежит позитивная обязанность по обеспечению прав и свобод человека и гражданина. При этом в такого рода взаимодействиях гражданина и публичной власти следует правильно понимать природу последней.

В юридической литературе выделяются частноправовые и публично-правовые отношения³⁷. Частноправовые отношения возникают по взаимному согласию, добровольно, между равноправными субъектами и могут быть даже прекращены в одностороннем порядке. Данные признаки нельзя относить к деятельности органов публичной власти и их должностных лиц, действующих в рамках публично-правовых отношений. Публичная власть государства выполняет возложенные обязанности перед обществом и гражданами государства – устанавливает принудительный и относительно постоянный порядок общественных отношений. От выполнения установленных публично - правовых обязанностей, в основе которых исполнение возложенных на них функций, должностные лица органов публичной власти отказаться не могут. Ответственность органов и должностных лиц публичной власти перед обществом и гражданами в рамках публично-правовых отношений носит принципиально иной характер. Данное установление не должно позволить эволюционировать публичной власти в сторону её превращения в частную, которая будет довлеть над всем обществом, действуя лишь во имя собственных, подчас эгоистических интересов.

Публичная власть, реализуя публичные интересы³⁸ и, вытекающие из них функции, выполняет роль движущей силы всего общества, устраняет из жизни сложившейся общности: хаос, вседозволенность и безответственность. Таким образом, если это не наблюдается, то можно с уверенностью сказать, что публичная власть, в лице её органов, не реализует публичные интересы и,

³⁷Голубцов В.Г. Сочетание публичных и частных начал в регулировании вещных отношений с участием государства. - СПб.: Изд-во Р.Асланова "Юридический центр Пресс", 2005. – С.67., Дорохин С.В. К.Д. Деление права на публичное и частное: конституционно-правовой аспект. - М.: Волтерс Клувер, 2006. –С.65.

³⁸См. подробнее: Минаков П.А. Публичная власть: политологический аспект. Монография. – Уфа, 2008.

соответственно, не выполняет своё предназначение перед обществом. В заключение хотелось бы отметить, что еще крупнейший русский религиозный мыслитель И.А. Ильин писал: "Призвание государства (а равно и других органов публичной власти – П.М.) состоит в том, чтобы при всяких условиях обращаться с каждым гражданином как с духовно свободным и творческим центром сил, ибо труды и сознания этих духовных центров составляют живую ткань народной и государственной жизни. Никто не должен быть исключен из государственной системы защиты, заботы и содействия; и в то же время все должны иметь возможность работать и творить по своей свободной, творческой инициативе"³⁹.

Аннотация. В статье рассматриваются теоретические аспекты взаимодействия гражданина и публичной власти. Определены функции публичной власти, изучение которых помогает лучше понять её историческое предназначение, роль в жизни государственно - организованного общества в целом и отдельного гражданина в частности.

Ключевые слова: публичные интересы, права человека, частноправовые отношения, публично-правовые отношения.

Список использованных источников:

1. Минаков П.А. Природа и свойства публичной власти // Вестник ВЭГУ. - 2011. - №2(52). – С.42-48.
2. Мамут Л.С. Народ в правовом государстве. - М.: НОРМА, 1999.
3. Магазинер Я.М. Общее учение о государстве. Изд. 2-ое. Пг., 1922.
4. Григорян Л.А. Народовластие в СССР. - М.: Юрид. лит., 1972.
5. Официальный сайт **Организации по безопасности и сотрудничеству в Европе** ОБСЕ <https://www.osce.org/ru/odihr/elections/14304>.
6. Голубцов В.Г. Сочетание публичных и частных начал в регулировании вещных отношений с участием государства. - СПб.: Изд-во Р.Асланова "Юридический центр Пресс", 2005.
7. Минаков П.А. Публичная власть: политологический аспект. Монография. – Уфа, 2008.
8. Дорохин С.В. К.Д. Деление права на публичное и частное: конституционно-правовой аспект. - М.: Волтерс Клувер, 2006.
9. Ильин И.А. Путь к очевидности. Собрание сочинений. Т.3. – М., 1994.

³⁹ Ильин И.А. Путь к очевидности. Собрание сочинений. В 10т. Т.3. - М., 1994. С.405.

**ՔԱՂԱՔԱՑՈՒ ԵՎ ՀԱՆՐԱՅԻՆ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ
ՓՈԽԱՀԱՐԱԲԵՐՄԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆ - ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԱՍՊԵՏՆԵՐԸ**

Պավել Մինակով

քաղաքական գիտությունների թեկնածու, Ուֆայի
նավթամթերքների պետական տեխնիկական համալսարան

Հոդվածում մեկնաբանվում են քաղաքացու և հանրային իշխանության միջև փոխգործակցության տեսական հայեցակերպերը: Որոշվում են հանրային իշխանության գործառնությունները, որոնց ուսումնասիրությունը օգնում է ավելի լավ հասկանալ դրա պատմական նպատակը, դերը պետական կազմակերպչական ոլորտում և ընդհանրապես անհատ քաղաքացու կյանքում:

Հիմնաբառեր. հանրային շահեր, մարդու իրավունքներ, մասնավոր իրավունքին առնչվող կապեր, հանրային իրավահարաբերություններ

**POLITICAL - LEGAL ASPECTS OF INTERACTION OF A
CITIZEN AND PUBLIC AUTHORITY**

Pavel Minakov

PhD in Political Science, Ufa State Petroleum Technological University

The article examines the theoretical aspects of interaction between a citizen and public authorities. The functions of public power are determined, the study of which helps to better understand its historical purpose, the role in the life of a state-organized society in general and an individual citizen in particular.

Keywords: public interests, human rights, private law relations, public law relations

Ներկայացվել է՝ 03.03.2021 թ.

Ընդունվել է՝ 11.04.2021 թ.

**ԺԱՌԱՆԳՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ.
ԱՐԴԻ ՎԻՃԱԿԸ ԵՎ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ**

Աշխեն Մանվելյան

Հյուսիսային համալսարանի իրավագիտության ֆակուլտետի
մագիստրոս

ashkhenmanveljan@gmail.com

Ժառանգության իրավունքը Հայաստանի Հանրապետության քաղաքացիների հիմնարար սահմանադրական իրավունքներից է: ՀՀ սահմանադրությունը հռչակում է, որ Հայաստանում «յուրաանյուր ոք ունի սեփականության և ժառանգման իրավունք»:¹ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի համաձայն՝ ժառանգումը կատարվում է երկու հիմքով՝ **ըստ կտակի և ըստ օրենքի: Ընդ որում**, կարևոր է նշել, որ օրենսդիրը առաջնություն է տալիս ըստ կտակի ժառանգության իրավունքին և ոչ թե ըստ օրենքի ժառանգությանը:

Կտակն անձի գրավոր կարգադրությունն է՝ իր կենդանության օրոք իրեն պատկանած գույքային իրավունքներն ու պարտականությունները և անձնական ոչ գույքային իրավունքներն իր մահվանից հետո օրենքով թույլատրվող սահմաններում այլ անձանց փոխանցելու վերաբերյալ, որն արվել է օրենքով սահմանված ձևի պահպանումով²: Կտակ կարող են կազմել միայն լրիվ գործունակ անձինք, ինչպես նաև՝ նախքան ամուսնական տարիքի հասնելն ամուսնացողները կամ այլ հիմքով էմանսիպացված անձինք: Կտակը գրավոր, ժամկետային և ձևական փաստաթուղթ է: Այն ուժի մեջ է մտնում կտակարարի մահվան դեպքում: Կտակը ստորագրվում է կտակարարի կողմից, որով հաստատվում է, որ կտակի բովանդակությունը համապատասխանում է իր կամքին: Այն դեպքերում, երբ կտակարարը ֆիզիկական թերության կամ անգրագիտության պատճառով չի կարող կտակն անձամբ ստորագրել, կտակն ստորագրում է նրա կողմից ընտրված այլ անձ: Այդ մասին կտակում պարտադիր կարգով նշվում է:

ՀՀ քաղաքացիական օրենսդրությունը նախատեսում է կտակի
երեք տեսակ

1. **Սովորական կտակ,**
2. **Պայմանով կտակ,**
3. **Փակ կտակ:**

Սովորական կտակում կտակարարը որևէ պայման չի նշում կամ ժառանգներին որևէ հանձնարարություն չի տալիս: Կտակարարը սովորական կտակով իր ամբողջ գույքը, որտեղ էլ այն գտնվի, ինչից էլ այն բաղկացած լինի, կտակում է ըստ օրենքի ժառանգներից մեկին:

¹ Տե՛ս ՀՀ սահմանադրության 28 հոդված:

² Տե՛ս Գ. Հ. Ղարախանյան ՀՀ քաղ. իրավունք, մաս 3, Երևան, 2003, էջ 235:

Կտակը պարտադիր կարգով պետք է վավերացվի նոտարի կողմից: Այն դեպքում, երբ նոտարը այն չի վավերացրել, ապա այդ կտակը համարվում է առոչինչ:

Պայմանով կտակն այն է, երբ ժառանգատուն ժառանգի առջև պայման է դնում, որի կատարվելուց հետո միայն ժառանգը կարող է ստանալ ժառանգությունը: Պայմանը չպետք է հակասի գործող օրենսդրությանը:³ Մասնավորապես, ելնելով կտակի ազատության սկզբունքից՝ կտակարարն իրավունք ունի հանձնարարություններ տալ կտակային ժառանգին: Նման դեպքում հանձնարարությունը նույնպես չպետք է հակասի գործող օրենսդրությանը, օրինակ՝ ժառանգին հանձնարարում է իր սեփական տան մեկ սենյակը, ցմահ օգտագործման իրավունքով, հանձնել իր նկարիչ ընկերոջը՝ շահառուին, կամ ժառանգություն ստանալու համար պայման դնել ժառանգի համար, օրինակ, երբ ժառանգի քսանհինգ տարին լրանա, այդ դեպքում նա իրավունք ունի ստանալ ժառանգությունը:

Փակ կտակն այն է, որ նոտարը չի կարող այն ընթերցել: Կտակը նոտարին է հանձնվում փակ ծրարի մեջ, իսկ նոտարը մակագրում է ծրարի վրա: Փակ կտակի մասին հարկ է նշել, որ սա նորամուծություն է քաղաքացիական օրենսգրքում, քանի որ այն մինչև 1998թ.-ը գոյություն չի ունեցել, եղել են միայն սովորական կտակը և պայմանով կնքված կտակը: Մենք գտնում ենք, որ փակ կտակի ծրարի մեջ լինի նաև՝ էլեկտրոնային կամ այլ մագնիսական կրիչի վրա ձայնագրված կտակարարի կամքը:⁴

ՀՀ օրենսդրությամբ հնարավոր է նախատեսել նաև կտակի մի նոր՝ **հասարակ տեսակ**: Մենք կարծում ենք, երբ կտակ կազմելու անհրաժեշտություն է առաջանում հանկարծակի, արտակարգ հանգամանքներում (տարերային աղետ, հանկարծակի հիվանդություն, պատերազմական գործողություններ և այլն), նման դեպքում սեփականատերն իրավունք ունենա կազմել հասարակ կտակ, որը հաստատված լինի երկու վկաների ստորագրությամբ: Հին Հռոմի մասնավոր իրավունքում նման պայմաններում կազմված գործարքը (իսկ կտակը միակողմանի գործարք է,) անվանվել է դառնադի, տխուր գործարք:

Երկար ժամանակ իրավունքի տեսաբանների կողմից քննության առարկա էր այն հարցը, թե արդյո՞ք սահմանափակ գործունակ անձինք իրավունք ունեն կտակ կազմել, թե՞ ոչ: Տեսաբանների մի խումբ այն կարծիքին էր, որ այո՛, կարող են, բայց՝ հոգաբարձուի համաձայնությամբ: Մեկ այլ խումբ գտնում էր, որ չեն կարող կտակ կազմել, հետևաբար՝ նրանք պետք է զրկված լինեն կտակ կազմելու իրավունքից: Այդուհանդերձ, դատական պրակտիկայում անուղղակի կերպով

³ Տե՛ս ՀՀ քաղ. օր. 1197 հոդվ. 1-ին մաս:

⁴ Տե՛ս ՀՀ քաղ. օր. 1206 հոդվ. 1-ին մաս:

ընդունում էին տեսաբանների առաջին խմբի կարծիքը, այսինքն այն, որ այո՝ սահմանափակ գործունակ անձն իրավունք ունի և կարող է կտակ կազմել, բայց՝ միայն հոգաբարձուի համաձայնությամբ: Սրա հետ մեկտեղ նշենք, որ Ռուսաստանի Դաշնության Գերագույն դատարանը, օրինակ, իր 04.05.90թ. պլենումում ընդունել է որոշում, որ սահմանափակ գործունակ անձը չի կարող կտակ կազմել:

Ի տարբերություն Հայաստանի Հանրապետության օրենսդրության՝ մի շարք զարգացած երկրներում կտակ կազմելու իրավունք ունեն նաև անչափահասները: Կարծում ենք, որ այս պրակտիկան ճիշտ է, քանի որ մեր օրենսդիրը ճանաչել է անչափահասների սեփականության իրավունքը, ուստի սեփականատեր անչափահասը նույնպես կարող է կտակ կազմել միայն այն տարբերությամբ, որ անչափահասի կտակը, նախքան նոտարի կողմից վավերացնելը, պետք է հաստատված լինի խնամակալության և հոգաբարձության մարմնի կողմից:

Ինչ վերաբերում է այն անձանց, որոնք լրիվ գործունակ են, սակայն կտակ կազմելու պահին եղել են անհավասարակշիռ վիճակում, երբ անընդունակ են եղել հասկանալու իրենց գործողությունների նշանակությունը կամ դրանք ղեկավարել, ապա ըստ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 311 հոդվածի դատարանը նման անձի կազմած կտակն անվավեր կճանաչի, այդ նույն անձի հայցով կամ այն անձանց հայցով, որոնց իրավունքները և օրենքով պաշտպանվող շահերը խախտվել են նման կտակ կազմելու հետևանքով:

Ըստ օրենքի արգելվում է երկու և ավելի անձանց կողմից կտակ կազմելը, քանի որ մեկ կտակում պետք է արտահայտված լինի մեկ անձի և ոչ թե մի քանի անձանց հանդիպակաց կամքը: Երկու անձանց կամքի արտահայտությունը հանգեցնում է նրան, որ կտակը վեր է ածվում երկկողմանի պայմանագրի, իսկ կտակը միակողմանի գործարք է, որի վավերության համար պահանջվում է մեկ անձի՝ կտակարարի կամքի արտահայտությունը:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքը սահմանել է որպես միջճյուղային սկզբունք՝ կտակի ազատության սկզբունքը, որը մեր կարծիքով չպետք է հակասի քաղաքացիական իրավունքի սեփականության անձեռնմխելիության սկզբունքին, քանի որ կտակը միաժամանակ ուղղված է մասնավոր սեփականության անձեռնմխելիությանը: Կտակի ազատության սկզբունքն առաջին անգամ նախատեսվել է 1998թ. ընդունված քաղաքացիական օրենսգրքով: Կտակի ազատության սկզբունքից ելնելով՝ քաղաքացին իր ունեցվածքը կտակում է՝ ում ցանկանում է (որոշակի սահմանափակումներով): Կտակարարն ընդունում է իր համար նախընտրելի կտակային ժառանգ(ներ), այդ թվում՝ նաև օտարեկրացու կամ քաղաքացիություն չունեցող անձի, իրավաբանական անձի, պետությանը կամ համայնքին: Ըստ օրենքի ժառանգները կտակային ժառանգ կարող են ինչպես լինել այնպես էլ չլինել:

Կտակարարն իրավունք ունի կտակում նշել յուրաքանչյուր կտակային ժառանգի բաժինը կամ չնշել: Չնշելու դեպքում կտակային ժառանգները վեր են ածվում ընդհանուր սեփականության սուբյեկտների, իսկ նշելու դեպքում՝ ընդհանուր բաժնային սեփականության սուբյեկտների: Կտակարարն ըստ կտակի ազատության սկզբունքից էլնելով, իրավունք ունի իր ըստ օրենքի ժառանգներին զրկել ժառանգությունից, բացառությամբ պարտադիր բաժնի իրավունք ունեցող ժառանգներին, որը նախատեսված է ՀՀ քաղ. օր-ի 1194 հոդվածի 2-րդ մասով, որտեղ հստակ սահմանվում է. **«Ժառանգության բացման ժամանակ պարտադիր բաժնի իրավունք ունեն ժառանգատուի անչափահաս երեխաները, ինչպես նաև օրենքով սահմանված կարգով հաշմանդամ կամ անգործունակ ճանաչված կամ 60 տարեկան դարձած ժառանգատուի երեխաները, ամուսինը և ծնողները»:** Երբ կտակարարն իր կտակում չի նշում ըստ օրենքի իր ժառանգներին, այս դեպքում ժառանգական զանգվածը հավասարապես բաշխվում է ըստ օրենքի բոլոր ժառանգների միջև: Ավելացնենք նաև, որ ըստ օրենքի ժառանգները կարող են ժառանգություն ստանալ այն դեպքում, երբ կտակային ժառանգները մահացել են կամ կտակարարն իր ունեցվածքի մի մասն է կտակել, մյուս մասը՝ ոչ, կամ կտակը ճանաչվել է անվավեր: Կտակարարը կարող է նաև կտակով նշանակել ենթաժառանգ (սուբստիտուցիա) այն դեպքերի համար, երբ կտակային ժառանգը մահացել է նախքան ժառանգությունը բացելը կամ հրաժարվել է ժառանգությունից կամ դատարանի վճռով մեկուսացվել է ժառանգությունից: Նման պայմաններում ժառանգությունը ստանում է ենթաժառանգը, իսկ եթե երկուսն էլ մահացել են (ենթաժառանգը և ժառանգը), ապա նրանցից յուրաքանչյուրի համար առանձին ժառանգություն է բացվում: Կտակը վավերացնում է նոտարը կամ նոտարին հավասարեցվող մարմինները: Նոտարը կտակը վավերացնելու պահին այլ անձանց (կտակարարին, վկաներին) զգուշացնում է կտակի գաղտնիության մասին: Արգելվում է մինչև ժառանգության բացումը կտակի վերաբերյալ տեղեկություններ հրապարակելը կտակի բովանդակության, այն կազմելու, վերացնելու, փոփոխելու կամ լրացնելու մասին: Կտակի գաղտնիությունը բացահայտող անձի նկատմամբ նախատեսվում է պատասխանատվություն: Մասնավորապես, կտակարարն իրավունք ունի բացահայտող անձի դեմ հայց ներկայացնել դատարան և նրանից պահանջել ինչպես բարոյական, այնպես էլ նյութական վնասի հատուցում: Ընդ որում, վնասը հատուցվում է առանց բացահայտողի մեղքի առկայության: Կտակի գաղտնիությունը պաշտպանվում է ինչպես քաղաքացիական օրենսգրքով, այնպես էլ այլ օրենքներով նախատեսված դեպքերում⁵:

Ըստ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1202 հոդվածի՝ կտակարարն իրավունք ունի կտակ կազմելուց հետո ցանկացած ժամանակ վերացնել,

⁵ Տե՛ս ՀՀ քաղ. օր. 1902 հոդվ.:

փոփոխել կամ լրացնել կտակը: Նույն հոդվածի 4-րդ կետը սահմանում է, որ եթե վերացնող կամ փոփոխող կտակը դատարանի վճռով անվավեր է ճանաչվում, ապա վավեր է համարվում նախկինում կազմած կտակը: Կտակի բովանդակությունը փոփոխելու կամ վերացնելու մասին տեղեկությունները քաղաքացու անձնական գաղտնիքն են և նա պարտավոր չէ այդ մասին որևէ մեկի հայտնել: Ինչպես նշեցինք, քաղաքացիական օրենսդրությունը ժառանգման հարցի կապակցությամբ առաջությունը տալիս է կտակին, քան ըստ օրենքի ժառանգմանը: Եթե քաղաքացին կտակ չունի, ապա միայն այդ դեպքում ժառանգումը կատարվում է ըստ օրենքի: **Ըստ օրենքի** ժառանգները համաձայն ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1216-1219 հոդվածների, բաժանվում են չորս հերթի:

Առաջին հերթի ժառանգներն են ժառանգատուի երեխաները, ամուսինը և ծնողները: Ժառանգատուի թոռները ժառանգում են ներկայացման իրավունքով: **Երկրորդ հերթի ժառանգներն են** ժառանգատուի հարազատ, համահայր կամ համամայր եղբայրները և քույրերը: Ժառանգատուի եղբայրների և քույրերի երեխաները ժառանգում են ներկայացման իրավունքով: **Երրորդ հերթի ժառանգներն են** ժառանգատուի ինչպես հայրական, այնպես էլ մայրական կողմի պապը և տատը: **Չորրորդ հերթի ժառանգներն են** ժառանգատուի ծնողների եղբայրները և քույրերը (հորեղբայրները, հորաքույրները, քեռիները, մորաքույրները): Ժառանգատուի հորեղբայրների և հորաքույրների ու քեռիների և մորաքույրների երեխաները ժառանգում են ներկայացման իրավունքով:

Այն դեպքում, երբ պարզվում է, որ առաջին հերթի ժառանգ չկա, **հրաժարվել են կամ մեկուսացվել**, ժառանգության են հրավիրվում երկրորդ հերթի ժառանգները: Սույն իրավական նորմը վերաբերում է նաև երրորդ և չորրորդ հերթի ժառանգներին: Չորս հերթի ժառանգներից բացի կան նաև մի խումբ ժառանգներ, որոնք ժառանգատուից երեք տարի ոչ պակաս ապրուստի միջոց են ստացել: Այս ժառանգները ևս հրավիրվում են ժառանգության այն հերթի հետ, որը հրավիրվում է ժառանգության: Ըստ օրենքի ժառանգներին միաժամանակ ժառանգման հրավիրելու կարգի մեջ էական փոփոխություններ են մտցվել, համաձայն որի, ըստ օրենքի ժառանգները կարող էին ժառանգման հրավիրել որոշակի հերթականությամբ: ՀՀ 1998թ. քաղաքացիական օրենսգիրքը ժառանգատուի ողջ ժառանգական գույքը դիտում է որպես մի ամբողջական զանգված միևնույն իրավական կարգավիճակով: Միաժամանակ ՀՀ քաղ. օր. 1249 հոդվածում ասված է, որ վճարման ենթակա, սակայն քաղաքացու կյանքի օրոք տարբեր պատճառներով չստացված աշխատավարձի, կենսաթոշակների, նպաստների և կյանքին կամ առողջությանը պատճառված վնասի հատուցման գումարներն ստանալու իրավունքը պատկանում է մահացածի ընտանիքի անդամներին, ինչպես նաև նրա խնամքի ներքո գտնվող անաշխատունակ անձանց:

ԱՄՓՈՓԱԳԻՐ

Հաշվի առնելով ժառանգության իրավունքին վերաբերող հարցերի շուրջ առաջացած հասարակության մեծ հետաքրքրությունը, ինչպես նաև լայն քննարկումները, հոդվածում անդրադարձել է կատարվել ժառանգության իրավունքի հասկացությանը, արդի վիճակին և հիմնախնդիրներին: Հոդվածում տրվել է նաև հստակ և հակիրճ մեկնաբանում ժառանգության իրավունքի հասկացության, ժառանգության իրավունքի հիմքերի, կտակի տեսակների, ինչպես նաև ժառանգության իրավունքի վերաբերող այլ հարցերին:

Հիմնաբառեր. ժառանգություն, ժառանգ, ժառանգության իրավունք, ժառանգում ըստ կտակի, ժառանգում ըստ օրենքի, կտակ(սովորական, պայմանով, փակ):

ПРАВО НАСЛЕДСТВА СОВРЕМЕННОЕ СОСТОЯНИЕ И ПРОБЛЕМЫ

Ашкен Манвелян

Учитывая общественный интерес к вопросам, касающимся права наследования, а также широкие дискуссии, в статье рассмотрена концепция наследственного права, его нынешний статус и проблемы. В работе также дается четкое и сжатое толкование концепции наследственного права, его основ, типов завещаний и других вопросов, связанных с наследственным правом.

Ключевые слова: наследство, наследник, право наследования, наследование по завещанию, наследование по закону, завещание (обычное, условием, закрытое).

THE INHERITANCE RIGHT THE CURRENT SITUATION AND PROBLEMS

Ashkhen Manvelyan

Taking into account the great public interest in the issues related to the right to inheritance, as well as the wide-ranging discussions, the article referred to the concept of the right of inheritance, its current situation and issues. The article also provides a clear and concise interpretation of the concept of the inheritance law, the basis of inheritance law, types of testament, and other issues related to the inheritance law.

Key words. Inheritance, heir, right of inheritance, inheritance by law, inheritance by testament, testament (usual, conditional, closed)

Ներկայացվել է՝ 11.03.2021 թ.

Ընդունվել է՝ 29.04.2021 թ.

**ՄԱՆԿԱՎԱՐԺԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ ԱԳՐԵՄԻՎ ՎԱՐՔ
ԴՐՍԵՎՈՐՈՂ ԿՐՏՄԵՐ ԴՊՐՈՑԱԿԱՆՆԵՐԻ ՍՈՑԻԱԼԱԿԱՆԱՑՄԱՆ
ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ**

Մարիամ Ամիրխանյան

Հյուսիսային համալսարանի բանասիրության և մանկավարժության
ֆակուլտետի բակալավրիատի ուսանող

amirkhanyan-mariam@mail.ru

Մարդը սոցիալական էակ է, որը սոցիալականացվում է հասարակության հետ շփման, հաղորդակցման և գործունեության այլ ձևերով: Սոցիալականացումը անընդհատ գործընթաց է: Անձի ձևավորումն ու զարգացումը կախված է նաև պայմաններից և այն սոցիումից, որտեղ նա ապրում է: Անձի զարգացումն ինքնին բազմաբնույթ և հակասական գործընթաց է, քանի որ իր վրա կրում է հասարակական բոլոր տեսակի հարաբերությունների օբյեկտիվ և սուբյեկտիվ ազդեցությունների կնիքը: Աղապտացիան մարդու մուտքն է սոցիալական միջավայր և նրա հարմարվելը մշակութային, հոգեբանական, սոցիոլոգիական պայմաններին:

«Սոցիալականացում» հասկացության իմաստը բացահայտվում է այնպիսի գործընթացներով, ինչպիսիք են աղապտացիան, ինքնազարգացումը, ինքնիրացումը: Դրանց միասնությունն ապահովում է անձի օպտիմալ զարգացումը նրա ողջ կյանքում: Այդ գործընթացը (անձի օպտիմալ զարգացումը-հեղ.) անընդհատ է:

Կան գործոնների խմբեր, որոնք ազդում են անձի սոցիալականացման վրա: Դրանք ներառում են էթնոսը՝ այն բնակավայրը, որտեղ ապրում են մարդիկ (ռեգիոնը, գյուղը, քաղաքը), զանգվածային տեղեկատվության միջոցները (հեռուստատեսությունը, կինոն, լրագրերը, գրականությունը և այլն), նաև մարդկանց վրա անմիջականորեն ներգործող միջոցները՝ դպրոցը, հասակակիցները, հասարակությունը, պետությունը, կազմակերպությունները, որոնց միջոցով իրականացվում է սոցիալական դաստիարակությունը կամ ուղղակի սոցիալականացումը:

Սոցիումում՝ տվյալ դեպքում դպրոցում, սոցիալականացման խաթարման պատճառ կարող է դառնալ նաև երեխայի ագրեսիվ վարքը, բնավորության բարդ տեսակը, մյուս երեխաների վերաբերմունքը աղապտացիայի խնդիր ունեցող երեխայի նկատմամբ: Անձի սոցիալական խաթարումների (սոցիալաթոցենեզ) ակունքները նախ պետք է փնտրել մանկության շրջանում: Դրանք արտահայտվում են մանկական կամակորության, մանկական նեգատիվիզմի, մանկական ագրեսիայի տեսքով: Այս բացասական հատկանիշները փոխկապակցված են և աստիճանաբար մեկը վերաճում է մյուսի:

Կամակորությունը արտահայտվում է նրանով, որ երեխան ընդդիմանում, դիմադրում է մեծահասակների պահանջներին, չի լսում նրանց խորհուրդները և իր նպատակին է հասնում լացով, ոտքերի դոփյունով: Հաճախ կամակորությունները վերածվում են վարքի սովորական ձևերի, որի օգնությամբ երեխան կարողանում է հասնել իր պահանջմունքների բավարարմանը:

Մանկական նեգատիվիզմը (անտեսում) պաշտպանական արձագանք (հակազդում) է այն արտաքին՝ մեծահասակների ազդեցությունների նկատմամբ, որոնք հակասում են երեխայի պահանջմունքների բավարարմանը: Նեգատիվիզմն արտահայտվում է երեխայի գոեհկության, կոպտության, կամակորության, ինքնամփոփության, հոգեբանական օտարացման (հեռացման) մեջ:

Մանկական ագրեսիան ճնշող, բռնի գիտակցական կամ անգիտակցական գործողություններն են, որոնց նպատակը ուրիշին կամ ինքն իրեն վնասելն է: Դա անհաջողության, ցանկալիին չհասնելու նեգատիվ պաշտպանական ռեակցիա է, որը երեխային օգնում է «դիմանալու» իր համար դժվար, կոնֆլիկտային իրավիճակներում և «ամեն գնով» (անկարգ վարքով, խեղկատակությամբ և այլն) հաստատելու իրենը: Վարքի այս դրսևորումները բնորոշ են շատ երեխաների (մեկին՝ մի քիչ ավել, մյուսին՝ մի քիչ պակաս), որը բնավ էլ չի նշանակում, որ հետագայում անձի վարքը ոչ նորմալ զարգացում կունենա: Եթե դրանք ժամանակին չեն հաղթահարվում, վերաճում են բնավորության գծերի, անձնային որակների՝ դառնալով հոգեբանական նպաստավոր պայման անձի սոցիալական խաթարումների համար: Հաճախ վաղ տարիքի ագրեսիաներն ու անհարմարվողականությունը անտեսվում են ծնողների և մանկավարժների մեծամասնության կողմից: Դա, իհարկե, հետագայում հանգեցնում է լուրջ խնդիրների հատկապես հասունության տարիքում: Մարդն արդեն անկառավարելի վարքի ձևեր է դրսևորում, և այս տարիքում դժվար է հարմարվելն ու սոցիալականացվելը տվյալ հանրությունում:

Պետք է հաշվի առնել նաև այն փաստը, որ գոյություն ունի «ճգնաժամային տարիք» ասվածը, երբ, օրինակ, կրտսեր դպրոցական տարիքի երեխայի ինտելեկտուալ ֆունկցիաները կտրուկ զարգացում են ապրում, հասարակական փորձն է ավելանում, փոխվում են արժեքներն ու հետաքրքրությունները, և այս փոփոխություններից անձը դառնում է նյարդային, խաթարվում են միջանձնային հարաբերությունները: Երեխայի ագրեսիվ վարքը պայմանավորված կարող է լինել նաև անբարենպաստ արտաքին ներգործություններով, դաստիարակությամբ կամ սոցիալական այնպիսի իրավիճակներով, որոնք չեն նպաստում երեխայի լիարժեք զարգացմանը:

Եթե մանկավարժը փորձում է օգնել վարքի շեղումներ ունեցող աշակերտին կամ կառավարել նրա հոգեկան երևույթները, ապա, ինչպես Ուշինսկին էր ասում, նախապես պետք է ուսումնասիրի այդ ամենը և

հաշվի առնի այն պայմանները, որում պետք է տեղի ունենան շտկողական գործընթացները⁶: Խնդիրները հիմնականում գալիս են ընտանիքից, սոցիալական պայմաններից և ինքնիրացման անկարողության կույրությունից: Ավտորիտար դաստիարակության դեպքում, երբ ծնողը պահանջում է երեխայի անվերապահ ենթակայությունը՝ հնարավորություն չտալով նրան ինքնուրույն որոշումներ կայացնելու, երեխայի մոտ ձևավորվում է հարձակողական բնույթի բնավորություն, ագրեսիվ վարք կամ ընդհակառակը՝ երեխան մշտապես կարող է տագնապ զգալ պատասխանատու պահերին, որ ինքը ոչինչ անել չի կարող⁷: Երբ երեխան ապրում է երկար, անընդմեջ, պարբերաբար վերարտադրվող տրավմատիկ իրավիճակում, նա հետզհետե սպառում է իր ներուժը, պայքարելու մեխանիզմները: Նման իրավիճակների օրինակներ են ընտանեկան բռնությունը կամ խնամքի ծայրահեղ վատ պայմանները: Այս դեպքում իրադրությունը կարող է մեծ խոչընդոտ դառնալ երեխայի զարգացման համար և բացասաբար ազդել հետագա կյանքի վրա⁸:

Բացի ընտանիքից՝ երեխայի կյանքում մեծ դեր ունեն հասակակիցները, դպրոցը, խմբակները և այլ վայրերը, որտեղ երեխան կարող է հաճախել կամ հաճախել է մինչև տրավմատիկ իրողությունը: Աջակից ընկերը կամ մեծահասակը, օրինակ, մարզիչը, դպրոցի կամ որևէ խմբակի ուսուցիչը կարող են մեծ դեր ու ազդեցություն ունենալ երեխայի վարքի շտկման գործընթացի վրա:

Մեծահասակների և մանկավարժների դերը ագրեսիվ վարք ունեցող կրտսեր դպրոցական երեխաների հետ առնչվելիս չափազանց կարևոր է և ճակատագրական: Մասնավորապես, աջակցության համար անհրաժեշտ է՝

- տեղեկացված լինել երեխայի սոցիալ-հոգեբանական և մշակութային առանձնահատկություններից,
- ճանաչել և ընդունել երեխայի հետտրավմատիկ արձագանքները, լինել համբերատար,
- փորձել ստեղծել առավելագույն ապահով, կառուցվածքային, կայուն միջավայր,
- դառնալ երեխայի «ընկերը», խոսել նրա հետ, երբ երեխան դրա կարիքն է ունենում, կարողանալ պատասխանել հարցերին մատչելի լեզվով,

⁶ К. Д. Ушинский. Собр. соч., т.8,М-Л., Изд-во АПН РСФСР, 1950, стр 55.

⁷ Հասմիկ Հարությունյան, «Նախադպրոցականի և կրտսեր դպրոցականի տագնապի շտկումը», էջ 167:

⁸ Ի.Ռ.,Խանամիրյան,Դ.Է. Գևորգյան,Երեխան և հոգետրավման, Ձեռնարկ աջակցող մեծահասակների

համար,Երևան 2017, ԵՊՀ հրատարակչություն, էջ 1:

- ցույց տալ, որ երեխայի ունեցած դժվարությունները նորմալ են և սպասելի, կարևորը հաղթահարելի,

- խրախուսել երեխայի կողմից դրսևորվող ակտիվությունը և հաջողությունները,

- նպաստել կենցաղային նոր սովորությունների և ավանդույթների ձևավորմանը (գրույց քնելուց առաջ, կիրակնօրյա զբոսանք, ողջույնի ձևեր և այլն)⁹ :

Դպրոցական տարիքում (6-11 տարեկան) երեխաների ծնողների կորուստը ևս բացասաբար է անդրադառնում նրանց հոգեկան ներաշխարհի զարգացման վրա: Հիմնական հակազդումներն են լացը, ագրեսիան, մեկուսացումը, ճնշված հույզերը, առողջության վրա կենտրոնացումը, կրթական դժվարությունները և այլն: Նման դեպքերում շատ կարևոր են երեխայի հետ տարվող զրույցները: Երեխաները միշտ աջակցության, կիսվելու, խոսելու, ջերմ աջակից մեծահասակի կողքին լինելու կարիք ունեն անկախ տարիքից: Ուստի շատ կարևոր է՝

- միշտ հասանելի լինել երեխայի համար. կարողանալ անհրաժեշտության դեպքում լսել,

- խոսել, քաջալերել նրան, աջակցել զգացմունքների արտահայտմանը,

- սովորեցնել տարբերակել և անվանել զգացմունքները, կարողանալ արտահայտել տխրությունը, բարկությունը, հիասթափությունը և դրանց վերաբերվել որպես բնականոն երևույթների,

- ընդունել երեխայի հոգեբանական պաշտպանությունները, ռեգրեսիվ նշանները (եղունգներ կրծելը, մանկամտանալը, կամակորությունը, ագրեսիան), փորձել փափուկ ձևով վերադարձնել առօրյա գործունեությանը¹⁰:

ԱՄՓՈՓԱԳԻՐ

Աղապտացիան մարդու մուտքն է սոցիալական միջավայր և նրա կողմից մշակույթի, հոգեբանության և սոցիալական պայմանների յուրացումը: Անձի սոցիալական աղավաղման պատճառները պետք է փնտրել մանկության շրջանում: Դրանք դրսևորվում են մանկական քմահաճույքների և ագրեսիայի ձևով: Ագրեսիան պաշտպանական ռեակցիա է, որով երեխան փորձում է ստեղծել կոնֆլիկտային ռեակցիա ինքնահաստատման համար: Մանկավարժը պետք է գտնի ագրեսիայի դրսևորման պատճառները, մշտական զրույցներ վարի, բարձրաձայնի երեխայի հաջողությունների մասին, օգնի նրան գտնելու իր տեղը դասարանում:

Հիմնադրանք. աղապտացիա, սոցիալականացման գործոններ, ինքնադրսևորում, ագրեսիա, ռեգրեսիվ նշաններ, վարքի շեղում:

⁹ Бэрон Р., Ричардсон Д. Агрессия, СПб, Питер, 1997, 352 стр.

¹⁰ Ինչպե՞ս օգնել երեխաներին հաղթահարելու սթրեսային իրավիճակները, ծրագրային ձեռնարկ, Եր., 1999, 56 էջ:

ДЕЯТЕЛЬНОСТЬ ПЕДАГОГА В ПРОЦЕССЕ СОЦИАЛИЗАЦИИ МЛАДШИХ ШКОЛЬНИКОВ, ПРОЯВЛЯЮЩИХ АГРЕССИВНОЕ ПОВЕДЕНИЕ

Мариам Амирханян

Адаптация-доступ человека в социальную среду и его освоение культуре, психологическим и социальным условиям. Причины социальных искажений личности надо искать в период детства, которые проявляются в виде детских капризов и детской агрессии.

Агрессия-защитная реакция, с помощью которого ребёнок хочет создать конфликтную реакцию для самоутверждения. Педагог должен уметь находить причины проявления агрессии, вести постоянные беседы, поощрять успехи ребёнка, помочь, чтобы ребёнок нашёл своё место в классе.

Ключевые слова: адаптация, факторы социализации, самовыражение, агрессия, негативизм, регрессивные признаки, поведенческие отклонения.

THE ACTIVITIES OF THE PEDAGOGUE IN THE PROCESS OF SOCIALIZATION OF JUNIOR SCHOOLCHILDREN HAVING AGGRESSIVE BEHAVIOR

Mariam Amirkhanyan

Thus, adaptation is a person's access to the social environment and his assimilation to culture, psychological and social conditions. The reasons for social distortions of the personality must be sought during childhood, which are manifested in the form of whims and aggression. Aggression is a defensive reaction, with the help of which the child wants to create a conflict reaction for self-affirmation. The pedagogue should be able to find the reasons for the manifestation of aggression, conduct constant conversations, encourage the success, help the child to find his place in the classroom.

Key words: adaptation, society, the factors of socialization, self-expression, aggression, negativism, regressive signs, behavioral deviations.

Ներկայացվել է՝ 14.03.2021 թ.

Հնդուկվել է՝ 04.05.2021 թ.

**ՄԵԾ ՀՈՒՄԱՆԻՍՏԸ ԵՎ ՊԵՏԱԿԱՆ-ՔԱՂԱՔԱԿԱՆ ԱԿԱՆԱՎՈՐ
ԳՈՐԾԻՉԸ**

Հայ հասարակայնությունը, գիտական հանրությունն ու բարձրագույն դպրոցը ծանր ու անդառնալի կորուստ կրեցին: 2021թ. ապրիլի 27-ին, COVID-19-ի հետևանքով կյանքից անժամանակ հեռացավ պետական-քաղաքական ականավոր գործիչ, Հյուսիսային համալսարանի գիտական կենտրոնի ղեկավար, Հումանիզմի պրոբլեմների ակադեմիայի նախագահ, «Հյուսիսափայլ» գիտական պարբերականի խմբագրական խորհրդի անդամ, ՀՀ ԳԱԱ Արվեստի ինստիտուտի տնօրենի խորհրդական, փիլիսոփայական գիտությունների դոկտոր **Գրիգոր Եգորի Ասատրյանը**:

Գ.Ասատրյանը ծնվել է 1935 թ. օգոստոսի 31-ին, Էջմիածնի շրջանի Խզնավուզ (ներկայումս՝ Արագած) գյուղում: 1948 թ. ավարտել է Արագած գյուղի յոթնամյա դպրոցը, 1951 թ.՝ հարևան Աղավնատուն գյուղի միջնակարգ դպրոցը: Այնուհետև նա ուսումնառությունը շարունակել է Երևանի պետական համալսարանում, որի տնտեսագիտական ֆակուլտետը 1958-ին ավարտել է գերազանցության դիպլոմով: Նույն թվականին ընդունվել և 1962-ին ավարտել է (արտադրությունից չկտրված) Հայաստանի գիտությունների ակադեմիայի փիլիսոփայության և իրավունքի ինստիտուտի ասպիրանտուրան:

1969-ին Երևանի պետական համալսարանում գործող փիլիսոփայական գիտությունների գծով գիտական աստիճաններ շնորհող միացյալ խորհրդում նա փայլուն պաշտպանել է «Հումանիզմի մարքսիստական ըմբռնումը» թեմայով թեկնածուական դիսերտացիան և ստացել փիլիսոփայական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան, իսկ 2015-ին, Խ.Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանում ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս Գեորգ Բրուտյանի ղեկավարությամբ գործող ՀՀ ԲՈՀ-ի փիլիսոփայության և հոգեբանության 064 մասնագիտական խորհրդում պաշտպանել դոկտորական ատենախոսություն՝ «Հումանիզմը արդի դարաշրջանի հիմնախնդիրների համատեքստում» թեմայով և ստացել փիլիսոփայական գիտությունների դոկտորի գիտական աստիճան: 2015-ից Գ.Ասատրյանն այդ մասնագիտական խորհրդի անդամ էր:

Համալսարանն ավարտելուն պես՝ 1958թ. հունիսին, Գ.Ասատրյանը պետական գործուղումով աշխատանքի է անցել Սովետական Հայաստանի Մինիստրների սովետի սովետական վերահսկողության հանձնաժողովում: Տարիներ շարունակ նա եղել է այդ հիմնարկության կուսակցական կազմակերպության բյուրոյի քարտուղարը, ընտրվել ՀԿԿ

Երևան քաղաքի Սպանդարյանի շրջկոմի անդամ, Սպանդարյանի շրջանային խորհրդի դեպուտատ:

1970-ին Գ.Ասատրյանն առաջ է քաշվել և ընտրվել ՀԿԿ Սպանդարյանի շրջանային կոմիտեի երկրորդ քարտուղար, որտեղ աշխատել է մինչև 1977 թ.: 1977-1978 թթ. նա զբաղեցրել է ՀԿԿ Երևանի քաղաքային կոմիտեի պրոպագանդայի բաժնի վարիչի պաշտոնը:

1978-ին Գ.Ասատրյանն առաջ է քաշվել ղեկավար աշխատանքի. ընտրվել է ՀԿԿ Երևան քաղաքի Սպանդարյանի շրջանային կոմիտեի առաջին քարտուղար, որտեղ աշխատել է մինչև 1983 թ.: Այդ ընթացքում՝ 1980-1981 թթ., նա ԽՍՀՄ Կենտկոմի որոշմամբ, պահպանելով Սպանդարյանի շրջկոմի առաջին քարտուղարի պաշտոնը, աշխատանքի է գործուղվել Աֆղանստանի Դեմոկրատական Հանրապետություն, որտեղ աշխատել է որպես Խորհրդային Միության կոմկուսի Կենտկոմի խորհրդական Աֆղանստանի ժողովրդադեմոկրատական կուսակցության Կենտկոմում:

1983-ին Գ.Ասատրյանն աշխատանքի է տեղափոխվել ՀԿԿ Կենտկոմ և նշանակվել Կենտկոմի պրոպագանդայի բաժնի վարիչ: 1989 թ. հունվարին Հայաստանի կոմկուսի հումանիտար պրոֆիլի բոլոր 4 բաժինների միավորման կապակցությամբ Գ.Ասատրյանը նշանակվել է Կենտկոմի նորաստեղծ միացյալ ստորաբաժանման՝ գաղափարախոսական բաժնի վարիչ:

1989 թ. մայիսին Գ.Ասատրյանն ընտրվել է ՀԿԿ Երևանի քաղաքային կոմիտեի առաջին քարտուղար՝ աշխատելով մինչև 1990 թ. օգոստոսը:

Վերջին շուրջ 25 տարիներին Գ.Ասատրյանն աշխատել է ՀՀ ոչ պետական բարձրագույն մասնագիտական կրթության համակարգում և անմնացորդ նվիրվել բարձրագույն կրթության կազմակերպմանը, գիտամանկավարժական գործունեությանը, աճող սերնդի կրթությանն ու դաստիարակությանը: 1996-ից նա աշխատել է Հայկական բաց համալսարանում՝ սկզբում որպես մենեջմենթի ֆակուլտետի ղեկան, ապա՝ պրոռեկտոր, առաջին պրոռեկտոր՝ միաժամանակ որպես փիլիսոփայության ամբիոնի վարիչ և դասախոս:

2001-ին Գ.Ասատրյանը տեղափոխվել է Երևանի Հյուսիսային համալսարան, որտեղ աշխատել է որպես պրոռեկտոր, ապա՝ համալսարանի նորաստեղծ գիտական հետազոտությունների, նորարարական ծրագրերի և հետբուհական մասնագիտական կրթության կենտրոնի ղեկավար:

Գ.Ասատրյանը 2002-ից Հումանիզմի պրոբլեմների ակադեմիայի նախագահն էր: Հումանիզմի հիմնահարցի տարբեր տեսանկյունների վերաբերյալ նրա մի քանի տասնյակ հոդվածներն ու զեկուցումները տպագրվել են Հայաստանի, Ռուսաստանի, Ավստրիայի և Գերմանիայի

հեղինակավոր գիտական պարբերականներում ու ժողովածուներում: Գ.Ասատրյանը մենագրությունների հեղինակ է: ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատարակչության կողմից 2014 թ. լույս ընծայված նրա «Հումանիզմը նոր հազարամյակի հիմնախնդիրների համատեքստում» հիմնարար աշխատությունը արժարժվող հարցերի արդիականությամբ, մասշտաբայնությամբ ու վերլուծությունների խորությամբ աննախադեպ լինելով հայ իրականության մեջ, կարևոր ներդրում է արդի հումանիզմի ամբողջական հետազոտության ասպարեզում:

Գ.Ասատրյանն աֆղանական պատերազմի մասնակից է (1980-1981 թթ.), Աֆղանստանի Դեմոկրատական Հանրապետության պրեզիդենտի հրամանագրով պարգևատրվել է «Երախտապարտ աֆղանական ժողովրդից» շքանշանով, Աֆղանստանի կառավարական այլ պարգևներով: 1988 թ. դեկտեմբերին նա Խորհրդային Միության Գերագույն խորհրդի նախագահության հրամանագրով պարգևատրվել է «Աֆղանստանի Հանրապետությունում ինտերնացիոնալ պարտքը կատարելիս ցուցաբերած արիության և ռազմական սխրագործության համար» պատվոգրով:

Գ.Ասատրյանը պարգևատրվել է «Պատվո նշան» երկու շքանշաններով, Խորհրդային Միության մի շարք մեդալներով, Խորհրդային Հայաստանի Գերագույն խորհրդի նախագահության պատվոգրերով, կառավարական այլ պարգևներով:

2015թ. մայիսին, ֆաշիզմի դեմ խորհրդային ժողովրդի տարած հաղթանակի հոբելյանի կապակցությամբ նա պարգևատրվել է Ռուսաստանի Դաշնության կոմկուսի Կենտկոմի «Մեծ հաղթանակի 70 տարին» հուշամեդալով:

2015թ. սեպտեմբերին, ՀՀ Անկախության տոնի առթիվ, երկարամյա պետական-հասարակական գործունեության համար Գ.Ասատրյանը պարգևատրվել է «Հայրենիքին մատուցած ծառայությունների համար» 2-րդ աստիճանի մեդալով, իսկ հոկտեմբերի 11-ին «Էրեբունի-Երևանի» 2797-րդ տարեդարձի և ծննդյան 80-ամյակի կապակցությամբ արժանացել Երևանի քաղաքապետի Ոսկե մեդալին:

Գ.Ասատրյանը մի շարք անգամներ ընտրվել է Երևանի քաղաքային խորհրդի, Խորհրդային Հայաստանի 10-րդ և 11-րդ գումարումների Գերագույն խորհրդի դեպուտատ, 1989-1990 թթ. եղել է Գերագույն խորհրդի մանդատային հանձնաժողովի նախագահը:

Իր հայրենանվեր աշխատանքով ու ազգանպաստ գործերով Գ.Ասատրյանը ծանրակշիռ ներդրում ունեցավ ժամանակակից Հայաստանի պատմության մեջ:

Մեծ հումանիստի ու գիտնականի, պետական ազնիվ ու հայրենասեր գործչի, տաղանդավոր կազմակերպչի և պայծառ մարդու հիշատակը միշտ վառ կմնա նրան ճանաչողների սրտերում:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Բանասիրություն և լրագրություն

<i>Նունե Մկրտչյան</i>	Ավետիք Բսահակյանը ազատագրական պայքարի գովերգու.....	5
<i>Վարդուհի Դավթյան</i>	Վահան Թեքեյանի հոդվածները «ԱՐԵՒ»-ի 1915 թվի համարներում.....	14
<i>Гаяне Оганнисян</i>	Мотивация выбора имен персонажей в художественном тексте (на материале романов Д. Демирчяна «Вардананк» и Х. Абовяна «Раны Армении»).....	26
<i>Серго Ерицян Мери Тадевосян</i>	Структура производства и распространения информационных потоков.....	35

Կրթություն

<i>Lusine Fljyan</i>	On the impact of COVID-19 on higher education in Armenia.....	52
<i>Эмиль Бурангулов</i>	Особенности Российской государственной политики в сфере высшего образования в современных условиях...	68

Փիլիսոփայություն

<i>Գրիգոր Ասատրյան</i>	Մարդու հիմնախնդրի Հեգելյան ըմբռնումը.....	78
<i>Վալերի Միրզոյան</i>	Ավետիք Բսահակյանի կենսափիլիսոփայությունը.....	92

Քաղաքագիտություն

<i>Թաթուլ Մանասերյան</i>	Ազգային բրենդի գաղափարը և մշակութային դիվանագիտությունը.....	107
<i>Эдуард Гареев Алексей Махов Нелли Мутугулина</i>	Роль университетских сообществ в обеспечении прав и свобод человека в демократизации общественного мироустройства в условиях глобализации.....	116
<i>Павел Минаков</i>	Политико-правовые аспекты взаимодействия гражданина и публичной власти.....	128

Երիտասարդ հետազոտողի ամբիոն

<i>Աշխեն Մանվելյան</i>	Ժառանգության իրավունք. արդի իրավիճակը և հիմնախնդիրները.....	135
<i>Մարիամ Ամիրխանյան</i>	Մանկավարժի գործունեությունը ագրեսիվ վարք դրսևորող կրտսեր դպրոցականների սոցիալականացման գործընթացում.....	141
	<i>Խոսք հիշատակի.....</i>	146

Ի ԳԻՏՈՒԹՅՈՒՆ «ՀՅՈՒՍԻՍԱՓԱՅԼ»-Ի ՀԵՂԻՆԱԿՆԵՐԻ

«Հյուսիսսփայլում» տպագրության ներկայացվող հոդվածների տեխնիկական պահանջները.

- Տպագրության ներկայացվող հոդվածները պետք է գրված լինեն Word տեքստային խմբագրի օգնությամբ:
- Հոդվածները ներկայացնել հայերեն, ռուսերեն, անգլերեն, ֆրանսերեն կամ գերմաներեն լեզուներով:
- Հոդվածի շարվածքը լինի Unicode-ով (հայերեն հոդվածների դեպքում՝ նաև Sylfaen տառատեսակով), տառաչափը՝ 11, միջտողային հեռավորությունը՝ 1.5, թղթի ֆորմատը՝ A 4:
- Հոդվածի սկզբում գրել վերնագիրը՝ մեծատառերով, հաջորդ տողում՝ հեղինակի (հեղինակների) անուն, ազգանուն, հայրանունը՝ մեծատառերով:
- Հղումները դնել տողատակում՝ համարների աճման կարգով, նշել աղբյուրը՝ հեղինակին, վերնագիրը, հրատարակության վայրը, տարեթիվը (պարբերական հրատարակության դեպքում՝ նաև համարը) և էջը (էջերը):
- Հոդվածի վերջում գրել հայերեն, ռուսերեն և անգլերեն ամփոփագրերը՝ 50-60 բառի սահմաններում, հիմնաբառերը:
- Հոդվածին անհրաժեշտ է կցել նաև (առանձին էջով կամ առանձին ֆայլով) հոդվածի վերնագիրը և հեղինակի (հեղինակների) անուն, ազգանուն, հայրանունը՝ հայերեն, ռուսերեն և անգլերեն լեզուներով, ինչպես նաև հեղինակի (հեղինակների) տվյալները՝ կոչումը, պաշտոնը, աշխատանքի վայրը, հեռախոսի համարը (համարները), էլեկտրոնային փոստի հասցե (e-mail):
- Հոդվածները ներկայացնել էլեկտրոնային տարբերակով.
 - Երևանի Հյուսիսային համալսարան, խմբագրական խորհուրդ,
 - ուղարկել hyusisayin@gmail.com էլեկտրոնային փոստին:

ՀՅՈՒՄԻՍԱՓԱՅԼ

ԳԻՏԱԿԱՆ ՀԱՆՐԱԽ
2021 1 (7)

ЮСИСАПАЙЛ
НАУЧНЫЙ ЖУРНАЛ
2021 1 (7)

HYUSISAPAYL
SCIENTIFIC JOURNAL
2021 1 (7)

Համարի պատասխանատու՝ Ա. Ճուղուրյան

Համակարգչային ձևավորում՝ Ի. Մարուխյան

*Գիտական հանդեսի էլեկտրոնային տարբերակը տեղադրված է
Հյուսիսային համալսարանի [www//northern.am](http://www.northern.am) պաշտոնական
կայքում:*

Չափեր՝ 60x84 ¹/₁₆
Տպագրություն օֆսեթ՝ 9,5 մամ.
Տպաքանակ՝ 120
Տպագրված է՝ Մեկնարկ ՄՊԸ-ում
Երևան-25, Արմյան 41